

Σ 64 pump 44h

10/28
891.99
10-89

891.99 ✓

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

6 NOV 2011

Բ-89

ԿՄ.

ՀԵՔՅԱԹՆԵՐ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նկարներ՝ Ա. ՄԱՄԱԶԱՆՅԱՆԻ

ՊԵՏՏՐԱՏ

ՀԱՅԵՍ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ՅԵՐԵՎԱՆ

1988



3327

39

ՎՈՍԿՈՒ ԿԱՐԱՍԵ

(Արեվելյան)

Յես մեր ծերերիցն եմ լսել, մեր ծերերը իրենց պապերից, նրանց պապերն ել իրենց մեծերից, թե մի ժամանակ մի աղքատ հողագործ է լինում, ունենում է մի որավար հող ու մի լուծ յեղը:

Չմեռը ես աղքատ հողագործի յեզները սատկում են: Գարունը, վար ու ցանքի ժամանակը վոր գալիս է, յեղը չի ունենում թե վարի, հողը վարձով տալիս է իր հարևանին:

Ես հարևանը վարելու ժամանակ խօփը մի տեղ դեմ է ընկնում, դուրս է գալի մի կարաս, մեջը լիքը վոսկի: Յեզները լծած թողնում է, վաղում է գյուղը հողատիրոջ մոտ:

— Հե՛յ, աչքդ լուս,— ասում է,— քու հողումը մի կարաս վոսկի դուրս յեկավ, արի տար:

— Չե՛, ախպե՛ր, եղ իմը չի,— պատասխանում է հողատերը:— Հողի վարձը դու տվել ես, դու վարում ես, ես հողումն ինչ ել դուրս գա, քունն է. վոսկի յե դուրս յեկել, թող վոսկի լինի, ելի քունն է:

Սկսում են վիճել. սա ասում է՝ քունն է, նա, թե՛ չե, քունը: Վեճը տաքանում է, իրար ծեծում են: Գրում են թաղավորի մոտ գանդատ:

Թաղավորը մի կարաս վոսկու անունը լուծ է թե չե— աչքերը չորս է բաց անում: Ասում է.

— Վոչ քունն է, վոչ դրանը, իմ հողում կարասով վոսկի յե դուրս յեկել— իմն է:



Իր մարդկանցով գնում է, վոր հանի բերի: Գնում է կարասի բերանը բաց տնել և տալի, տեսնում է՝ ի՞նչ վոսկի— կարասը լիքը ոճ...

Ջարհուրած ու կատաղած յետ և գալի: Հրամայում է պատժեն անգետ ռանչպարներին, վոր համարձակվել են իրեն խաբել:

— Չե՛, Թագավորն ապրած կենա, — գոռում են խեղճերը, — մեզ ինչո՞ւ յես սպանում. լավ չես տեսել, ոճ չկա ենտեղ, վոսկի յե, վոսկի...

Թագավորը նոր մարդիկ և ուղարկում, վոր գնան ստուգեն: Մարդիկը գնում են, յետ գալի, Թե՛ ճշմարիտ, վոսկի յե:

— Վա՛հ, — զարմանում է Թագավորը: Ասում է. — յերևի լավ չտեսա, կամ տեսածս են կարասը չեր: Վեր և կենում մին ել գնում:

Կարասը բաց է անում, — դարձյալ մեջը լիքը ոճ: Ես ի՞նչ հրաշք է, ի՞նչ միտք ունի, — չեն հասկանում:

Թագավորը հրամայում է, հավաքում է իր յերկրի իմաստուններին:

— Բացատրեցեք, — ասում է, — ո՛վ իմաստուններ, ի՞նչ հրաշք է սա: Ես հողագործները իրենց հողում կարասով վոսկի յեն գտել: Յես եմ գնում — կարասը լիքն ոճ և դառնում, սրանք են գնում — վոսկի: Ես ի՞նչ կնր չանակի:

— Դրա բացատրությունն ես է, Թագավոր, յեթե չես բարկանալ, — ասում են իմաստունները: — Կարասով վոսկին աղքատ հողագործներին պարգև է ղրկած իրենց ազնվության ու արդար աշխատանքի համար: Յերբ վոր նրանք են գնում, իրենց արդար վարձին են գնում ու միշտ ել վոսկի են գտնում, իսկ յերբ վոր դու յես գնում, գնում ես ուրիշի բախտը հափշտակել, նրա համար ել վոսկու տեղ ոճ ես գտնում:

Թագավորը ցնցվում է. խոսք չի գտնում պատասխանելու:

— Լա՛վ, — ասում է, — ղե հիմի են վարդեցեք,

Թե եղ յերկուսից վո՞րին է պատկանում գտած վոսկին:

— Իհարկե հողատիրոջը, — ձայն է տալի վարող գյուղացին:

— Ձե՛ք, վարողինն է, — մեջ է մտնում հողատերը: Ու նորից սկսում են կռվել:

— Լա՛վ, լա՛վ, կացե՛ք, — կանգնեցնում են իմաստունները, — ի՞նչ ունեք դուք — տղա կամ աղջիկ:

Դուրս է գալի, վոր մինը մի տղա ունի, մյուսը մի աղջիկ: Իմաստունները վճռում են, վոր սրանք գնան իրենց աղջիկն ու տղեն իրար հետ պսակեն, են գտած վոսկին ել տան նրանց: Ետեղ համաձայնում են բարի մարդիկը, ուրախանում են, ու կռիվը վերջանում է, ըսկսում է հարսանիքը: Ոխտն որ, ոխտը գիշեր հարսանիք են անում, կարասով վոսկին ել, վոր պարզե եր դրկած իրենց աղնվության ու արդար աշխատանքի համար, տալիս են իրենց զավակներին:

Բարին ետեղ, չարը են ագտհ թագավորի մոտ:

(1908)

ՔԵՑ ԱՆՈՂԻՆ ՔԵՑ ԶԻ ՊԱԿՍԻԼ

(Արեվելյան)

Ժամանակով Բաղդադ քաղաքում նստում եր Հաբուն Ալ Ռաշիդ Թագավորը: Հարուն Ալ Ռաշիդ Թագավորը սովորություն ուներ՝ շորերը փոխած ման եր գալիս իմանալու, թե ինչ է կատարվում իր մայրաքաղաքում: Մի գիշեր ել եսպես, դերվիշի շոր մտած, անցնելիս է լինում մի խուլ փողոցով: Մի աղքատ տնակից յերգի ու նվագածության ձայներ է լսում: Կանգ է առնում, միտք է անում միտք, հետաքրքրվում է ու ներս է մտնում: Ներս է մտնում տեսնում՝ դատարկ ու մերկ մի տնակ, կրակի դեմը փռած կարպետի վրա նստոտած տան տերն ու յերաժիշտները: Աղքատ ընթրիքի շուրջը բոլորած նվագում են, յերգում ու զվարճանում:

— Պաղաղություն ձեզ, ո՛վ ուրախ մարդիկ, — փողջունում է դերվիշն ու խոնարհություն է անում տան տիրոջը:

— Բարով յեկար, դերվիշ բարա, համեցեք, միասին ուտենք աստծու տված մի կտոր հաց ու միասին ուրախանանք, — խնդրում է տան տերը: Դերվիշին ել նստեցնում են իրենց հետ ու շարունակում են քեֆը:

Գիշերվա մի ժամին տան տերը յերաժիշտներին վճարում է իրենց հասանելիքն ու ճամփու դնում: Յերր յերաժիշտները հեռանում են՝ դերվիշը տան տիրոջը հարցնում է.

— Անունդ ի՞նչ է, բարեկամ:

— Հասան:

— Ամոթ չլինի հարցնելը, Հասան ախպեր, ի՞նչ արհեստի տեր ես դու, ի՞նչքան փող ես աշխատում, վոր եսպես քեֆով ես անց կացնում քո ժամանակը:

— Քեֆը շատ փողով չի լինում, դերվիշ բարա,— պատասխանում է տան տերը:— Ամենաչնչին ապրուստըն ել կտրող է մարդ ուրախ վայելել: Յես մի փինաչի յեմ, չուտտեր եմ կարկատում, որը մի չնչին բան եմ վաստակում: Յերեկոները բերում եմ մի մասը ապրուստի յեմ տալիս, մյուս մասն ել ես յերաժիշտներին, վոր տեսար: Նստում ենք ուրախանում: Թե քեզ նման մի ազնիվ հյուր ել աստված հասցնում է, ալիւլի լավ:

— Անպակաս լինի քո ուրախությունը, ո՛վ Հասան, բայց յեթե հանկարծ աշխատանքիդ եղ բարակ աղբյուրն ել կտրի՝ ի՞նչ պիտի անես:

— Ինչո՞ւ յե կտրում, դերվիշ բարա:

— Որինակ, թագավոր է ու թագավորի քմահաճույք. հանկարծ հրաման արավ, վոր ել փինաչությունը չպիտի լինի:

— Ե՛հ, թագավորի դարդը կտրե՞լ ե՛ ընկնի փինաչիների յետեից... կամ ի՞նչ են արել նրան փինաչիները: Յերբ եղպես բան կպատահի, են ժամանակ կմտածենք. այժմ քնենք, դերվիշ բարա: Աստված վողորմած է, քեֆ անողին քեֆ չի պակսիլ: Աշխարհքի բան ե՛ ինչպես բռնես՝ ենպես ել կերթա:

— Լա՛վ, աստված տա, վոր եղպես լինի,— բարեմաղթում է դերվիշն, ու քնում են:

Առավոտը վաղ դերվիշը գնում է: Նրա գնալուց հետո մուսնետիկները լցվում են Բաղդադի փողոցներն ու հրապարակները, գոռալով հայտարարում, թե թագավորի հրամանն է, փինաչիների խանութները փակ պիտի մնան. ես որվանից ել վոչ վոք իրավունք չունի եղ արհեստով պարապելու: Զանցառուների գլուխները կլթուչեն:

Խեղճ Հասանի ձեռքից ել բիզը խլում են, վզակոթին տալով դուրս անում իր նեղյիկ խանութից ու գուռը փակում:

Մյուս գիշերը, դարձյալ դերվիշի շոր մտած, Հասան Ալ Ռաշիդ թագավորը գնում է քաղաքը շրջելու: Դարձյալ անցնում է են փողոցով, ուր ապրում եր ուրախ Հասանը: Դարձյալ յերգի ու յերաժիշտության ձայներ է լսում նրա տանից: Ներս է մտնում:

— Ո՛ր, բարով, բարով, դերվիշ բարա. համեցեք, նստիր քո տեղը:

Նստում են, ուտում, խմում, ածում, յերգում, տրախանում մինչև կես գիշեր:

Կես գիշերին յերաժիշտներն իրենց վարձն առնում են հեռանում: Մնում են տանտերն ու հյուրը:

— Գիտե՞ս ինչ պատահեց, դերվիշ բարա:

— Ի՞նչ պատահեց:

— Հենց են, ինչ վոր դու գուշակեցիր յերեկ իրիկուն: Նսոր թագավորը հրաման հանեց— մեր արհեստն արգելեց...

— Ի՞նչ ես ասում,— զարմանում է հյուրը:— Հասա՛ պա վո՞րտեղից փող դտար, վոր ես գիշեր ել քեֆ սարքեցիր:

— Մի կավե կուժ եմ դտել, հիմի ել ջուր եմ ծախում: Որական ինչ աշխատում եմ՝ մի մասը տալիս եմ ապրուստի, մյուսը յերաժիշտներին ու դարձյալ քեֆ եմ անում:

— Իսկ յեթե թագավորը ջուր ծախելն ել արգելի, են ժամանակ ի՞նչ ես անելու:

— Զուր ծախելով թագավորին ինչ վնաս ենք տալի, վոր արգելի: Յեվ ինչո՞ւ ես որվանից դարդ անեմ դրա համար: Յերբ վոր կարգելի, են ժամանակ կմտածեմ: Մի՛ վախենար, բարեկամ, յերբեք չի պակսիլ մի կտոր հաց ու մի անկյուն, վոր յես ենտեղ ուրախանամ:

— Անպակաս լինի ուրախությունը քո ոջախից, ո՛վ Հասան,— բարեմաղթում է դերվիշն ու հեռանում:

Առավոտը վաղ ամբողջ Բաղդադը թնդում է մուսնետիկների ձենից, թե Հարուն Ալ Ռաշիդ թագավորն եսպես է հրամայում. ջուրը աստժուռն է եւ ես որվանից

Վոչ վոք իրավունք չունի փողով ծախելու: Պատուելբո-
յոր ջրկիրներն տեղերն ու ջարդել նրանց կթերը:

Աղքատ Հասանի կուժն եւ ջարդում են ջրի ճամփին
ու դատարկ յետ դրկում:

Մյուս գիշեր թագավորը կրկին դերվիշի շոր և
հագնում ու գնում քաղաքը շրջելու: Կրկին մոտե-
նում և ուրախ Հասանի տանը: Դարձյալ ուրախու-
թյան և յերգի ձայներ: Ներս և մտնում:

— Ա՛, դերվիշ բարա՛, համեցե՛ք, համեցե՛ք, նըս-
տիր քո տեղը. քեֆ անենք. ցերեկը յերկարացնենք,
գիշերը կարճացնենք: Ուրախանանք, դերվիշ բարա,
տվելի լավ և ուրախանալ, քան տրտմիլ:

— Իհարկե, ուրախութիւնն ավելի լավ է: Ամենքս
եւ մեռնելու յենք, ով կարող է, թող ուրախանա, —
բացականչում և դերվիշն ու նստում Հասանի կողքին:

Գիշերվա մի ժամին յերգիչներն իրենց վարձն առ-
նում են ու հեռանում: Մնում են դերվիշն ու տանտերը:

— Հասան ախպեր, եսոր ի՛նչ լսեցի. ասում են
թագավորը արգելել և ջուր ծախելը, ճշմարի՞տ է ար-
դյոք:

— Ի՛նչպես չե, ի՛նչպես չե, ամենքիս ջրի աման-
ներն եւ վոչնչացրին: Ա՛խպեր, դու կատարյալ մարդա-
րե յես յեղել. ինչ ասում ես՝ մյուս որը կատարվում է:

— Հապա ի՛նչպես է, վոր դու դարձյալ քեֆ ես ա-
նում: Վո՞րտեղից ես գտել ես փողը:

— Յերանի թե մարդու պակասը փողը լինի: Փողի
գտնելը հեշտ է, դերվիշ բարա: Գնացի մի գործատի-
րով մշակ մտա. որական մի բան է տալիս, բերում եմ
մի մասը ապրուստիս եմ անում, մյուսը յերաժիշտնե-
րին եմ տալիս ու շարունակում եմ իմ քեֆը: Բանը
մարդու սիրտն է, դերվիշ բարա:

— Յես իմ հոգին, արժե, վոր եղ սրտով թագա-
վորի պալատականը լինեյիր դու, — բացականչեց դեր-
վիշը:

— Վա՛հ, դերվիշ, քո ասածները կատարվում են
ճշտությամբ, հիմի վոր ես խոսքդ եւ կատարվի՞:

— Ինչո՞ւ չի կատարվի, աշխարհքում անկարելի
բան չկա. — պատասխանեց դերվիշն ու բաժանվեցին:

Առավոտը վաղ տերության պաշտոնյաները կըտ-
րեցին Հասանի աղքատ տնակի դուռը:

— Նստե՛ղ և կենում քեֆ սիրող Հասանը:

— Յես եմ, — պատասխանեց զարմացած Հասանը:

— Թագավորի հրամանով հետևիր մեզ:

Ուղիղ պալատը տարան Հասանին: Հայտնեցին, վոր
թագավորն իրեն սլալատականի պաշտոն է տվել: Պա-
լատականի զգեստ հագցրին, մի թուր եւ կապեցին մեջ-
քը ու կանգնեցրին պալատի մուտքերից մեկի առջև:
Ամբողջ որը են մուտքի առջև պարապ կանգնեց Հա-
սանը: Իրիկունը վոր մթնեց, դատարկ ճամբու դրին
տուն, թե՛ գնա, առավոտը յետ կգաս քո տեղը կանգ-
նելու:

Գիշերը դարձյալ դերվիշի շոր մտավ Հարուն Ալ
Ռաշիդ թագավորն ու գնաց քաղաքը շրջելու:

Գնաց մոտեցավ Հասանի տանը: Ականջ դրեց:
Ջարմանքով լսեց, վոր դարձյալ հնչում են յերգն ու
յերաժուտյունը: Հասանը քեֆ է անում դարձյալ:
Ներս մտավ:

— Դերվի՛շ, դերվի՛շ, քո տունը չքանդվի, արի
յե՛. յերեկվա խոսքդ եւ կատարվեց, թագավորն ինձ
պալատում պաշտոն է տվել:

— Ի՞նչ ես ասում:

— Աստված վկա:

— Յեվ յերևի շատ փող է տվել...

— Չե՛, ինչ փող. մի գրոշ չավին: Դատարկ տուն
դրկեցին:

— Հապա վո՞րտեղից ես փող գտել, վոր դարձյալ
քեֆ ես անում:

— Նստի՛ր, առեմ վորտեղից: Մի թուր են կապե-
մեջքս: Իրիկունը տուն դալիս մտածեցի, թե՛ հո յես
մարդ չեմ սպանելու: Տարա պողպատի շեղբը*) ծախե-

*) Գ Ե Ղ Բ Ե — թրի մեջ:

ցի, պողպատի փոխարեն փայտե շինել տվի, մեջը դրի,
յեկա տուն: Յեկա պողպատի փողով քեֆ տարքեցի:
Լամ եմ արել, չե՞, դերվիշ. ամելի լավ ե ուրախու-
թյուն ունենալ, քան մարդ սպանելու սուր:

— Հա՛, հա՛, հա՛, — ծիծաղեց դերվիշը: — Լավ
անելը — լավ ես արել, Հասան, բայց յեթե եզուց քեզ
թագավորը հրամայի, թե՛ կտրի ես հանցավորի գլու-
խը, ի՞նչ ես անելու:

— Բերանդ բարի բաց արա, ա՛յ Հարազուշակ դեր-
վիշ, — բարկացավ Հասանը: — Հակառակի նման ինչ
եւ ասում ես, կատարվում ե, չե՞ս կարող մի լավ բան
առել...

Ու շատ վշտացավ Հասանը: Սիրտը յերկյուղ ըն-
կավ, ամբողջ դիշերը չկարողացավ քնի:

Իրավ վոր, մյուս ուրը թագավորը կանչեց Հասա-
նին ու ամբողջ արքունիքի առջև հանդիսավոր հրամա-
յեց, վոր մի հանցավորի գլուխը կտրի:

— Հանիր թուրդ ու կտրի ես հանցավորի գլուխը:

— Ապրած կենաս, մեծ թագավոր, — պատասխա-
նեց սարսամիած Հասանը, — յես իմ որում մարդու գը-
լուխ չեմ կտրել, չեմ կարող: Փորձված մարդիկ շատ
կան քո պալատում, հրամայի մի ուրիշը կտրի...

— Յես քեզ եմ հրամայում, — սաստեց թագավո-
րը, — յեթե մի վայրկյան եւ ուշացրիր, գլուխդ կը-
թռչի, հանի՛ր թուրդ...

Ես խոսքի հետ թշվառ Հասանը մոտեցավ հանցա-
վորին, ձեռքերը տարածեց ու աղաղակեց դեպի յեր-
կինք.

— Տեր աստված, արդարն ու մեղավորը դու գի-
տես: Յեթե ես մարդը մեղավոր ե, ինձ ուժ տուր, վոր
մի զարկով թռցնեմ սրա գլուխը, իսկ յեթե արդար ե,
թող փայտ դառնա իմ թուրը...

Առավ, գուրս քաշեց թուրը... փա՛յտ: Հրաշքի
վրա պալատականները մնացին ապշած: Ետեղ Հարուն
Ս. Ռաշիդ թագավորը փառ-փառ ծիծաղեց ու ամեն
բան բաց արավ, պատմեց իր պալատականների առջև:



Շատ ծիծաղեցին պալատականները ու շատ գովեցին
թե՛ ուրախություն սիրող Հասանին, թե՛ թագավորին։
Ծիծաղեց մինչև անգամ են դժբախտ հանցավորը, վոր
չոքած, վիզը մեկնած սպասում եր թրի զարկին։ Թա-
գավորը բաշխեց հանցավորին իր կյանքը. իսկ Հասա-
նին դառնալով՝ հռչակեց նրան իր սիրելի մարդը ամ-
բողջ տերության մեջ ու լավ պաշտոն տվեց, վոր միշտ
աշխատի ու անպակաս ուրախ ապրի, ուրիշներին ել
սովորեցնի ուրախ ապրել աշխարհքում։

(1911)

ՎՈՍԿԻ ՔԱՂԱՔԸ

(Հնդկական)

1

Ժուկով-ժամանակով Հնդկաստանի Բենարես քա-
ղաքում տիրելիս ե լինում Ուքանա թագավորը։ Որերից
մի որ մեռնում ե նրա սիրելի կինը։ Դժբախտ թագա-
վորը չի կարողանում մխիթարվի վոչ մի բանով, իրեն
վորսորդության ե տալի։ Մի անգամ ել, յերբ վորսի յե
դուրս գալիս, անտառում մի գեղեցիկ փոքրիկ աղջիկ ե
գտնում։ Ուրախանում, աշխարհքով մին ե լինում,
առնում տուն ե բերում, վորդեգրում, անունը դնում
Քանաքարա։

2

Մեծանում ե Քանաքարան, դառնում ե տխուր թա-
գավորի միակ մխիթարանքը։ Յերբ հասնում ե ամուս-
նության ժամանակը, թագավորը հրավիրում, հավա-
քում ե իր յերկրի յերիտասարդ արքայազուհիներին ու
Էշխանազուհիներին, վոր նրանց միջից ընտրություն ա-
նի Քանաքարան։ Բայց աղջիկը դուրս չի գալի իր
սենյակներից։

— Հայրիկ, — ասում ե, — դիչերս մորս հոգին յե-
րադ յեկավ ինձ։ Ասավ. Քանաքարա, շատ շատերը կը-
խնդրեն քու ձեռքը, չխաբվես վոչ գեղեցիկության, վոչ
բաջության, վոչ հարստության, վորովհետև անբախտ
կլինես, վորին ել ընտրես քեզ ամուսին, ընտրի միայն
նրան, ով իր կյանքում գոնե մի անգամ յեղած կլինի
Վոսկի քաղաքում։



— Շատ լավ, աղջիկս, — ասում է բարի ծերունին.
— Իմաստուն են յերազները, ու մորդ հոգին քու յեր-
ջանկության համար է խոսում: Յես եղպես ել կհայտ-
նեմ հավաքված փեսացուներին, ինչպես ազդել է յերու-
զը ու ինչպես քու սիրան է ուզում: Նրանք աշխարհք
տեսած մարդիկ են և անշուշտ նրանց մեջ կգտնվեն են-
պեսները, վոր իրենց կյանքում գտնե մի անդամ յեղած
են Վոսկի քաղաքում:

Եսպես ել հայտնում է թագավորը հավաքված ար-
քայազուններին ու իշխանազուններին: Յերբ Վոսկի
քաղաքի անունը լսում են, ամենքը նայում են իրար
յերեսի ու զարմանքով վեր են քաշում ուսները:

— Եղպես քաղաք մենք չենք ել լսել մեր որում,
ուր թե տեսել...

Նստում են ձիանքը ու իրար յետևից հեռանում,
ցրվում իրենց աշխարհքները:

3

Բենարեսում մի յերիտասարդ է լինում Դիվանա
անունով: Մի շուշլ, զվարճասեր յերիտասարդ է լի-
նում Դիվանան, իր կարողութունը խնջույքներում ու
քեֆերում վատնած, դատարկ, ձանձրացած կյանքից
ու աշխարհքից: Հենց վոր թագավորի աղջկա վորոշու-
մը լսում է, մտածում է. — Այ քեզ լավ դեպք՝ աշխարհ-
քում մի քիչ ել զվարճանալու, միանգամից և կհարըս-
տանաս և գեղեցիկ կնիկ կունենաս: Յեվ ի՞նչպես վոչ-
վոքի մաքով չի անցել գնա ասի՝ տեսել է Վոսկի քա-
ղաքը ու ամուսնանա հետը:

Վեր է կենում, շիտակ գնում Ուքանա թագավորի
պալատը:

— Հայտնեցեք չքնաղ Քանաքարային, վոր յեռ,
յերիտասարդ Դիվանաս, յեղել եմ Վոսկի քաղաքում:

Ամբողջ պալատը թնդում է ցնծությունից. վերջու-
պես յեկավ սպասած հերոսը:

— Ներս համեցեք, — խնդրում են դրանիկները ու
ներս են տանում յերիտասարդին գեղեցիկ Քանաքարա-

յի մոտ: Քանաքարան խնդրում է նրան, վոր պատմի,
թե ինչ բան է Վոսկի քաղաքը: Ու Դիվանան սկսում է
իր սուտ պատմությունը:

— Վոսկի քաղաքը... Ել մի՛ ասի, տիրուհի, թե
ինչ զարմանալի բան է եղ Վոսկի քաղաքը, վոր յես ըն-
կա մեջը... Սուտրական գործերով անցնում եյի աշ-
խարհից աշխարհ, հազար ու մի աշխարհ ընկա, հա-
զար ու մի քաղաք տեսա՝ հազար ու մի հրաշալիքներով
լիքը... Մի անգամ ել, մի աշխարհքում, վորի անունը
լեզվիս ծերին է և հիմի կասեմ վորտեղ վոր է, տեսնեմ
հեռվում մի ահագին տարածություն վառվում է արևի
տակ, ինչպես մի հսկայական հրդեհ:

— Ես ի՞նչ հրաշք ե, — հարցնում եմ ընկերներիս:

— Վոսկի քաղաքն է, — ասում են ինձ:

— Ծջմարիտ վոր Վոսկի քաղաք... Մոտենում
ենք, ի՞նչ տեսնենք՝ տները վոսկի, ծառերը վոսկի, փո-
ղոցները վոսկի... Մարդիկ ել վոչ աշխատում են, վոչ
չարչարվում են, նստած ուտում-խմում են...

— Դուրս արեք ես անամոթ ստախոսին, — բարկու-
ցած կանչում է Քանաքարան: Վզին տալով դուրս են
անում յերիտասարդ Դիվանային և պալատը նորից ըն-
կըղմում է տիրության մեջ...

4

Բայց են որվանից, ինչ յերիտասարդ Դիվանան
տեսնում է գեղեցիկ Քանաքարային, սիրահարվում,
փոխվում, դառնում է բոլորովին ուրիշ մարդ: Քունը
փախչում է նրա աչքերից, գիշեր-ցերեկ միայն են
մտածում, վոր գնա՞, գնա՞, գնա՞, գտնի Վոսկի քա-
ղաքը, ուր ուզում է լինի ու դա պատմի Քանաքարա-
յին: Թողնում է տուն ու տեղ, հերն ու մեր, գլուխը
փեշն է դնում՝ քնում — վորտեղ ես, Վոսկի քաղաք,
քեզ եմ գալի: Գնում է, գնում ամեն պատահողի հարց
ու փորձ է անում, վոչով չի ել լսել Վոսկի քաղաքի տ-
նունը, ուր մնաց թե տեղն ասեր:

Մի որ ել Դիվանան հոգնած, տխուր անց ե կենում
մի խոր անտառով: Տեսնում ե մի ծառի վրա նստած մի
մեծ արծիվ: Նետն ու աղեղը պատրաստում ե վոր զար-
կի, մին ել ասածու հրամանով արծիվը լեզու յե առ-
նում, ասում.

— Ինչո՞ւ յես ինձ սպանում, ով բարի մարդ. ա-
ռանց են ել վիրավորված եմ յես: Վորսկանի նետը մտել
ե թևիս տակը, անտանելի ցավ ե տալի ու արյունաքամ
ե անում ինձ: Յեթե դթաս՝ նետը հանես ու առողջաց-
նես ինձ, յես քեզ են լավությունը կանեմ, ինչ վոր մի-
այն արծիվը կարող ե անել:

Ջարմանում ե յերիտասարդ Դիվանան, թե ինչպես
ե անլեզու հավքը խոսում մարդկային լեզվով: Մոտ ե
գնում, զգուշ ծառիցը վեր ե բերում վիրավոր արծ-
վին, նետը հանում ե թևի տակից ու տանում անտա-
ռում մի խրճիթ, սկսում ե բժշկել:

Արծիվը առողջանում ե ու դիմում ե Դիվանային.

— Յես խոսք տվի, թե քեզ են լավությունը կանեմ,
ինչ վոր միայն արծիվը կարող ե անել: Խոսք եմ տվել
ու խոսքս—խոսք ե, պետք ե կատարեմ՝ ինչ ել վոր սիր-
տըդ ուզի, լեզուդ ասի: Ասա տեսնեմ՝ ի՞նչ ես ուզում:
Ու նստում ե յերիտասարդը, պատմում արծիվին
իր պատմությունը, ազաչում, վոր իրեն տանի Վոսկի
քաղաքը:

— Դժար բան ուղեցիր. բայց արծվի համար չի
դժվարը: Դու միայն ամուր կաց իմ մեջքին, դեռ ճրագ-
ները չվառած քեզ վեր կրերեմ Վոսկի քաղաքում, — ա-
սում ե արծիվը ու վեր թռցնում յերիտասարդին:

Բաց ե անում իր հսկայական թևերը, բարձրա-
նում եմինչև ամպերը, սլանում հեռո՞ւ գետի արևլուս:
Յերկյուղից ու արադությունից գրեթե չնչասպառ ե
վինում, ուշքից դնում ե Դիվանան: Մին ել ենտեղ ե
ուշքի գալի, վոր արծիվը ծղրտում ե.

— Ահա Վոսկի քաղաքը, — ու իջեցնում ե գետին:



Աչքը բաց ե անում Դիվանան: Առջևը, կանաչ այգիներէ մեջ թաղված, տարածվում ե մի քաղաք: Կապույտ դետը վոլորվելով անցնում ե նրա միջից: Հեռվից շատ ծանոթ քաղաքների նման մի քաղաք ե եւ ել փոքրիկ քաղաք: Առաջ ե գնում: Չորս կողմը բարելից այգիներ, զմրուխտ կանաչ, հազարադուռնի ծաղիկներ: Ողբ լիքն ե թարմությունով ու բուրմունքով, թրուչունների ծլվոյցով ու ջրերի կարկաչով, ե նրանց հետ միախառնվելով հնչում են մարդերում ու այգիներում աշխատողների յերգերը:

Մի, ի՞նչ լեն ե աշխարհն աղատ
Ես կյանքի համար, ամենքի համար.
Ի՞նչքան լիքն ե, ի՞նչքան առատ
Ես կյանքի համար, ամենքի համար:

Ախ, ի՞նչ լավն ե աշխատանքը,
Առողջ ձեռքով, խաղաղ հոգով,
Ի՞նչ անուշ ե հոսում կյանքը
Լիքը սիրով, ծաղկով, յերգով:

«Յերջանիկ մարդիկ», մտածում ե Դիվանան ու դիմում ե նրանց.

— Ասացեք, աղաչում եմ, ով յերջանիկ մարդիկ, ինչ ե ես քաղաքի անունը:

— Վոսկի քաղաքն ե սա, բարի ոտարական:

— Իսկ դուք ծառաներ եք, վոր բանում եք ձեր տերերի այգիներում, թե՞...

— Մենք տեր ու ծառա չգիտենք:

— Իսկ ձեզ ո՞վ ե կառավարում:

— Գոհար թագուհին:

— Շաա զորեղ թագուհի յե յերեմի:

— Այո՛, նա գիտի յերջանկացնելու գաղտնիքը:

— Արդյոք կարելի՞ յե նրան տեսնել:

— Նրա դուռը բաց ե ամենքի առջև, իսկ ոտարականներին միշտ նրա մօտ են տանում. ե քեզ ել կհրավիրեն անշուշտ:

Ճշմարիտ վոր, ներս ե մտնում քաղաքը թե չե, Դիվանային խնդրում են Գոհար թագուհու ապարանքը: Ապարանքում յերը կերակրվում ե, կազդուրվում ու հանգստանում, հրավիրում են թագուհու մօտ: Թագուհին մի շատ բարի ու ազնիվ կին ե լինում ե ենքան չքնաղ, վոր հրեղեն-փարեղեն մի արարած ե թվում Դիվանային: Կախարդ վոր կախարդ, հենց մի տեսնելով կախարդում ե նրան:

— Ի՞նչն ե քեզ բերել մեր աշխարհքը, յերիտասարդ ոտարական, — հարցմունք ե անում Դիվանային. — վի՛շտն ե քեզ հալածում, թե՞ բախտն ե առաջնորդում, ե ինչո՞վ կարող ենք ողտակար լինել քեզ:

Թագուհու ազնվությունից ու հարցմունքից վոգեվորված, Դիվանան սրտաբաց պատմում ե մի առ մի, թե ով ե ինքը, ինչ ե յեկել իր գլուխը ու ինչպե՞ս ե հասել Վոսկի քաղաքը:

— Միշտ լավ ե, — ասում ե թագուհին, — յերը մարդիկ թողնում են իրենց վատ սովորություններն ու կրքերը, լցվում են բարձր կարոտով ու ձգտում են, գնում են հասնելու մի բարձր նպատակի: Թե կհասնեն, — լավ, թե չեն հասնի, դարձյալ միշտ լավ ե ու լավ, վորովհետեւ կյանքը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ ձգտումն ու ճանապարհ:

— Իսկ յերջանկությունը...

— Աշխատել լավ ճանապարհի վրա ու գոհ լինել իր ունեցածով:

— Ե՞դ ե յերջանկությունը:

— Ուրիշ վոչինչ:

— Իսկ յես կարծում եյի՞ ձեր քաղաքը լիքն ե Վոսկով, ե նրանից ե, վոր գոհ ու յերջանիկ են ձեր մարդիկը, — հայտարարում ե զարմացած Դիվանան:

— Վոսկի՞, — քմծիծաղ ե տալիս Գոհար թագուհին. — Վոսկին մետաղ ե, վոր հողից ե դուրս գալի, յերջանկությունը զգացմունք ե, վոր սրտից ե բղթում: Ի՞նչ կապ կա նրանց մեջ:

— Իսկ յես կարծում եյի՝ ահռելի բանակ ունեք և զենքի ուժով եք պահպանում ձեր յերկրի սքաչելի կարգն և խաղաղությունը, շարունակում ե Ղիվանան։

— Ո՛ր, յերբեք։ Ահն ու սպառնալիքը և խաղաղությունը իրար չեն տեսել և միասին չեն ապրում։

— Իսկ յես կարծում եյի, թե դուք հաղարամիոր վոսկեղմբեթ տաճարներ ունեք, նրանց մեջ անդադար աղոթում են ձեր հոգեվոր հայրերը ու ասածու աչքը քաղցր են պահում ձեզ վրա։

— Վոչ, բարեկամ, մենք բնության ընդարձակության մեջ ենք պաշտում նրան և միջնորդներ չենք ճանաչում մեր հոգու ու նրա մեջ։

— Սքանչելի յերկիր.— բացականչում ե Ղիվանան. հիշում ե իր հայրենի յերկիրն ու ընկնում ե մտքի տունը։

Ապա թե տանում ե կախարդ թագուհին, ման ե լծում Ղիվանային իր ապարանքի սրահները։ Սրահներից մեկում Ղիվանան տեսնում ե պատկեր կախած մի աղջկա պատկեր։

— Վա՛հ, ի՛նչքան նման ե,— բացականչում ե ու մնում ե առաջը քարացած։

— Ո՞ւմ նման ե։

— Նրա...

— Ո՞վ ե նա։

— Քանաքարան... իմ Քանաքարան...

— Բայց ո՞վ ե Քանաքարան։

— Քանաքարան, թագուհի, հենց են աղջկին ե, վորի մասին քեզ պատմեցի։ Նրա համար եմ յես հեռացել իմ հայրենի յերկրից, ընկել աշխարհքից աշխարհ ու արծվի թևով հասել Վոսկի քաղաքը և կրկին պետք ե վերադառնամ նրա մոտ։

— Ինչո՞ւ յես վերադառնում, աղնիվ Ղիվանա,— խոսում ե գեղեցիկ թագուհին։— Մի՛ վերադառնա, Ղիվանա, մեզ մոտ մնա. մեզ հետ ապրի։ Մի՞թե ավելի փարթամ չե Վոսկի քաղաքը, մի՞թե հոյակապ չեն ես

ապարանքները, մի՞թե հրաշալի չեն ես կախարդական այգիները...

— Վոչ, թագուհի, չեմ կարող։

— Մի՞թե գեղեցիկ չեմ յես...

— Վոչ, չի լինելու վոր չի լինելու։

Են ժամանակ թագուհին պատվիրում ե, նալ են պատրաստում ու ճանապարհ ե դնում Ղիվանային դեպի իր հայրենի յերկիրը, դեպի Քանաքարան։

8

Ճանապարհին ծովում սաստիկ ալեկոծություն ե վեր կենում, նալը դցում ե մի կղզի։ Մի կանաչ կղզի՝ լիքն ամեն բարիքով ու ամեն գեղեցիկությունով։ Բայց ամենից գեղեցիկը լինում ե նրա ջահել տիրուհին, վոր Ղիվանային առաջարկում ե ամուսնանա իր հետ. թագավորի են ազատ ու օտոտ աշխարհքում։

— Չեմ կարող, նազելի տիրուհի,— հրաժարվում ե Ղիվանան։— Յես դարձյալ իմ ճանապարհն եմ շարունակելու, ինչ ուզում ե լինի— դեպի իմ հայրենի տունը, դեպի իմ Քանաքարան, վոր չեմ փոխելու վոչվորի և վոչ մի թագավորության հետ։

Ես ասելու հետ հենց աչքը ճպում ե Ղիվանան, մին ել բաց ե անում,— կղզում տիրուհու փոխարեն առաջը կանգնած ե Գոհար թագուհին։

— Մի՛ վախենար, Ղիվանա, ու մի՛ գործառնար,— անուշ ժպտալով խոսում ե նա։— Տեսնո՞ւմ ես, Վոսկի քաղաքի թագուհին եմ յես— կախարդ Գոհարը։ Իմ աղջկին ե Քանաքարան։ Մանուկ հասակում Սե դեր նրան հափշտակեց ու տարավ։ Են որվանից ամեն յեկվորի ինձ մոտ եյի հրավիրում, հարց ու փորձ եյի անում, պատկերն եյի ցույց տալի, բայց վոչ վոք չեք իմանում, թե ուր ե ընկել նա։ Յեվ ահա դու յեկար նրա սիրով վոգեվորված ու վերադառնում ես կրկին նրա մոտ։ Քո սերը փորձելու համար եր, վոր յես քեզ արի են ամեն առաջարկներն իմ քաղաքում։ Յեվ դար

ձյալ քեզ փորձելու համար եր՝ յես առա ուրիշ կերպարանք, քեզ փորձելու համար ստեղծեցի ես փորձանքն ու ես վայելչությունները, վոր լուկ յերեմիայթ են միայն: Այժմ յես հավատում եմ քեզ, հավատում եմ քո սերին ու քո բարությանը: Դու, հիրավի, այժմ յերջանիկ կանես և իմ Գանաքարային և ամեն մարդու: Վերջապես այժմ դու գիտես յերջանկության դադանիքը:

Ես խոսքի հետ մի փեռուր և կրակում կախարդ թագուհին և, սև ամպի նման, հակնթափոր թեերը փռած հայտնվում եմ մի մեծ արծիվ:

— Տա՛ր,— բացականչում ե կինը, ու ամեն բան չքոնում ե Դիվանայի աչքից, այնինչ տղի մեջ հնչում ե յերգը:

Դս՜ աշխարհից, գո՜ իր կյանքից,
Սիմուրդ հավքի զմրուխտ թեին,
Յերջանկության հայրենիքից
Գնում ե նա, գնում կրկին:

Գնում ե նա վերածնված
Մաքուր սիրով, բարի սրտով,
Դեպի յերկիրն իր նախահարց—
Ցավերի տուն, արցունքի ծով:

Տանում ե նա ռժը վողու,
Անվերջ սերը, անհատ բարին,
Յերջանկությունն ամեն մարդու,
Խաղաղություն վող աշխարհին:

9

Հոգու վրա յե լինում Ուգանա թագավորը, վոր արծիվը ծղրտում ու վեր ե գնում Դիվանային իր հայրենի քաղաքի սահմանում: Քաղաքն ե մտնում Դիվանան ու գնում ուղիղ թագավորի ապարանքը:

— Հայտնեցեք գեղեցիկ Գանաքարային, վոր յես, յերթասարդ Դիվանան, գալիս եմ Վոսկի քաղաքից: Ընդունում են ներս: Դեմքը տեսնելուն պես Գանաքարան բարկանում ե իր ծառաների վրա:

— Մի՞թե չեք ճանաչում սրան, վոր ներս եք թողել նորից: Մի՞թե են սրիկան չի սա, վոր մի անգամ փորձեց ինձ խարի և ահա նորից հանդդնում ե, ու գում ե հին խաղը խաղա: Դուրս արեք իսկույն:

— Սպասի, չքնաղ Քանաքարա,— խնդրում ե Դիվանան:— Հիրավի, յես նա եյի, բայց ել նա չեմ: Յես այժմ Վոսկի քաղաքից եմ գալի, քո կախարդ մոր՝ Դոհար թագուհու ապարանքիցն եմ վերադառնում, քո մանկության ննջարանումն եմ յեղել, ուր դեռ կախ ե արած քո սիրուն պատկերը... Յես այժմ գիտեմ՝ ինչ բան ե Վոսկի քաղաքը, ինչ ե վոսկին և ինչ ե յերջանկությունը: Յես այժմ գիտեմ յերջանկության դադանիքը:— Յեվ ամեն բան նստում պատմում ե միառմի:

— Այժմ յես քոնն եմ,— բացականչում ե Գանաքարան, և աշխարհքով մին ե լինում ուրախությունից: Ու քանա թագավորն ել շնչի յե գալի. ռխտն որ, ռխտը դիչեր ամբողջ յերկիրը կատարում ե նրանց հարսանիքը: Ամենքն ուրախանում են ու լիանում: Ես ուրախությունը տեսնելուց հետո ծեր թագավորն ել կյանքն ու արեք բաշխում ե ապրողներին ու մեռնում: Նրա տեղը թագավոր ենստում Դիվանան ու սկսում ե իր յերկիրը կառավարել են կարգով, ինչ վոր տեսել եր Վոսկի քաղաքում: Վոսկի չկար նրա յերկրում, բայց մարդիկ ապրում եյին արդար աշխատանքով, գո՜ ու յերջանիկ իրենց ունեցածով: Յեվ են ժողովուրդը, վոր մի ժամանակ տրտնջում եր, թե աշխարհքը նեղ ե ու ցավով լիքը, հիմա յերգում եր ամեն տեղ:

Ի՜նչքան լեն ե աշխարքն ազատ
Ես կյանքի համար, ամենքի համար.
Ի՜նչքան լիքն ե, ի՜նչքան առատ
Ես կյանքի համար, ամենքի համար:
Ի՜նչ ազնիվ ե աշխատանքը
Առողջ ձեռքով, խաղաղ հոգով,
Ի՜նչ թեթև ե անցնում կյանքը
Լիքը սիրով, ուրախ յերգով:

(1909)

ԱՍՏՂԵՐԻՑ ԻԶԱԾ ԿԻՆՇ

(Հնդկական)

Հին ժամանակները, յերբ դեռ Հնդկաստանում չե-
յին յերևացել սխալապի մարդիկ իրենց հրացաններով,
յերբ դեռ նրա ճոխ ու ընդարձակ հովիտներում խաղաղ
արածում էյին գոմեշների յերամակները, յերբ դեռ
աստղերն էլ մոտ էյին յերկրին ու չքնաղ, կենդանի ա-
րարածներ էյին և հաճախ իջնում էյին մարդկանց
մոտ, ահա են ժամանակներից եմ պատմում:

Էն ժամանակները Կովի գետի ափին ապրում երմի
Ջահել վորսկան: Նա սիրում էր կարմիր ծաղիկներն ու
կապույտ յերկինքը: Յեվ մինչդեռ ուրիշները կաշվե
բաձկոններով էյին վորսի գնում, նա կարմիր հու-
լունքներով զարդարած կոշիկներ էր հագնում, յերեսը
նախշում էր կարմիր շերտերով ու չրջանակներով,
ինքն էլ ենպես վառ ու նախշուն գուգվում-զարդար-
վում, ինչպես վառ ու նախշուն գուգված են յերկինքն
ու յերկիրը: Մաղերի մեջ էլ միշտ կրում էր կարմիր
կարապի փետուր, դրա համար էլ նրան կանչում էյին
Բարձր փետրավոր:

Մի անգամ իր նեա ու աղեղով զինված Բարձր
փետրավորը գնում էր անտառով: Մի կանաչ բացա-
տում նկատեց մի հեաք— մանր վոտնատեղեր, վոր յեր-
բեք չեր տեսել իր կյանքում:

— Ի՞նչ արարած է սա արդյոք, վորտեղից է յեկել
և ո՞ւր է գնացել,— զարմացած հարց տվեց իրեն Ջահել
վորսկանը:

Են հեաքը բռնեց ու գնաց: Ավելի զարմանքը մե-

ծացավ, յերբ տեսավ հեաքը չրջան անելով յեկավ ելի
ենտեղ, վորտեղից սկսել էր ու գնացել:

Ինչ ուզում է լինի, պետք է իմանամ ինչ արարած
է սա, վճռեց ու պառկեց են չրջանի մեջ բարձր խո-
տերում ու ծաղիկներում և մտածում էր անհայտ արա-
րածի ու նրա վոտատեղերի վրա՝ հայացքով խորատուգ
ված կապույտ յերկնքի մեջ:

Մին էլ նկատեց հենց իր վերևում, յերկնքի խոր-
քում, մի փոքրիկ կետ: Սկզբում արծվի տեղ ընդունեց,
բայց հետզհետե իջնելով մեծացավ, մեծացավ կետը,
ու մին էլ տեսավ՝ մի զամբյուղ իջավ յերկնքից: Թփե-
րի յետևից նայեց. զամբյուղից դուրս յեկան տասներ-
կու հրեղեն—փարեղեն աղջիկներ՝ հաղած յերկնակա-
պուտ ծիծիծուն թափանցիկ հազուատներ: Չամբյուղից
դուրս յեկան մինը մյուսի յետևից և դալարի ու ծաղիկ-
ների մեջ սկսեցին պարել ու յերգել, յերգել են տեսակ
հրաշալի յերգեր, վոր Բարձր փետրավորը իր որում
յերբեք չեր լսել:

Նստեղ Բարձր փետրավորը էլ չկարաց համբերի,
իր թագստից դուրս թռավ, ընկավ նրանց չրջանը ու
բացականչեց.

— Թողե՛ք, թողե՛ք, յես էլ յերգեմ ու պարեմ ձեզ
հետ...

Աղջիկները վախից ճչացին, վաղեցին դեպի իրենց
զամբյուղը, իրար յետևից թռան զամբյուղի մեջ, ու
զամբյուղը արագությամբ վերացավ դեպի յերկնքի
խորքը ու հետզհետե փոքրանալով, անհետացավ, կո-
րավ յերիտասարդ վորսկանի աչքից:

Յերիտասարդը վերադարձավ իրենց խրճիթը:
Մերը նրա համար գոմշի միս էր խորովել, բայց չկարաց
ուտի. ուշք ու միտքը են տասներկու աղջիկների հետ
գնացել էր դեպի յերկինք:

Շատ խնդրեց մերը, վոր պատմի, թե ի՞նչ է պա-
տահել: Սկզբում չեր ուզում, բայց վերջը պատմեց
ամեն բան ու հայտնեց, վոր չի հանգստանալ, մինչև են
աղջիկներից մինը կին չբերի իրեն:

— Դրանք անպատճառ աստղաբնականներից են, — առաջ վորսկանի մերը, վոր նշանավոր կախարդ եր: — Դու ավելի լավ կանես մեզանից մի հնդիկ աղջիկ ուղես քեզ համար կին: Ել մի՛ մտածիր աստղաբնակ աղջիկների վրա, թե չես գլխիդ մի փորձանք կրերես:

— Վոչ մի դժբախտություն ու վոչ մի դժվարություն ինձ չեն վախեցնում, միայն թե կարենամ Աստղաբնակ աղջկանը ինձ կին առնեմ, — սլատասխանեց վորդին: — Յեվ յես պետք ե հասնեմ նրան, թեկուզ եղ քաջի մինչև աշխարհքի վերջը:

— Յեթե հաստատ եղպես ես վճռել, թո՛ղ քու ասածը լինի — ասավ մերը ու մյուս առավոտը մի կտոր արջամկան մորթի կարեց տղի գլխի փետուրին, խրատ տվեց ու ենպես ճանապարհ դրեց դեպի կախարդական շրջանը:

Շրջանը մտնելուն պես յերիտասարդը դարձավ արջամուկն ու խոտերի մեջ տապ արավ, սպասեց:

Մի ժամանակ դարձյալ նկատեց նույն կետը յերկրնքի խորքում: Հետզհետե մեծացավ կետը, իջավ, իջավ ու վերջապես իջավ գետնին, ելի նույն տեղը:

Աղջիկներից մեծը ուշադրությամբ դիտեց չորս կողմը — արևելք, արևմուտք, հյուսիս ու հարավ:

— Կարծես ետոր ետեղ մարդ չկա, — ասավ նա ու բոլորը դամբյուղից դուրս թռան: Հենց ուղում էյին սկսեն իրենց սլարը, վոր փոքր աղջիկը արջամկանը նկատեց ու ցույց տվեց մեծին:

— Շո՛ւտ, չո՛ւտ, փախե՛ք ետեղից, — ճչաց մեծը. — հասարակ արջամուկը յերբեք չեր համարձակվի մտնել մեր նվիրական շրջանը: Արջամկան կերպարանքի տակ անշուշտ մի կախարդ ե թաղնված:

Բարձր փետրավորը վրա չհասցրեց գոնե մի խոսք ասի կամ իրենից ձգի արջամկան մորթին, վոր դամբյուղն արդեն թռչում եր յերկնքում:

Յերիտասարդը տուն վերադարձավ օտարիկ տխուր ու կոտորված:

— Մի՛ հուսահատվիր, վո՛րդիս, — ասավ մերը: —

Մոեղեն մի՛ ուտիլ, եդ շատ ե վնասում մեղ ու փչացնում ե մեր հմայքները: Դնա՛, յեթե սով զգաս, մորթի կեր միայն:

Ապա թե մի մկան բեխի ծեր կարեց վորդու գլխի կարմիր փետուրին ու ճանապարհ դրեց:

Սոված, ճանապարհին մորթի ուտելով հասավ ու կախարդական շրջանը մտավ յերիտասարդը: Մտավ թե չե — մուկ դարձավ, բարեկամացավ մի մկան ընտանիքի հետ ու իջավ նրանց բունը: Մկների մերը խոտացավ ամեն քանում ոգնել նրան:

Ահա նորից յերկնքից իջավ խորհրդավոր դամբյուղը: Մեծ քույրը դարձյալ դուրս մեկնվեց դամբյուղից ու սկսեց դիտել չորս կողմը. հարավ նայեց, հյուսիս նայեց, արևելք նայեց, արևմուտք նայեց, ներքե — գետնին նայեց:

— Ետեղ մարդ չկա, — ասավ. — արջամուկն եր չեմ տեսնում, բայց դարձյալ պիտի զգուշ լինենք:

Յեվ ահա դուրս յեկան նրանք ամենքը, պար բռնեցին ու սկսեցին յերգել ու զարկել փոքրիկ թմբուկները, վոր ոճի կաշվից էյին շինած: Եսպեսով հասան հենց մկան բնին. մեծ քույրը ձեռքը վեր բարձրացրեց, բոլորը միասին կանգ առան ու շունչները պահեցին: Ապա թե վոտով գետնին զարկեց, ակունջ դրեց ու ասավ:

— Ետեղ առաջվա նման խուլ չի՛ հնչում: Յերեկ ետոր օտար հյուր կա մկների մոտ: — Նորից գետինը դուրեց ու կանչեց:

— Դո՛ւրս յեկեք, յերևացեք դո՛ւք, փոքրիկ դավաճաններ, թե չե ձեր բունը կքանդենք:

Բայց մեր մուկը արդեն անցք եր փորել, վոր դուրս եր դուրս ուղիղ հենց շրջանագծի մյուս կողմը: Յեվ մինչդեռ աղջիկները նրան շրջանի ներսն էյին վորոնում, նա իր ճուտերով արդեն փախչում եր շրջանից դուրս մարգերում:

Աղջիկները վազեցին յետևներից, վոր սպանեն մեղ ներին. ամենքը վազեցին, բացի փոքրը, վոր չեր կա-



ընդ սպանել՝ ինչ ուզում էր լինել: Ես ժամանակ Բարձր փետրավորը դուրս յեկավ մկան բնից, առավ իր մարդկային կերպարանքը, մոտեցավ աղջկանը, բռնեց նրա յերկու ձեռքից ու առավ:

— Արի գնանք մեր տունը, սիրո՛ւն աղջիկ, ու յե-

ղիր իմ կինը: Ենտեղ պար կրոնես հնդիկ աղջիկների հետ, յես վորս կանեմ, կբերեմ քեզ համար, մերս կե-
փի ու տունը կկառավարի, և դու մեզ մոտ ավելի յեր-
ջանիկ կլինես, քան ենտեղ — յերկնքում:

Աղջիկը կամավորվում էր:

Յերկնային աղջիկները յեկան հավաքվեցին, չոր-
ջապատեցին իրենց քրոջը, սկսեցին աղաչել, վոր են-
պես բան չանի՝ նորից իրենց հետ գնա վերև յերկնք —
իրենց տունը. բայց նա նայեց, նայեց յերիտասարդին
ու առավ:

— Կգամ քեզ հետ, գնանք, ուր վոր ուզում ես:

Մնացած քույրերը ցավալի լացով ու սուգով բար-
ձրացան դեպի յերկնք, անհետացան կապուտակ յեր-
կնքում, իսկ Բարձր փետրավորը իր Աստղ-կնոջը բե-
րեց իրենց վրանը Կովի գետի ափերին: Իր յերկնային
հարսին տեսնելով շատ ուրախացավ յերիտասարդ
վորսկանի մերը, բայց վորդու ախանջին չչնջաց:

— Յերբեք չհեռանաս քո կնոջից, յեթե ուզում ես
դրան պահես, ուր վոր գնաս, հետդ տար անբաժան:

Ենպես ել արավ յերիտասարդ վորսկանը: Իր կնոջ
համար ել նետ ու աղեղ շինեց ու միշտ հետը վորսի
յեր տանում. բայց կինը յերբեք չեր հոժարում նետ
արձակելու, յերբեք չեր ուզում սպանի, ինչ չունչ կեն-
դանի ուզում էր լինել, և յերբեք վորսի միս չեր ու-
տում, յեթե սպանում էյին ուրիշները: Նա անտառա-
րում ու մարդապետիններում միայն մոռ, մորի, հա-
ղարձ և ուրիշ պտուղներ էր քաղում ուտում, մին ել
բրինձ: Ենպես էր ապրում:

Մի անգամ ել, յերբ ջահել կինը դրադված էր իր
ձեռագործով և փետուրներից ասղարուր*) աստղեր էր
շինում իր տոնական դպետի վրա, իսկ վորսկանի մերը
դյուղի մյուս ծերին դուռը եր անում իր ծանոթների
վրանում, վորտեղից վոր էր ներս թռավ մի փաքիկ
գեղին թռչնակ, վեր յեկավ Բարձր փետրավորի ուսին
ու ախանջին ծվլաց:

*) Ասղարուր — ասեղնադարձ:

— Ձեր մոտիկ լճի վրա վեր ե յեկել վայրի կարապ-
նեքի յերամբ: Յեթե չուշանաս, չուտ հասնես և զգուշ
մոտենաս, կարող ես նրանցից բռնել: Թե չե՝ ուր վոր
ե կթռչեն: Միայն կնոջը չիմացնես: Կարմիր կարապ-
նեքը կանանց տանել չեն կարող: Ձեռաց հոտը կառ-
նեն, թեկուզ մի մղոնի վրա, ու կթռչեն:

Բարձր փետրավորը վոչ թե կարմիր կարապ չեք
տեսել իր ուրում, այլ չեք ել լսել, թե կարմիր կարապ
կլինի: Իր գլխի կարապի կարմիր փետուրն ել ինքն ե
ներկել: Մոտիկ արավ, տեսավ կինը զբաղված ե իր ձե-
ռագործով ու գլուխը քաշ արած աստղեր ե ասեղնա-
գործում, կամաց դուրս սահեց, մտածելով թե ենպես
չուտ կվերադառնա, վոր նա խելի չի իմանալ, թե
յերբ գնաց, յերբ յեկավ: Բայց դուրս գնաց թե չե,
վրանը ներս թռավ են դեղին թռչնակը, թառ յեղավ
կնոջ ուսին ու ականջի տակին սկսեց յերգել մի հրա-
շալի յերգ, թե ինչպես են ապրում նրա քույրերն են-
տեղ յերկնքում: Ու չքնաղ կինը, վոր մի ժամանակ
աստղերի վրա յեր ապրել, հիշեց յերկնային կյանքն ու
իր անցած յերջանկությունները, մոռացավ յերկրային
ամեն բան, վեր կացավ, քամու նման թռավ դեպի նվի-
րական շրջանը, հենց ենտեղ հասավ, վոր քույրերը
իջնում եյին յերկիրը: Տեսնելով իրենց քրոջը՝ շրջա-
պատեցին ու սկսեցին աղաչել, վոր իրենց հետ վերա-
դառնա յերկինք — տուն:

— Բայց Բարձր փետրավորը լավ մարդ ե ու ինձ
չառ ե սիրում: Ի՞նչպես թողնեմ նրան, — ասավ աղ-
ջիկը:

Մեծ քույրը տեսնելով, վոր փոքրը դժվարանում
ե թողնել ամուսնուն, ասավ.

— Դե՛ մնա, յեթե չես կարող բաժանվել նրանից.
բայց խնդրում եմ, դոնե մի ժամով մեզ հետ յերկինք
բարձրացիր մեր հորը տեսության: Են որվանից, ինչ
դու հեռացել իջել ես յերկիր, նա շարունակ դարդ ե
անում:

Ձեր կամենում գնալ փոքր քույրը, բայց ենքան եր
հորը կարոտել, վոր անունը լսելուն պես մտավ խոր-
հրդավոր զամբյուղը՝ մի անգամ ել նրան տեսնելու
համար: Հեր ու աղջիկ վոր իրար տեսան, յերկուսն ել
չառ ուրախացան ու խոսեցին, խոսեցին, ենքան խոսե-
ցին, վոր կապուտակ յերկինքը մթնածոռեց*), ու աղ-
ջիկը հիշեց, վոր ուշացել եր, պետք ե նորից իջներ
յերկիր, իր ամուսնու մոտ:

— Եդ յերբեք չի լինի, — ասավ հերն աղջկանը. փա-
կեց նրան մի մեծ սպիտակ ամպի մեջ ու հայտնեց, թե
դուրս չի թողնելու են ամպից, մինչև չի խոստանա, վոր
ել չի վերադառնալ յերկիր: Աղաչեց, պաղատեց աղջի-
կը, բայց իզուր: Ապա թե լաց յեղավ ու սկսեց արտաս-
վել, արտասուք թափել ենքան առատ, վոր սպիտակ
ամպն ել մթնեց ու սկսեց արտասուք թափել նրա հետ:
Հերը տեսավ, վոր յեթե շարունակի փակած պահել —
աղջիկն արտասուքով կողողի յերկիրը, բաց թողեց:

— Ի՞նչ անեմ, — ասավ, — վոր մնաս մեզ մոտ ու
յերջանիկ ապրես:

— Իմ ամուսնուն ել բեր յերկինք, — պատասխա-
նեց աղջիկը:

Ու յերկիր իջեցրեց նվիրական զամբյուղը յերկնա-
յին ծերունին:

Բայց ի՞նչ յեղավ Բարձր փետրավորը:

Լճի ափը գնաց Բարձր փետրավորը, տեսավ կար-
միր կարմիր կարապների մի գեղեցիկ բաղմություն:
Յերկուսին սպանեց, մնացածը փախան: Սպանած կա-
րապներն առավ, շտապեց վրանը: Յեկավ տեսավ ձե-
ռագործը կիսատ ընկած, ու կինը չկա: Սկսեց կանչել,
պատասխան չկա: Սպանած կարմիր կարապներն ուսով
գցած վրանից դուրս վազեց դեպի խորհրդավոր շրջա-
նը — ենտեղ ել չկար:

Վճռեց հենց ենտեղ ել մնալ ու սպասել նրա վերա-
դարձին, թեկուզ մինչև աշխարհքի վերջը: Ընկավ գե-

*) Մութն ընկավ:

տին, խոտերի մեջ պառկեց ու հայացրը աստղերին սև-
վեռած նայեց, նայեց մինչև հոգնեց, քունը տարավ:

Առավոտը վաղ աչքը բաց արավ, խոտերի մեջ լսեց
մի շրջյուն. մտիկ տվեց — կողքին ծանոթ զամբյուղը:
Վեր թռավ ու խենթի նման, սպանած կարապներն ել
ուսին, ընկավ զամբյուղը: Տեսավ զամբյուղը դատարկ,
մեջը վոչվոք չկա, ու մինչև ուզեց դուրս գա, արդեն
անցել հասել եր յերկնքի ու յերկրի մեջտեղը ու արագ
սլանում եր դեպի վեր: Սլացավ, սլացավ, վերջապես
հասավ Աստղերի աշխարհքը, վորտեղ սպասում եր իրեն
սիրելի կինը: Կնոջ հերը նրանց մի սքանչելի կապույտ
վրան նվիրեց: Են կապույտ վրանում նրանք ապրում
էյին յերջանիկ: Բարձր փետրավորը մի առ ժամանակ
հարբած յերկնային վայելքներով ու իր հրեղեն կնոջ
սիրով՝ կատարելապես յերջանիկ եր, բայց կամաց-կա-
մաց սկսեց ձանձրանալ ամպեղեն պտուղներից, վորտե-
ցով սնվում էյին Աստղերի աշխարհքում՝ նրանց բնա-
կիչները, սկսեց կարոտել հաստատուն կանաչ դաշտե-
րին, վորսերին, ու թախանձեց կնոջ հորը, վոր բաց
թողնի իրեն իր կնոջ հետ միասին նորից դեպի յերկիր:

— Վոչ, անկարելի յե,— պատասխանեց կնոջ հերը,
— թե թողնեմ, ել յերբեք չեմ տեսնիլ նրան: Դու ել
մնա՛ մեզ մոտ ու չուտով կմոռանաս ձեր տխուր յեր-
կիրը:

Յերիտասարդ վորսկանը պատասխանի փոխարեն
հագավ իր սպանած կարմիր կարապներից մի գույգի
թևերը, մյուս գույգի թևերն ել կնոջը տվեց ու վար
ձախրեցին Աստղերի աշխարհքից դեպի ցած, նորից
իջան յերկիր, իրենց դաշտերը, իրենց վրանը, ուր
Բարձր փետրավորի պառավ մերը վողբում եր իրենց
կորուստը:

Յերբ տեսավ վերադարձան, անսահման ուրախա-
ցավ պառավ մերը, ուրախացան ամենքը դյուղում, մեծ
խնջույք սարքեցին, ուրախություն արին ու յերկար,
յերկար յերգեցին ու պարեցին:

Վորսկանի Աստղ կինն ել վերջացրեց իր ասղարուր

ասեղազարդ տոնական զդեստը, հագավ, մտավ հըն-
դիկների շարքը և պարում, յերգում եր նրանց հետ:
Ել յերբեք չվերադարձավ են շրջանը, ուր իջնում էյին
իր հրեղեն քույրերը: Ապրում եր պտուղներով ու հացա-
հատիկներով, վորովհետև չեւ սիրում սպանել, բացի
մեկից, են փոքրիկ դեղին թռչնակից:

Մի անգամ ել, յերբ ուրիշ կողմ եր Բարձր փետրա-
վորի ուշքը, նորից ներս թռավ են փոքրիկ դեղին թռչ-
նակը, թառեց կնոջ ուսերին ու սկսեց շշնջալ, բայց
կինը բռնեց, նրա վիզը վոլորեց: Են եր ու են, են որ-
վանից ել չեկավ, չերեաց թևավոր փորձիչը: Յեվ են
ճոխ հովտում, Կովի դետի ավին իրենց խաղաղ վրա-
նում, անբաժան ու յերջանիկ իրար հետ ապրում էյին
ջահել վորսկանն ու աստղերից իջած կինը:

(1913)

ՓՈՔՐԻԿ ԶԿՆՈՐՍԸ

(Ճապոնական)

Շա՛տ-շատ տարի առաջ ճապոնական ծովի ափին մի ջահել ձկնորս է լինում, անունը Ուրաչիմա: Մի լավ ու բարի տղա յե լինում Ուրաչիման և հմուտ ուռկան ու կարթ գցող:


Մի անգամ դնում է ձուկը բռնելու: Ձկան տեղ ջրից հանում է՝ ի՞նչ էք կարծում, ի՞նչ... Մի մեծ, ահագին կրիա: Բայց եստեղ ձեզ դեռ մի բան պիտի ասեմ, վոր դուրս գալիս չգիտեք. եղ են ե, վոր կրիաները ապրում են մինչև հազար տարի:

Ուրաչիման իրեն-իրեն միտք է անում, թե՛ ավելի լավ երսրա տեղը մի ձուկը բռնելի, դոնե ճաշին կուտե-յի: Իսկ սրան ի՞նչ անեմ. ինչո՞ւ սպանեմ ես խեղճ կեն-դանուն, ինչո՞ւ արգելեմ դեռ իննը հարյուր իննսուն իննը տարի յեւ ապրելու: Չե, եղպես խստասիրտ չեմ լինիլ: Յես գիտեմ, եղ իմ մորն ել չի դյուր գալ:

Ու կրիան կրկին գցում է ծովը:

Սրանից հետո Ուրաչիման քնում է իր նավակում: Որն ել ամառվա են տաք օրերից ե լինում, յերբ ամեն մարդ ուզում է ճաշից հետո մի քիչ քնի: Քնած ժա-մանակ ծովի անդունդից դուրս ե գալիս մի սիրուն աղ-ջիկ, մտնում է նավակն ու ասում.

— Լսի՛ Ուրաչիմա. յես ծովի թագավորի աղջիկն եմ, իմ հոր հետ ապրում եմ ծովի հատակին վիշապնե-րի ապարանքում: Վոչ թե կրիա յեր քո բռնածը, այլ յես եյի: Իմ հայրը, ծովի ասավածը, ուղարկել եր ինձ



փորձով իմանալու՝ դու բարե՞ յես թե չե: Մենք այժմ գիտենք, վոր դու մի լավ ու բարի տղա յես, վոր յեր-բեք խստասիրտ չես կարող լինել, և ահա յես յեկել եմ քո յետեից: Յեթե կուզես, յեկ ամուսնացիր ինձ հետ ու հազար տարով բախտավոր ապրենք կապույտ ծովի

հատակին, վիշապների ապարանքում: Եստեղ թիակն առավ Ուրաշիման, մյուս թիակն առավ ծովի թաղավորի աղջիկն ու յերկար թիավարում էյին, մինչև հասան ծովի տակի վիշապների ապարանքը, ուր բնակվում էր ծովի աստվածն ու իշխում էր վիշապների, կրիաների ու ձկների վրա:

Ա՛խ, ի՞նչ լավ էրենտեղ: Պատերը մարջանից էյին, ծառերի տերևները— դմբուխտից, պտուղները— հակինթից, ձկների թեփերը— արծաթից, վիշապների տղա-ները*) մաքուր վոսկուց: Ու եղամենը պատկանում էյին Ուրաշիմային, վորովհետև նա ծովի աստծու փեսան էր, չքնաղ Սեն-Նինիի ամուսինն էր: Ու ապրում էյին անհող, յերթանիկ: Միայն հայրենի յերկրի ու հարապատ-ների կարոտը մտել էր Ուրաշիմայի սիրտը և դորանում էր ուրեցոր:

Անցավ յերեք տարի: Մի առավոտ էլ Ուրաշիման առավ:

— Յես չատ եմ բախտավոր եստեղ, ես հրաշալի գրախտում, քեզ հետ, իմ աննման Սեն-Նինի, բայց սրտով ուզում եմ մեր տունը գնամ, տեսնեմ վոնց են իմ անոգնական, ծերացած հերն ու մերը, իմ քույրերն ու յեղբայրները... էլ յետ վերադառնամ քեզ մոտ:

— Յես թեև հախառակ եմ քո ցանկությանը, բայց չեմ կարող ուժով բռնել, յերբ ուզում ես հեռանաս, — ասավ Սեն-Նինին: — Գնա՛, բայց հետդ վերցրու ես տուփը և զգուշ կաց, բաց չանես: Յեթե բաց անես, իմացիր, վոր էլ յերբե՛ք, յերբեք չես կարող վերադառնալ ինձ մոտ:

Ու մի գեղեցիկ տուփ տվեց Ուրաշիմային:

Ուրաշիման խոստացավ բաց չանի, ինչ ուզում է լինի: Ապա Սեն-Նինին մի քուն բերավ նրա վրա. մին էլ աչքը բաց արավ տեսավ իր հայրենիքի յեղբորին:

Բայց ի՞նչ էր պատահել իր բացակայությանը: Վո՞րտեղ էր իր հորական տունը: Վո՞րտեղ էր իրենց գյուղը: Ծիչտ է, սարերն իրենց տեղն էյին, բայց նրանց անտառները չկային: Հոսում էր և իրենց տան

*) Տառ—պոչ:

մոտի վտակը, սակայն էլ առաջվա նման կանայք լվացք չեյին անում նրա մեջ: Զարմանալի յեր թվում, թե մի վորևէ յերեք տարում ինչպես էյին եղամենը եղբան փոխվել:

Ես մտածումների մեջ Ուրաշիման պատահեց մի ան-ցորդ ծերունու:

— Սա խնդրում եմ, բարի ծերունի, ո՞ւր ե փոխա-դրվել Ուրաշիմայի տունը, վոր կանգնած էր եստեղ: Ծերունին հիշեց ու պատմեց, թե մանուկ ժամանակ լսել է, վոր հարյուրավոր տարիներ առաջ մի Ուրաշիմա յե յեղել. գնացել է ծովը ձուկ վորսալու ու էլ յետ չի յեղել: Նրա ծնողները, յեղբայրները, նրանց վորդիքն ու թոռները վաղո՞ւց—վաղուց են մեռել, իսկ տունը ավերվել, անցել հողի հետ գնացել:

Եստեղ գլխի ընկավ Ուրաշիման, վոր ծովի աստծու ապարանքը մարջանի պատերով, հակինթի պտուղներով ու վոսկետուտն վիշապներով կախաղական աշխարհքն է յեղել, վոր ենտեղ անցկացրած մի ուրը հավասար է յեղել յերկրի մի տարուն:

Ու հեռացավ իր հայրենիքից, քանի վոր մեռել էյին իր բոլոր հարազատները և մինչև անգամ իրեն ծանոթ ծառերն էլ չկային:

Սաստիկ ցանկացավ վերադառնալ նորից ծովի հա-տակը, չնաչխարհիկ Սեն-Նինիի մոտ, բայց ի՞նչպես, ի՞նչ ճանապարհով: Վոչ մի կերպով չկարողացավ գտնի և չկար մեկը, վոր առաջնորդեր նրան կրկին ենտեղ— կախաղական աշխարհքը:

Կանգնեց միտք արավ Ուրաշիման:

— Յեթե բաց անեմ ես տուփը, վոր տվել է ինձ Սեն-Նինին, գուցե թե գտնեմ ճանապարհը, վոր տանում է նրա մոտ:

Ու բաց արավ տուփը: Յեվ ի՞նչ դուրս յեկավ մի-ջից: Մի կտոր թեթև ամպիկ, վոր վերացավ, ծուխ դարձավ գնաց դեպի օվկիանոս, կախաղական աշ-խարհքի կողմը: Ուրաշիման նոր հիշեց կնոջ խոսքը, վոր բաց չպիտի աներ տուփը, աղերսեց, վոր կանգնի,

վաղեց յետեվից, ցավից լաց յեղաւ. բոլորն իզուր. ամալիկը ցնդեց, ցրվեց, վերացաւ, հեռացաւ ամբարձ, անհետ:

Ու ետեղ ել տեղնուտեղը հատաւ Ուրաշիմայի աւժը, ել վոչ վաղել կարողացաւ, վոչ կանչել: Հանկարծ մաղերը ճերմակեցին ձյունի պես, յերեսը կնճռոտեց, մեջքը կտրացաւ զառամ ծերունու մեջքի նման, չաւնչը կտրեց ու մեռած ընկաւ ծովափին:

Են՝դճ Ուրաշիմա. չիմացաւ, վոր ջահելության գողտնիքն եր ամփոփւած կախարդական տուիի մեջ, վոր տվել եր իրեն հավերժահարս զեղեցիկ Սեն-Նինին: Թեթեամիտ անհամբերությունից բաց արաւ ու կորցրեց: Զրկվեց ջահել, յերկար կյանքից ու յերջանիկ տալբելու վայելքից: Բայց նա սիրող, ազնիւ սիրտ տուներ ու գնաց իր սրտի՛ յետեից: Եղ ե պատճառը, վոր մինչև որո ել ճապոնիայում չեն մոռացել Ուրաշիմային ու նրա խորհրդավոր պատմությունը: Յեւ շատ տեղերում պաշտում են նրան նրա համար, վոր նաւնիսկ ուստիածների անհող աշխարհքում, Սեն-Նինիի սիրտ մեջ ել չմոռացաւ իր հարազատներին ու իր աղքատ ծննդավայրը:

(1910)

ԼԵԶՈՒՆ ԿՏՐԱԾ ԾԻՏԻԿԸ

(Ճապոնական)

Վաղուց պատահած բան ե... Ասում են՝ մի չափ պառավ ուզում եր ճերմակեղենը սալայի: մի քիչ սալայե գնում ամանի մեջ:

Հարևանի ձեռնասովոր ծիտը գնում ե սալան կտցահարում: Պառավը վրա յե հասնում:

— Ա՛յ դու անպի՛տան արարած... — բարկանում ե վրեն ու բռնում ե լեզուն կտրում:

Ծիտիկը թռչում ե գնում: Հարևանուհին լսում ե, վոր իր սիրելի ծիտիկի լեզուն կտրել են: Սաստիկ վրշտանում ե, վեր ե կենում իր մարդու հետ ճամբա յե բռնում, սար ու ձոր ընկնում, վոր իմանա, թե վո՞ր կողմը թռավ իր ծիտիկը:


Մարդ ու կնիկ գնում են ձեն տալի:

— Վո՞րտեղ ե լեզուն կտրած ծիտիկը: Լեզուն կտրած ծիտիկը վո՞րտեղ ե կենում:

Վերջապես գտնում են ծիտիկի տունը:

Ծիտիկը վոր տեսնում ե՝ իր հին տերն ու տիրուհին իրեն տես են յեկել, ուրախանում, աշխարհքով մին ե լինում: Ներս ե հրավիրում, չնորհակալություն ե անում առաջվան տեսած լավությունների համար ու պատիվ ե տալիս: Սեղան ե թաց անում. ենքան ձուկն ու գինի յե լցնում, վոր ել զատարկ տեղ չի մնում: Կինը, վոր գիքն ու թոռներն ել վոտի վրա՝ ծառայում են:

Վերջը ինքն ել բաժակը մի կողմն ե չալտում ու վեր կենում ծառայարի պար գալի: Ու եսպես ուրախ



անց են կացնում ամբողջ ուրը: Իրիկունը վոր ընկնում է՝ պառավները խոսք են բաց անում, թե իրենց տուն գնալու ժամանակն է: Նստեղ ծիտիկը գնում է յերկու ուռի զամբյուղ ե բերում, ասում է.

— Ա՛յ ես յերկու զամբյուղը, մինը թեթև, մյուսը ծանր. վորը կուգեք՝ ընտրեցեք ձեզ համար:

Հյուրերը, թե՛

— Մենք պառավ մարդիկ ենք, բեր մեզ թեթև տուր, ավելի լավ է՝ հեշտ կտանենք. ծանրն ի՞նչ ենք անում:

Առնում են թեթև զամբյուղն ու վերադառնում տուն:

Տանը ասում են.

— Բեր մի բաց անենք, տեսնենք ի՞նչ կա մեջը:

Բաց են անում—ի՞նչ են տեսնում, ել վոսկի, ել արծաթ, ել անդին քար, ել թուփերով մետաքսեղեն... Նն տեսակ մի բան, վոր իրենց որում իսկի մտքներով ել չեն անցկացրել: Քանի հանում են, ենքան ավելի չատ է մնում մեջը:

Անվե՛րջ—անհատնում:

Ու միանգամից հարստանում են:

Նս բանը լսում է ծիտիկի լեզուն կտրող չար պառավը: Նախանձում է հարևանների բախտին: Հարց ու փորձ է անում, թե վորտեղ է կենում լեզուն կտրած ծիտիկը. տեղն ու ճամփեն սովորում է:

— Յնա ել կերթամ ծիտիկի մոտ,—ասում է ու ճամփա ընկնում: Գնում է գտնում: Դարձյալ ծիտիկը յերկու զամբյուղ ե բերում ու ասում.

— Ահա յերկու զամբյուղ, մինը ծանր, մյուսը թեթև. վորն ուզում ես, ջոկի քեզ համար:

Պառավը միտք է անում, վոր միջի գանձն ինչքան չատ լինի, զամբյուղն ել ենքան ծանր կլինի. ասում է—բեր ծանր զամբյուղը տուր ինձ:

Շարտիւմ է ծանր զամբյուղն ու ճամփա ընկնում դեպի տուն:

Զամբյուղը քարի պես ծանր է լինում—տանելը դժար: Տնքալով տանում է:

Ծիտիկները յետևից մտիկ են անում ու ծիծաղում: Տանում է տուն: Տանում է, աղահալ—աղահալ բաց է անում:

Բաց է անում թե չե, աղմուկով դուրս են թափում ալյանդակ—անձոռնի չար վողիկները—տեղն աւ տեղը իսկողում չար պառավին:

(1910)

ՄԱՐԴԱԿԵՐԻ ԱՂՋԻԿՆ ՈՒ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ՎԱՐՊԵՏԸ

(Խառական)

Լինում ե չի լինում, լինում ե մի թագավոր. ունենում ե յերկու վորդի, մինը բարի, մյուսը չար: Բարին լինում ե մեծն ու ժառանգը: Ես բանը դուր չի գալի չար յեղբորը, մտածում ե՝ մի կերպով ազատվի բարի յեղբորից, վոր ժամանակին ինքը թագավոր դառնա: Մի որ ասում ե.

— Արի՛ գնանք վորսի:

Թե՛ գնանք:

Գնում են: Մտնում են անտառի խորքը: Վոր մըտնում են անտառի խորքը, թիկնապահները յետ են ընկնում ու յերկու յեղբայր մնում են մենակ: Վոր մնում են մենակ՝ ես չար յեղբայրը սուրը հանում ե, խրում ե բարի յեղբոր թիկունքը ու, կարծելով թե արդեն սպանեց, վերադառնում ե պալատը, իբրե թե բան չի պատահել: Հերը հարցնում ե.

— Յեղբայրդ ի՞նչ յեղավ:

— Ա՛խ, — ասում ե, — ձերդ մեծություն, ենպես մի գժբախտություն պատահեց, վոր... գազանները յեղբորս կերան...

Խեղճ հերը աղի արտասուք ե թափում, լաց ու սուգ ե անում, դարդից հիվանդանում ե մեռնում, ու չար վորդին տեղը նստում ե թագավոր:

Սրանց ետեղ թողնենք, գնանք հիմի տեսնենք՝ ինչ յեղավ բարի յեղբայրը:



Բարի յեղբայրն անտառի խորքում ուշքի յե գալի, «կսում ե թառանչել ու ոգնություն կանչել:

— Ոգնեցե՛ք, ո՛վ ասավա՞ծ սիրողներ... ոգնեցե՛ք...

Ճյուղերը ջարդոտելով, խոտերը խշխշացնելով, մինը առաջ է գալի, տարածում է յերկար ճանկերով մազոտ ձեռքերը, վեր է քաշում թաղավորի տղին ու հետը փշիչոտ լեզվով մեջքի արյունը լիզում է, հետը խուլ մրմռում։

— Ո՛Ք, ի՛նչ համով ե... ո՛Ք, ի՛նչ համով ե...

Ես խոպոտ ձենից թաղավորի տղի հոգին մարում ե։ «Վա՛յ ինձ,— ասում ե,— մարդակերի ճանկն եմ ընկել»։ Դու մի՛ ասիլ, ճշմարիտ վոր, ընկած ե լինում մարդակերի ճանկը։

Մարդակերը սրան մի բոխչի նման կռնատակն է առնում ու ճամփա ընկնում դեպի իր քարանձավը։

Լոք-լոք անելով մի քանի բոպեյում հասնում է քարանձավի դուռն ու ծեծում։

— Դուռը բաց արա, աղջիկ ջան, դուռը բաց արա, տես քեզ համար ինչ եմ բերել...

Աղջիկը վոր դուռը բաց է անում, ու տեսնում է ուշաթափված ու արյունաթաթախ* թաղավորի տղին, խղճահարվում է, ասում է.

— Եստեղ ի՞նչ լավ բան կա վոր... Չես տեսնո՞ւմ արդեն մեռած ե... թող տանեմ դեն գցեմ...

— Ասենք ճշմարիտ ես ասում, արդեն դիակ ե... Տար դեն գցիր, իսկ յես ելի կզնամ վորոնելու,— ասում է հրեշ հերն ու ձեռաց անհետանում։

— Ո՛ւ... ո՛ւ...— միայն մոնչյունն է լսվում հեռ-վից։

Հերը հեռանում է թե չե՝ աղջիկը վազում է, պահարանից մի դեղ է հանում, բերում է քսում տղի վերքին։

Տղեն աչքերը բաց է անում, ասում է.

— Ո՛Ք, ես ի՛նչ շատ եմ քնել։

Ու տեսնելով կողքին կանգնած աղջկանը՝ հարցնում է.

— Դու ո՞վ ես, սիրուն աղջիկ։

— Յես մարդակերի աղջիկն եմ, բայց ինձանից մի՛ վախենար... իսկ դու ո՞վ ես...

Թաղավորի տղեն նոր հիշում ե ու գլխի յե ընկնում թե վորտեղ է ընկել, հայտնում է, թե ինքն ով է, պատմում է իր գլխին յեկածը ու խնդրում է աղջկանը, վոր թողնի՛ իրեն՝ գնա իր հոր մոտ։

— Քեզ ու քու հորը սարեր ու ձորեր են բաժանում, — պատասխանում է աղջիկը։— Չես կարող նրան հասնես։ Ճամփին կրոնի իմ հերը, յերկու պատառ կանի, կուտի քեզ։ Եստեղից անվորձանք դուրս գալու—գնալու համար պետք է ունենալ իմ հոր մատի կախարդական մատանին։ Յես՝ նրա մատից, քնած ժամանակը կհանեմ են կախարդական մատանին, միայն մի պայմանով, վոր խոսք տաս միասին փախչենք ու ամուսնանանք ինձ հետ։

Թաղավորի տղեն խոսք է տալիս։

Ես ժամանակ լսվում է մարդակերի մոնչյունը,— ո՛ւ... ո՛ւ...

Վորձը անհաջող եր անցել, բարկացած վերադառնում եր տուն։

— Շուտ արա, մտի՛ր ես քունջը, թագնավի՛ր, թե չե, վոր տեսավ քեզ կուտի...

Աղջիկը թաղցնում է տղին ու միամիտ նստում։ Հերը ներս է մտնում թե չե, հոտոտում է ու կանչում.

— Ո՛Ք, ի՛նչ լավ մարդահոտ է գալի...

— Եդ քեզ է եղպես թվում,— ասում է աղջիկը։— Մարդն եստեղ ո՞վ է տվել... հոգնած ես, արի մի լավ հաց կեր ու պառկի քնի։

Մարդակերը մըթմըթալով մի խորոված յեղան կիսան է կրանում ու մեկնվում։ Աղջկանն ասում է.

— Արի գլուխս քորի, վոր քնեմ։

Աղջիկը մի ձեռքով գլուխը քորում է, մյուսով կամաց աշխատում է մատանիքը մատիցը հանի։

— Եդ ի՞նչ ես անում, աղջիկ ջան,— կես-քուն, կես արթուն մրմռում է մարդակերը։

Աղջիկը վախեցած, ձեռը յետ է քաշում ու եդորը ել չի համարձակվում մատանին հանելու փորձ անել։

Իրիկնապաշին մարդակերը նորից փորսի յե դնում,
մնում են աղջիկն ու թագավորի տղեն:

Աղջիկը քունջից դուռ ե բերում թագավորի տղին
ու նրա խնդիրքով ման ե ածում իրենց քենյակները:

Մի դուռն ե բաց անում—տղեն դարձանքից մնում
ե ապշած: Մի մեծ դահլիճ ե՝ լիքն ու դարդարված
փոսկով ու արծաթով, թանկագին քարերով ու մար-
մարով, բայց հատակին ետեղ—ենեղ թափված կրծո-
ւած փոսկորներ:

— Ես ի՞նչ փոսկորներ են,—հարցնում ե թագավորի
տղեն:

— Վոսկորներ են ելի,—պատասխանում ե մարդակե-
րի աղջիկն ու մյուս դուռն ե բաց անում: Մանում են
հետևյալ սենյակը: Առաջինից ավելի փարթամ ու չքեղ:
Պատերը մաքուր արծաթից, փոսկուց ու մարգարտից,
հրաշալի կահ—կարասիքով, փոսկենկար—փոսկեխառնջ
մետաքսի վարագույրներով դարդարած: Բայց ետեղ
ե թափված են նույն կրծած փոսկորները...

— Ես ի՞նչ փոսկորներ են,—դարձյալ հարցնում ե
թագավորի տղեն:

— Դրանց ի՞նչ ես նայում,—կրկին խոսքը կառն
ե գցում մարդակերի աղջիկը,—դու փոսկե պատերին
մտիկ տուր, արծաթե ու մարգարտե ձեղուններին*)
նայիր...

Ու առաջ ե դնում:

Թագավորի տղեն գլխի յե ընկնում, վոր եղ վոս-
կորները են խեղճ մարդկանց վոսկորներն են, վորանց
թափել եր մարդակերը:

— Իսկ ես ի՞նչ սենյակ ե,—ցույց ե անալիս թագա-
վորի տղեն մի դռան վրա, վորի յերկու կողմը հսկում
ե յին յերկու վիշապներ:

— Ես իմ հոր դանձարանն ե: Ես սենյակը չի կա-
րելի մտնել տոտնց իմ հոր մատի կախարդական մա-

*) Ձեղուն — արտասուք:

տանիքի: Թե չե՝ խելույն կպատառտան ես պահապան
վիշապները:

— Ո՛ր... Ո՛ր...

Լավում ե մարդակերի ահակի վոտնոցը:

— Շուտ արա, շո՛ւտ, թագնվի՛ր, ու չունչդ չհանես
մին ել մինչե իրիկուն, հրեա գալիս ե,—ասում ե աղ-
ջիկն ու կրկին թագցնում թագավորի տղին: Իսկ մար-
դակերն արդեն դուռը ծեծում ե:

— Բաց արա դուռը, աղջիկս, բաց արա, քեզ հա-
մար տես ի՞նչ եմ բերել:

Ապա թե թագավորի տղեն իր թագնված տե-
ղից լսում ե զոտոցի ու լացի ձեն, հետն ել բերանի
ծլլախց:

Մարդակերն իր ընթրիքն անում ե ու սրտեղում ե
քնի, աղջկան պատվիրում ե գլուխը քորի:

Աղջիկն ես անգամ կարողանում ե հոր մատից հա-
նել կախարդական մատանին, ապա տղի հետ միասին
տոնում են մարդակերի դանձերն ու փախչում: Շատ են
դնում թե քիչ, շատն ու քիչը աստված գիտի, հասնում
են մի աշխարհք: Ես աշխարհքում թագավորի տղեն ի-
մանում ե, վոր իր հերը մեռել ե, ու նրա տեղը իր
ախպերն ե նստել թագավոր: Ինչպես խոսք եր տվել,
ենպես ել ամուսնանում ե մարդակերի աղջկա հետ ու
մնում ե ես աշխարհքում:

Շատ են կենում թե քիչ, մի քանի յերեկոս յեն ու-
նենում, շատ սիրով ել ապրում են իրար հետ, միայն
կինը յերբեմն գիշերները անհետանում ե ու ծեքին ե վե-
րադառնում չրթունքները արշունոտ: Հարցնում ե, թե՛

— Եղ ի՞նչ ես կերել:

Թե՛

— Վոչինչ, հավ ու դառն եմ կերել, բերանս ել դեռ
հայտ չեմ սրբել...

Մի անգամ ել ենպես ե պատահում, վոր ես թագա-
վորի տղեն յերեկոսների հետ դնում ե ուրիշ տեղ, մա-
թին ընկնում ե ու մնում են ճանապարհին: Գիշերվամի
ժամանակը մի դադան գողունի մոտենում ե ու հար-
ձակվում ե քնած յերեկոսների վրա: Թագավորի տղին

սուրը հաճում է գարկում. գաղանը մարդու ձենով ճշում է.

— Վա՛յ, մեռա՛... .

Ձենն էլ ծանոթ ձեն: Մտիկ տա՝ ի՞նչ տեսնի—սրով գարկած, առաջն ընկած իր կինը: Գիշերով դուրս է յեկել վորս վորոնելու, մթնում չի նկատել—քիչ է մնացել իր յերեսաներին ուտի:

— Ահա թե ինչ կնշանակի լինել մարդակերի աղջիկ... .

Ու մնում է խեղճ մարդը շվարած, հուսահատված կանգնած մեջտեղը: Մի կողմը ընկած արնաշաղախ կինը, մյուս կողմը ծվատած յերեսաները:

Ձգիտի ինչ անի, ինչ չանի:

Ես դուրսից մեջ հանկարծ լսում ե քնքույշ ձեն.

— Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ յես լաց լինում, թաղա-վորի վորդի:

Գլուխը վեր է քաշում, տեսնում է առաջը կանգնած ճերմակ շորերով մի գեղեցկուհի:

— Մի՛խ,—ասում է,—անմահն աղջիկ, ոգնիր ինձ, տեսնում ե՞ս կինս, յերեսաներս:

— Յես կարող եմ քեզ ոգնել միայն մի պայմանով,—խոսում է գեղեցկուհին:

— Ինչ վոր ասես՝ հոժար եմ:

— Լավ, գե լսիր: Յես գիտեմ՝ ինչ է բերել քո գլուխը յեղբայրդ, գիտեմ՝ ինչպես ես ընկել մարդակերի ճանկը, վոնց ես նրանից աղատվել ու ամուսնացել նրա աղջկա հետ, մի խոսքով՝ ամենը գիտեմ... Բայց յեթե ուզում ես յես քեզ ոգնեմ — պետք է ներես յեղբորդ... .

— Յեղբորդ... . Ո՛հ, յերբեք: Ես բոլորի պատճառը նա յե... . Ձեմ կարող, չեմ կարող նրան ներել... .

— Ձեա կարող... . Դեհ, մնաս բարյալ:

Խոժոռում է գեղեցկուհին ու շուտ է գալի, վոր հեռանա:

— Կա՛յ, կանգնի՛ր, կներեմ,— կանչում է աղեն, միայն թե՛ ոգնիր:

— Դե լսի՛ր,—խոսում է վորդին:—Քո կինը արդեն մեռավ, յերեսաներդ ել ամենքը պիտի մեռնեն, վորովհետեւ մարդու միս են կերել, բացի ամենափոքրը, ծծկերը:

Կախարդական մատանու ուժով ամեն գիշեր քեզ քնեցնում եր քո կինը ու ինքը գնում մարդի վորսի, ու վորսի մսից ուտեցնում եր և իր յերեսաներին, ինչպես գիշակեր թռչունը կամ գաղանը իր արած վորսից ուտեցնում է իր ձագերին: Միայն ծծկերն է, վոր մարդու միս չի կերել, և միայն նա կապրի ու կթաղալորի ապագայում, յեթե միայն դու ներես յեղբորդ... .

— Ներում եմ,—ասում է թաղավորի աղեն:

— Դե հիմի նայիր,—չարունակում է հրաշալի կինը: Մեկնում է ձեռքի կախարդական գավազանը, իրար յետևից թեթև դարկում է յերեսաներին, ու իրար յետևից յերեսաները դառնում են հյուսնի գործիքներ, թափվում են գետնին թակ, ունելիք, սղոց, դուր, իսկ ամենափոքրը, ծծկերը — չաղափ*):

Ահից ու դարմանքից տեղն ու տեղը քար է կտրում խեղճ հերը:

— Մի՛ վախենար ու մի՛ հուսահատվիր,—խոսում է վորդին:—Ես որվանից դու կլինես վարպետ—հյուսն, իսկ սրանք—քո գործիքները: Յերեկը քեզ համար գործիքներ կլինեն, իսկ գիշերը հենց կախարդական մատանի-քով դարկես—կդառնան քո յերեսաները:

Այժմ հավաքիր ես գործիքները, գնա քո յեղբոր քաղաքը, մի համեստ խանութ վարձիր ու մեջն աշխատիր, ինչպես հասարակ աշխատավոր, լրանվոր հյուսն: Նրանից հետո ինչ վոր կպատահի, հետո կտեսնես:

Ասում է ու չքանում չքնաղ կինը:

Թաղավորի աղեն հենց ենտեղ թաղում է իր կնոջը, հետն առնում է թակը, ունելիքը, սղոցը, դուրն ու չաղափը, վոր չի խմանում իր գավակները: Են թե գործիքները, ու ճանապարհ է ընկնում դեպի չար յեղբոր քաղաքը:

*) Շաղափ — բուրդու:

Չար յեղրոր քաղաքում մի համեստ խանութ ե վար-
ձում ու աշխատում:

Շատ քիչ է վաստակում, բայց ապրում է ճոխ ու
առատ: Հարևանները զարմանում են. չեն հասկանում.
Թե ես վորտեղից ե սա եսպես հարուստ ապրում:

— Ամոթ չլինի հարցնելը, վա՛րպեա, եդքան քիչ
աշխատելով ի՞նչպես ես կարողանում եսպես լավ ապ-
րել...

Վարպետը պատասխանի փոխարեն բռնոթին ե քա-
չում ու ուսերն ե վեր քաշում:

Արի ու սրանից բան հասկացիր:

Մի խոսքով՝ վոչվոք չի հասկանում սրա գաղա-
նիքն, ու անունը դնում են «Խորհրդավոր վարպետ»:

Մին ել տեսար Խորհրդավոր վարպետը մտադործի
խանութ մտավ:

— Ի՞նչ արժե սուկին:

— Սուկին քեզ համար չի, վարպետ. սուկին թա-
ղավորի համար ե:

— Ինչո՞ւ. իմ փորն ել թաղավորի փորի նման
փոր չի՞, ինչ ե...

Մարդիկ ծիծաղում են.

— Կեցցե՛ս, վարպե՛տ, կեցցե՛ս, լավ առիր:

Գնում ե ձկնավաճառի մոտ:

— Պավյարն ի՞նչ արժե:

— Պավյարը քեզ համար չի, վարպետ, խավյարը
թաղավորի համար ենք պահել:

— Վա՛հ, ինչո՞ւ. իմ ախորժակն ել թաղավորի ա-
խորժակի պես ախորժակ չի՞, ինչ ե...

Չարմացած հարց ե տալիս Խորհրդավոր վարպե-
տը, ու նորից խալխը ծիծաղում են.

— Կեցցե՛ս, վա՛րպետ, կեցցե՛ս, ճիշտ նկատեցիր:

Ու ինչ ել վեր առնում ե՝ մսեղեն, ձկնեղեն, կանա-
չեղեն, ընդհանր թե մրգեղեն—առնում ե առատ—առատ
ու ամենաբնուրդը:

Ես ու ես հարցնում են.

— Եդ ո՞վ պետք ե ուտի, վա՛րպետ:

— Յես ու իմ յերեխեքը:

— Շա՞տ յերեխա ունես:

— Ինչպես չի. Թալը, Սդոցը, Ունելիքը, Շաղաիր:
Խալխը ծիծաղում են.

— Անուշ լինի քեզ ու յերեխաներիդ, վա՛րպետ:

— Շնորհակալ եմ:

Վերագառնում ե խանութ, զամբյուղով ուտելիքը
դնում անկյունում ու սկսում բանել մինչև իրիկուն:

— Հապա ճաշդ, ի՞նչպես պետք ե լինի, վա՛րպետ:

— Ճաշս եստեղ խոհանոցում կեփեն:

Գիշերվա կեսին խանութը կողպում ե, դուռը յեա-
նափակ ե տալի, ու խելույն ներսը ափսեները շրթակ-
չրթիկում են, բաժակները զրնդզրնդում են, զանակ
պատառաքողները շրթիչրթիկում, կարծես թե բաղմա-
թիվ ծառաներ խանութում մեծ սեղան են բաց անում:
Ապա թե լսում ե ուրախ ծափ ու ծիծաղը, մեջ ընդ
մեջ ել Խորհրդավոր վարպետի սաստող ձենը.

— Սդո՛ց, կարգի՛ն...

— Թա՛կ, զգու՛շ, չիշը չկոտրես...

— Խելոք կացե՛ք, հարութ՛յուն մի՛ անեք...

Հարևանները լսում են ու աղչում: Առավոտը
ցամաքած գալիս են:

— Հը՞, վարպետ, իրիկունը լա՞վ բնթրեցիր...
Բայց ձեր յերեխեքը բավական հարութ՛յուն են անում...

— Չե՛, եսքան ել չար չեն, տեսե՛ք, ի՞նչ խելոք
չարված են:

Պատասխանում ե վարպետը ու ցույց ե տալիս
սրտի կողմը. խի պաշարեղենի զամբյուղը, ճշմա-
րիտ վոր, դատարկ ե:

Հարևանները գլուխները տրաքեցնում են, հաղար
ու մի յենթադրութ՛յուններ են անում՝ վոչ մի կերպ չեն
կարողանում իմանալ Խորհրդավոր վարպետի գաղա-
նիքը:

Ցերեկով մտիկ են անում—մի իեղև մարդ ե, մի
փոքրիկ նեղ խանութում, գլուխը կախ իր բանի վրա:
Վո՞րտեղից ե սա եսքան փոյ աշխատում, եսքան ուտե-

լիք առնում, և ո՞ւր ե գնում ես ամենը... Ի՞նչ ե նշա-
նակում ես արժուկն ու շրջակայքը, վոր լավում ե
գիշերները:

Մտածում են՝ դռանը մի ծակ չինեն, վոր ենտեղից
գուցե մի բան տեսնեն. են ել չեն կարողանում: Դու-
ռը, վոր թվում եր թե փտած տախտակից ե— վոչ մի
բուրդու մոտ չի թողնում:

Զարմացած հարցնում են.

— Վարպետ, քո դռուն ինչից ե չինված:

— Պանրից:

— Հապա ինչու չես ուտում:

— Յես պանիր չեմ սիրում:

— Ե՛, վարպետ, ինչո՞ւ յես մեղ խարում:

Իսկ վարպետը իր բռնոթին ե քաշում ու խնդում:

Վերջապես խարարը գնում ե հասնում իրեն— թու-
գավորին:

Թաղավորը բարկանում ե:

— Հա՛, վո՞նց թե իմ փորն ել թաղավորի փորի
նման փոր ե...

Հրամայում ե, վոր մթերամթանները ամենուխտ
մթերքները տան հանդուգն վարպետին: Ու թաղավորի
հրամանը դուրս յեկած որից վարպետը պետք ե են տե-
սակ միս ուտեր, վոր չունն ել չեր ուտիլ, հոտած ձու-
կը, վորդնած պանիր ու փտած պտուղներ:

— Հը՛, գոհ ե՞ս թե չե, վարպետ, — ծաղրելով
հարցնում են վաճառողները:

— Յես գոհ եմ, բայց ենպեսները կան, վոր իսկի
չեն կարող գոհ լինել...

— Ինչո՞ւ:

— Ենդուր:

Ստում ե, բռնոթին քաշում ու գնում իր խանու-
թը:

Դու մի ասիլ՝ հենց եղ որն ել թաղավորը իր մե-
ծամեծներին հրավիրած ե լինում հանդիսավոր ճաշ-
կերույթի:

Սեղանին միս են բերում— լեչի հոտ ե գալի, պա-
նիր են դնում— ենքան վորդնած, վոր իրեն— իրեն սե-
ղանի վրա ման ե գալի, պտուղները ճիճվառ, թթու,
կանաչեղենը փտած...

Ես ի՞նչ բան ե, գոռում ե թաղավորը.

— Եստեղ կանչեցեք եղ լիբը խոհարարին:

Խեղճ խոհարը յերդում— կրակն ե ընկնում, թե ամե-
նաբնտիր մթերքն ե առել, սրան— նրան վկա յե բերում,
թե բոլոր ուտելիքները հրաշալի բուրում եյին խոհա-
նոցում...

Ինչ պետք ե անեն: Թաղավորն ել, իր մեծամեծ-
ներն ել չոր հացը ջրումը թրջում են ուտում, վոր սո-
վամահ չլինեն:

— Կա թե չկա ես Խորհրդավոր վարպետի սարքած
խաղն ե, վոր խաղում ե մեր գլխին, — կարծիք ե
հայտնում թաղավորի խորհրդականներից մինը: — Կա-
ցեք, յես մի գնամ դրա մոտ:

Շորերը փոխում ե, հին, մաշված շորեր ե հագնում
ու գնում:

— Բարի աջողում, վարպետ:

— Ասածու բարին քեզ:

— Վարպետ, մի նեղություն քաշի՝ ես սնդուկը նո-
րոգի:

— Շատ լավ: Եստեղ դիր:

— Քեզ մոտ ես ի՞նչ լավ կերակուրի հոտ ե գալի,
վարպետ:

— Հա՛, յերեվի են անկյունի ճաշի կրճոնքի*)
հոտն ե...

Խորհրդականը են կողմն ե նայում, տեսնում ե
հիանալի ձուկն ու խորովուն— բերնի ջուրը վաղում ե:

— Ես հիանալի ուտելիքները վո՞րտեղ եք առել,
վարպետ:

— Ենտեղ, վորտեղ ծախում են— չուկայում:

*) Կրճոնք — ուտելիքի ֆաբրիկ:

— Բայց ինչքան ինձ հայտնի չէ, թագավորը հրամայել է, վոր քեզ վրա լավ ուտելիք չծախեն, ես ի՞նչ պես եմ, վոր...

Վարպետը պատասխանի փոխարեն բռնոթի չէ քաշում, ուսերը վեր է քաշում ու քթի տակին ծիծաղում:

Նստեղից խորհրդականը վազում է թագավորի մոտ: Թագավորի մոտ մեծամեծները խորհրդի չեն հավաքվում, խորհուրդ են անում ու վճռում են, վոր Խորհրդավոր վարպետը անպատճառ մի կախարչ է վոր կա, ու նրանից պետք է խլել իր գործիքները—թակը, սղոցը, ունելիքը, դուրն ու շաղավիւր, մի խոսքով՝ ամենը, ինչ վոր ունի:

Ինչպես վոր վճռում են, ենպես էլ անում են:

Խորհրդավոր վարպետի գործիքները բերում են թագավորի ննջարանին կից սենյակում փակում: Փակում են, բանալին տալիս թագավորին: Թագավորն էլ, տպահովության համար, բանալին կախում է իր դուռուց:

Մին էլ կես գիշերին ես փակած սենյակում մի աղմուկ. թակը թակում է, թրխի հա թրխի, ունելիքը քաշում է, չրխի հա չրխի, սղոցը սղոցում է—խըռ հա խըռ, շաղավիւր ծախում է—վրո հա վրո, ապա թե միասին ճչում են.—հաց ենք ուզում, հաց ենք ուզում...

Թագավորը վազում է, դուռը բաց է անում, տեսնում է բոլոր գործիքները հանգիստ իրենց տեղերն են—կած են: Բայց դուռը փակում է թե չե—նորից սկսվում է լացն ու ճիչը.

— Հաց ենք ուզում, հաց ենք ուզում...

Ես թագավորն ամբողջ գիշերը չի կարողանում աչքը կապնի: Յերկրորդ գիշերը—ավելի թունդ:

Խորհրդականներն ասում Ան.—Թագավորն ապրած կենա, բեր ուտելիքներ դնենք եզ սենյակում, տեսնենք ինչ դուրս կգա:—Բերում են ուտելիքներ են դնում եզ սենյակում ու էլ յեզ փակում:

Ականջ են դնում:

Ափսեները չրխիչրխում են, դանակներն ու պա-

տառաքղները չրխիչրխում, բաժակները զննում: Ծափ, ծիծաղ, ճիչ, աղմուկ: Հետո էլ մինը, թե՛

— Սղոց, դու ինձ բռնում ես:

Մյուսը, թե՛

— Շա՛ղափ, մաղերս մի՛ քաշի:

Յերրորդը, թե՛

— Դո՛ւր, ես ի՞նչ արիր. շորերիս վրա թափեցիր...

Ես թագավորն ու իր խորհրդականները դարձանք թից մնում են քարացած:

Հրաշք է, վոր հրաշք: Ել ի՞նչ խոսք, վոր Խորհրդավոր վարպետը կախարչ է:

Թագավորը հրամայում է, վոր վարպետին իր մաս բերեն: Բերում են: Ասում է.

— Վա՛րպետ, ես ի՞նչ բան է, վոր քո գործիքներն ուտում են ու խոսում են: Ես ի՞նչ կնշանակի...

Վարպետը պատասխանի փոխարեն բռնոթի չէ քաշում ու ուսերը վեր քաշում: Յեվ վոչ մի խոսք:

Թագավորը կատաղում է: Ասում է.

— Յեթե իսկույն ես պաղանիք իմ առջև բաց չես անիլ—զլուխդ կթռչի:

— Ի՞նչ պաղանիք, ձերդ մեծություն. իմ յերեխաներն են, ահա բոլոր պաղանիքը:

— Հոգա ինչո՞ւ քո յերեխաներն ես տեսակ տարտրինակ կերպարանք են առել, վոր իսկի նման չի մեր կերպարանքին:

— Նրա համար, վոր ինձ ոգնեն, հաց աշխատենք, ապրուստ անենք:

Թագավորը հավատում է վարպետի խոսքին ու հրամայում է, վոր վերադարձնեն գործիքները: Միայն թե հետո էլ պատվիրում է.

— Բայց զգույշ կաց, վարպետ, մյուս անգամ էլ չառես իմ փորն էլ ենպես փոր է, ինչպես թագավորի փորը է կամ թե՛ իմ ախորժակն էլ ենպես ախորժակ է, ինչպես թագավորինը: Թե չե հետո չառ կզղջաս:

Վարպետը գնում է, նորից սկսում է իր գործը։
Բայց հետզհետե հաճախորդները պակասում են։ Մար-
դիկ վախենում են նրա հետ գործ ունենալուց։ Իդուր է
նա փողոցները թափառում ու ամեն մի հինգ քայլի
վրա կանչում։—Ահա վարպետը... վարպետը յեկավ,
ո՞ւմ է շինելու բան հարկավոր... ահա վարպե՛տը...

Ել վոչվոք գործ չի տալիս։

Ես ու են հարցնում են։

— Վարպետ, հիմի վո՞նց ես ապրելու։

Վարպետը պատասխանի փոխարեն ուսերը թաթ-
վում է ու բռնոթի յե քաշում։

Ես թաղավորն ունենում եմեց յերեխա. յերեք աղ-
ջիկ, յերեք աղա, մինը մյուսից առողջ ու սիրուն։ Ես
յերեխեքն իրար յետեից հիվանդանում են ու մեռնում։

Բժիշկ, հեքիմ, դեղ, ճար—վոչ մի բան չի ողնում։
Իրար յետեից մեռնում են։

Մեծ աղջիկը մեռնում է։ Տանում են թաղելու։
Մին ել տեսնում են՝ Խորհրդավոր վարպետն ել են
կողմից ե գալի՝ ուսին մի դադաղ։

— Եդ ո՞վ է մեռել ձեր տանը, վարպետ։

— Իմ Թակն է մեռել, իմ Թակը... տանում եմ
թաղեմ։

Մյուս անգամ թաղավորի աղին են տանում թա-
ղելու, դարձյալ հանդիպում է վարպետը՝ ուսին մի
ուրիշ դադաղ։

— Եդ ո՞վ է մեռել, վարպետ։

— Իմ դուրն է մեռել. տանում եմ թաղեմ։

Եսպես կարգով, քանի թաղավորի յերեխաներից
մեկին տանում են թաղելու, վարպետն ել թաղում է
իր գործիքներից մեկն ու մեկը։

Թաղավորի խորհրդականը չառ խորամանկ մարդ
է լինում։ Թաղավորին ասում է.

— Ձերդ մեծություն, տեսնում եք, վոր ամեն
անգամ ձեր յերեխաները թաղելիս վարպետն ել իր
գործիքներից մեկը կամ մյուսն է թաղում։ Սրա մեջ
մի խորհուրդ կա։ Յեվ յեթե չեք ուղում, վոր ձեր բո-

լոր յերեխաները մեռնեն,— կանչեցեք Խորհրդավոր
վարպետին ու մի ձեռով նրա սիրտը առեք։

Թաղավորին ել մենակ մի աղջիկ է լինում մնա-
ցած, ամենափոքրը, են ել վերջին շնչումն է լինում։

Ճարահատված կանչում է վարպետին, աղաչանք,
սլաղատանք է անում։

— Վարպետ, ասածու սիրուն, յերկնքի սիրուն,
քո յերեխանց դերեղմանի սիրուն, յնդրում եմ, աղա-
տիք աղջկանս։

Վարպետն ել, թե՛

— Ձերդ մեծություն, խնդրում եմ աղատեք իմ
Շաղափին։

Թաղավորը, թե՛

— Ի՞նչպես աղատեմ։

Վարպետը, թե՛

— Դրա համար միայն մի ճար ու ճանապարհ կա.
ամուսնացնել ես յերկուսին իրար հետ։

Թաղավորն աղջկա սիրուց հոժարում է, բայց
մտքումն ասում է՝ թող մի ես փորձանքն անց կենա,
յես հետո սրան ցույց կտամ։

Սրա վրա թաղավորի աղջիկը լավանում է։

Թաղավորը վարպետին ասում է.

— Ո՞ւր է քո Շաղափը, դե բեր պսակենք իմ
աղջկա հետ։

Վարպետն ասում է.

— Թաղավորն ասրած կենա. իմ Շաղափը առայժմ
յերեկով մնալու յե իսկական չաղափ է միայն գիշեր-
ներն է տղա դառնալու, ինչպես վոր նախասահման-
ված է նրա համար։

— Եդ առայժմ, իսկ հետո՞

— Հետոն ել հետո կտեսնենք, ինչ վոր աստված
կկամենա։

— Ուրեմն առայժմ ամուսնության մուսին չի կա-
րող խոսք լինել։

— Ձեր մեծությունը ինչպես վոր կկամենա։

Եսպես մի քանի տարի անց է կենում։ Թաղավորը

չառ ե ուրախանում, փոր իր աղջկա ու Շաղափի ամուսնությունը միշտ հետաձգվում է: Յեւ սիրում է վարպետին ձեռք առնել:

— Հը՞, փո՞նց ես, խնամի վարպետ. տխար բացի չաղափից ել քեզ դորձիք չի մնացել. փո՞նց ես աշխատում, փո՞նց ես ապրում: Ինքզ լավ ապրուստի սովոր, մանավանդ փորդ ել նույն փորն ե ինչ փոր...

— Ի՞նչ ապրուստ, ի՞նչ աշխատանք, ձերդ մեծություն. ամբողջ ուրը նստած աղիս հեքյաթ եմ պատմում: Հիմի ես եմ չինել իմ քան ու գործը: Յերեկ ել մի շառ լավը պատմեցի: Արդյոք ձեր մեծությունը հեքյաթ չի՞ սիրում, չե՞ր կամենա մի լավը պատմեմ լսեր:

— Ինչու չե. համեցիք, պատմիր, կլսեմ:

— Ձերդ մեծություն, ժուկով-ժամանակով յեղել ե չի յեղել, յեղել ե ձեզ նման մի թաղափոր, ունեցել ե յերկու փորդի, մինը բարի, մյուսը չար: Բարին յեղել ե մեծը ու դահի ժառանգը ե չոր մահից հետո նա պիտի նստեր թաղափոր: Ես բանը դյուր չի գալի չար յեղորդը...

Թաղափորն ետեղ մտայում ե ու վարպետի խոսքը կարում ե.

— Վարպետ, քո հեքյաթը ինձ դյուր չի գալի:

Դեռ լսեցեք, ձերդ մեծություն. ամենահետաքրքրական մասը հիմի կսկսվի: Հա՛, են եյի ասում. չար յեղորդը դյուր չի գալի, փոր չոր մահից հետո բարին պիտի թաղափորի. իր մեջը վճռում ե դորձը շառ տա ենպես, ինչպես ինքն ե ուզում: Ու մի ուր յեղորդն ասում ե.—Արի գնանք փորսի: Գնում են: Անտառի խորքում թիկնապահները յեռ ին մնում: Վոր թիկնապահները յեռ են մնում՝ սա գուրը հանում ե, իրում բարի յեղորդ թիկունքը...

Թաղափորն ետեղ ապելի յե տակն ու վրա լինում ու վարպետի վրա գոռում ե.

— Յեռ ասի, փոր քո հեքյաթը ինձ դյուր չի գալի, վարպետ...

— Մի քիչ ել լսեցեք, հիմի ամենահետաքրքրական տեղը կգա, ձերդ մեծություն, մի քիչ ել լսեցեք: Չար յեղբայրը փոր դարկում ե, կարծում ե, թե բարի յեղորդն սպանեց, խոտով-խաչամով ծածկում ե ու գնում: Գնում ե տանը հորն ասում, թե յեղբորս անատում դազանները կերան...

Ետեղ թաղափորը տեղիցը վեր ե թռչում, աղաղակում.

— Ուրեմն դու իմ յեղբա՞յրն ես... Ների՛ր, ների՛ր ինձ, յեղբայրս...

Աղաղակում ե ու դողդոցալով բնկնում Խորհրդավոր վարպետի փոռները: Ասում ե.

— Ինձ մի՛ պատժի, յեղբայրս, ինձ մի պատժի... Ահա քո թաղը, ա՛ռ, նստիր մեր հոր գահին ու թաղափորի:

— Վոչ յեռ պետք ե թաղափորեմ, փոչ դու,— պատասխանում ե Խորհրդավոր վարպետը.— իմ Շաղափը կլինի թաղափոր, քո աղջիկը թաղուհի: Մեր ժամանակն անց ե կացել. այժմ նրանցն ե ժամանակն ու նրանք պիտի թաղափորեն:

Բերում են վարպետին հագցնում են իր առաջիկ իշխանական զգեստները ու գնում են Շաղափի յետևից: Բայց Շաղափն ել չաղափ չեր արդեն. կերպարանափոխվել, դարձել էր մի սիրուն պատանի:

Ետեղ յերկու յեղբայր գրկում են իրար, իրար ներում ու սիրում, իսկ Շաղափն ու թաղափորի դեղեկ-կուհի աղջիկը ամուսնանում են ու թաղափորում ու բախում:

(1913)

ՎՈՐՈՏ ՔԱԳԱՎՈՐԸ

(Խապական)

Ժամանակով մի թագավոր է լինում, ենքան ուժեղ, ենքան բարձր ձեն է ունենում, վոր հազար վերաւի վրա լավում է: Մեկի հետ, հենց ենպես, զրույց անեւ լիս՝ հեռվից կարծում են, թե վորոտն է թնդում: Դրա համար ել անունը դնում են Վորոտ թագավոր:

Պալատականներն ու նախարարները, վորոնք ամեն որ խոսելիս են լինում թագավորի հետ, կարճ ժամանակում ամենքն ել խլանում են: Յեւ կատարյալ պատիժ ու պատուհաս է դառնում յերկրի համար: Ժողովուրդը ամեն կողմից դալիս է արգարադատություն գտնելու, գալիս են խեղճերը ենքան կանչում, ենքան դողում, վոր ուժից ընկնում են, բայց իսկ պալատականներն ու նախարարները չեն լսում: Տերության մեջ գործերն առաջ չեն գնում: Մարդիկ տրտնջում են, և վոչվոք չի համարձակվում թագավորին ասի.

— Ձերդ մեծություն, դուք խլացրել եք բոլոր նախարարներին:

Թագավորին թվում եր, թե ինքն ել ենպես է խոսում, ինչպես մյուսները: Յեւ յերբ խլացած նախարարները մինչև անգամ իրեն ձենն ել չեն լսում, բարկանում է, քացով ու բռնունջով ենպես է դուրս քշում պալատից, վոր գլուխկոնձի տալով սանդուխներէից գլորվում են:

Նախարարները քանի վոր նոր են լինում, առաջին որերը գործերը լավ են գնում: Միայն թագավորը նկատում է,

տում է, վոր իր խոսելու ժամանակ նրանք ձեռքերով իրենց ականջները փակում են:

— Ի՞նչ եք անում, — հարցնում է նեղացած. — յես գորի պես հո չե՞մ գոռում:

— Ո՛ր, վո՛չ, ձերդ մեծություն, — պատասխանում են վախեցած նախարարները: — Ականջներիս... յետեւն ուռել է:

Յեւ բոլոր նոր նախարարների ականջների յետեւն ուռած է լինում: Թագավորն ել առանձնապես անհանդիստ չի լինում. գիտենում է, վոր եղ սովորական ու անփտանդ հիվանդությունն է: Միայն վերջը հրամայում է, վոր ամեն մինը, ով պատրաստվում է նախարար դառնալու, առաջուց իր ականջի ուռուցքը բժշկի:

Խեղճերը բժշկվում են պալատական բժիշկների մոտ, ամեն տեսակ դեղ ու դարման դնում են իրենց առողջ ականջներին ու, նամուսից խեղդված, սնանում ամեն ցավ ու տանջանք:

Թագավորն ել մին—մին գալիս է նրանց տեսության, իրրե հիվանդների, և առողջությունները հարցնելիս կարծելով, վոր ականջի ուռուցքից լավ չեն լսիլ, ձենը ավելի յե բարձրացնում.

— Հե՛յ, վո՞նց ե՞ք... վո՞նց...

Ձենից պատերն ու սճորքը դողում են:

— Լավ ենք, ձերդ մեծություն, շատ լավ ենք:

Թագավորը յերեւակայում է, վոր իր թագավորության մեջ գործերը հիանալի յեն գնում: Վոչվոք նրան չի ներկայանում, վոչվոք մոտը գանդատի չի գալիս, ամենքն ել խլանալուց վախենում են և մի կերպ համբերում են:

Բայց մի անգամ մի դյուղացի յե գալիս պալատը ու ներկայանում թագավորին: Թագավորը տեսնում է սրա յերկու ականջն ել խցան է կոխած—գարմանում է:

— Եղ ի՞նչ կնշանակի, ինչո՞ւ յես ականջներդ խցան կոխել. — հարցնում է գյուղացուն:

— Ի՞նչ անեմ, թագավորն ասրած կենա, — պատասխանում է գյուղացին. — դու ենպես բարձր ձեն ունես,

վոր խոսելիս քո ձենիցը մարդիկ խլանում են: Ամպի նման վորոտում ես, նրա համար ել անուշդ դրեւ են վորոտ թագաւոր:

Թագաւորը սկզբում սաստիկ վրդովում է: Հավատալը չի գալիս, թե ինքը կարող եր եղ տեսակ դարհուրելի ձեն ունենալ: Բայց, յերբ ամեն բան պարզվում է իր համար ու համոզվում է, բարկանում է իր նախաբարների վրա, հրամայում է նրանց ամենքի ձեռն ու վրան ել կապտուել ու բանտարկել, իսկ գյուղացուն չի նստում է իր գլխավոր ու միակ խորհրդատուն: Միայն իրավունք է տալիս, վոր ականջները խցանով փակի:

Դու մի՛ ասիլ՝ թագաւորը վաղուց ցանկություն է ունեցել ստուսնանա ուշատ ել խնամախոսներ եղրկել ես ու են թագաւորի աղջկանն ուղերու, բայց ամենքն ել մերժել են: Հիմի նոր է գլխի բնկնում, թե ինչո՞ւ յեն մերժել իրեն.— վախեցել են, թե խլանան:

Վճռում է հայտարարել իր տերության մեջ, թե ո՞վ է կարող իրեն բժշկի, և տեղն ու տեղը ինչքան ձենու՝ մը ձեն կա, գոռում է.

— Հե՛յ, ո՞վ է կարող ինձ բժշկի. ով բժշկի՝ իր քաջովը մին վոսկի կտամ:

Ձենը վորոտալով ու դրմդրմբալով դնում է հասնում ամեն կողմի վրա հազար վերստ: Ես դղրդոցից ամպերը ժաժ են դալի, տալն ու վրա յեն լինում, և յերկուշաբաթ շարունակ ամբողջ տերության վրա անձրև է դալի: Ամենահեռավոր անկյուններում ել իմանում են թաւի: Վճենահեռավոր անկյուններում ել իմանում են անց դաւորի հայտարարությունը, բայց ամիսներ են անց կենում, ու վոչ մի բժիշկ, վոչ մի հեքիմ չի յերևում:

Խեղճ թագաւորն սկսում է հուսահատուիլ. հենց եղ միջոցին հեռու աշխարհքից հայտնվում է մի կախարդ, ներկայանում է թագաւորին, ասում է:

— Թագաւորն ապրած կենա, մի կախարդական մաղ ունես գլխիդ, ես կախարդական մազն ե քո հիւանդության պատճառը:

Թագաւորն ուրախանում, աշխարհքովը մին է լինում: Ի՞նչ մեծ բան է, ասում է իր մտքումը, դու-

ժըս վեր կանեմ—պրծանք դնաց: Ես լավ եր ես հեքիմին ել մի բան կտամ կդնա: Ել ինչո՞ւ յեմ իրեն քաջովը մին վոսկի տալի. մի բան վոր առաջուց ցավիս գաղտնիքը հայտնեց»:

Հենց եստեղ հեքիմն ավելացնում է.

— Միայն մի պայման կա, վոր պետք է իմանաս, թագաւոր: Պետք է մի անգամից գտնել ու պոկել են կախարդված մաղը: Յեթե մին սխալվեցիր — նրանից յետե ել ճար ու հնար չի լինի քո ցավին: Յեւ միակ մարդը, վոր կարող է եղ անել—Անլեզու աղջիկն է:

— Իսկ նա վո՞րտեղ է,— հարցնում է թագաւորը:

— Նա ապրում է Աճուճ Պաճուճների աշխարհքում: Նրան ասում են Անլեզու, վորովհետեւ ճշմարիտ ել—լեզու չունի: Ես օրվան օրից ուղիղ մի տարի, մի ամիս, ու մի օր անց՝ դու նրան կտեսնես խտեղ, յեթե քո տված խոսքը կատարես, իմ քաջովը մին վոսկի տաս ինձ, քո խորհրդականին ել, իրրև դեսպան, ինձ հետ միասին ուղարկես Անլեզու աղջկա մոտ:

Թագաւորը թեև իր մեջը շատ է ցավում, բայց ի՞նչ աներ. ճար չուներ, անծանոթ հեքիմին քաջովը մին վոսկի յետալիս ու իր խորհրդականի հետ միասին ճանապարհ է դնում դեպի Աճուճ Պաճուճների յերկիրը—Անլեզու աղջկա մոտ:

Ես դեպքից մի քանի ամիս անց է կենում, թագաւորը մին ել տեսնում է իր խորհրդականը յետ յեկավ,— հապա կախարդ հեքիմն ու Անլեզու աղջիկն ո՞ւր են:— Թե՛ կախարդ հեքիմը վոտով—գլխով անհետացավ, կորավ, իսկ Անլեզու աղջկանից տեղեկություն չունեմ: Ասում են՝ դնացել է իրեն համար արհեստական լեզու շինել տա, ո՞ւր, ո՞ւմ մոտ կամ քանի ժամանակով, վոչ վոք չգիտի: Միայն կախարդը անհետանալիս եսպես կանչեց.

— Վորոնեցեք—կդանեք: Սրա մեջն է թագաւորի բախտաւորությունը:

— Լա՛վ, մենք ել կվորոնենք,— ասում է թագաւորը:

Յեւ առանց գործը յետ գցելու դուրս ե գալիս իբ պալատի պատշգամբն ու նորից բարձր գոռում:

— Հե՛յ, ո՞վ կարա գտնի Անլեզու աղջկանը: Ո՞վ գտնի, իր քաշովը մին վոսկի կտա՛մ:

Կարծես թե ճիշտ վոր ամպ ե վորոտում: Չենը մինչև վորտեղ հասնում ե՝ ամեն տեղ ել շաբաթներով անձրեւի ե գալիս:

Սրանից հետո ել մի քանի ամիս անց ե կենում, դարձյալ Անլեզու աղջկանից վոչ մի լուր:

Թագավորն սկսում ե հուսահատվել: Յեւ փոխանակ լուռ իրեն համար նստելու, ամբողջ ուրը ամպի նման վորոտում ե ու վորոտում: Հպատակների մի մասի ա- կանջները ծանրանում են, մյուս մասի բոլորովին խլա- նում ե: Յեւ վորովհետև վոմանք վատ են լսում, վո- մանք բոլորովին չեն լսում, սրանից հազար ու մի թյու- րիմացություններ են առաջ գալիս, իսկ թյուրիմացու- թյուններից զանազան տուր ու դմիոցներ են պատա- հում: Վոստիկանությունը միանգամայն դլուխը կոր- ցնում ե, հա՛յ դես ե վազում, հա՛յ դեն ե վազում: Յեւ վորովհետև, թագավորին մոտ լինելով, տերության մեջ ամենախուլ մարդիկն ել վոստիկաններն եյին, ճշմար- տությունը չեն կարողանում լսել, միշտ մեղավորների կողմն են պահում ու արդարներին բռնում, բանտերն են լցնում:

Թագավորը քանի գոռում ե՝

— Սրդարադատ յեղե՛ք. արդարադատ յեղե՛ք, — են- քան ավելի ու ավելի յեն նրանք խլանում ու ավելի մեծ անիրավություններ են անում:

Մի անգամ թագավորի պալատի առջև կանգ ե առնում մի ջահել անծանոթ ու գոռում ե.

— Չենի դեղ եմ ծախո՛ւմ, ձենի դեղ եմ ծախո՛ւմ: Ո՞վ ձեն ունի — կկտրի, ո՞վ չունի — կգտնի: Ա՛յ ձենի դե՛ղ, ա՛յ լավ ձենի դե՛ղ...

Վորոտ թագավորը վոր լսում ե, կարծում ե, թե

Ջրեն ծաղրում են, հրամայում ե բռնեն մոտը բերեն են լրբին:

Յերբ բռնում են, ներս են բերում պալատը՝ բար- կացած վորոտում ե.

— Եդ ի՞նչ եյիր գոռում՝ դու իմ պալատի առջև: Ի՞նչ ձենի դեղ ես ծախում... Յո՛ւյց տուր հապա՝ տեսնեմ վո՞րն ե քո ձենի դեղը...

— Ահա իմ ձենի դեղը, թագավորն ապրած կենա: Համեցեք փորձիր, տե՛ս՝ ճշմարիտ եմ ասում թե չե:

Ասում ե անծանոթն ու իր արկղից մի տեսակ մանր հարբեր ե հանում, դնում թագավորի սեղանի վրա:

Թագավորը նայում ե սրան, վոտից-գլուխ չափում: Գորերին ե նայում — աղա յե, բայց դեմքը, շարժմունքը, ձենն ու քնքշությունը միանգամայն կանացի յեն:

— Անունդ ի՞նչ ե:

— Անունս Անլեզու յե: Իհարկե, տեսնում ես, թա՛- գավոր, վոր մի քիչ սխալ անուն են տվել ինձ: Գուցե ավելի պատշաճ եր, վոր յերկար լեզվանի կոչեյին. բայց լեզածը յեղած ե...

Յեւ առանց քաշվելու, վոր ինքը գտնվում ե վոչ թե փողոցում, այլ թագավորի պալատում, սկսում ե կո- կորդովը մին գոռալ.

— Ա՛յ ձենի դե՛ղ, լա՛վ ձենի դե՛ղ. ո՞վ ունի — կկտրի, ո՞վ չունի — կգտնի...

Թագավորի ծիծաղը պրծնում ե:

— Հապա, — ասում ե, — եդ քո ձենի դեղը բե՛ր, մի փորձեմ տեսնեմ:

Առնում ե մինը կուլ տալի, ե, ո՞վ զարմանք, ձենի կեսը կորչում ե: Սրանից յետը թե կարող ես, դե բռնի Վորոտ թագավորին: Վոնց վոր սոված հա՛վը կուտին վրա ընկնի, վրա յե ընկնում ես հարբերին ու կուլ ե տալիս իրար յետևից: Կուլ ե տալիս վերջացնում: Յետ ե գառնում վոր մի բան ասի, — չորս կողմի կանգնածնե- րը ձենը չեն լսում, ենքան կտրած ե լինում: Չեն կա- րողանում լսել, մինչև ականջները բերնին չեն մոտեց- նում:

Թագավորը ուրախությունից հրամայում է, վոր իր ամբողջ տերության մեջ տոն կատարեն, խաղեր ու հրավառություններ սարքեն, ուտելիքներ ու գինի բաժանեն ժողովրդին:

— Իսկ դու ի՞նչ ես ուզում, հրաշալի անձանոթ, — գիմում է թագավորը իրեն բժշկող յերիտասարդին: — Ինչ վոր ուզես, պետք է ստանաս, թեկուզ թագավորությանս կեմը:

Յես եմ ուզում, վոր քու պալատում մի սենյակ տաս ինձ և հաց ու ջուր, վոր ասլրեմ վոչով ել ինձ մոտ չմտնի, նույնիսկ դու, թագավոր: Ահա իմ բոլոր ուղածը:

— Եղբա՞նը, — զարմանում է թագավորը: — Շատ քիչ է: Բայց թո՛ղ եղպես լինի, ինչպես ուզում ես:

Սրանից հետո յեւ թագավորի ձեռք ենթան է նվագում, վոր պալատականները չեն կարողանում լսել, մանավանդ վոր խուլ են լինում: Հետզհետե նրանց ահանջներն եւ բժշկվում են, և ամենքն եւ սկսում են խոսել ենպես, ինչպես թագավորն է խոսում — հազիվ լսելի չշուկով, և կարճ միջոցում ես տերության մեջ չշուկը դառնում է խոսելու ընդունված ձևը:

Մենակ թագավորի պալատում ապրող անձանոթներ, վոր հեշտ եր լսում թագավորին ու մենակ նա յեր, վոր չեր չնջում, չեր իջեցնում իր հնչուն ձեռք խոսելու ժամանակ, ում հետ եւ լիներ:

Ժողովուրդը սկսում է հետաքրքրվել՝ թե արդյոք նրա լեզուն եւ իրենց լեզվի նման լեզու յե, թե չե: Ես հետաքրքրությունը մեծանում է մանավանդ մի դեպքից հետո, յերբ մինը կատակով անձանոթին խնդրում է, թե՝

— Հապա մի քու լեզուն ցո՛ւյց տուր, տեսնենք ինչից է շինած:

Ես ասելն է լինում: Անձանոթը բարկանում է, լաց է լինում, փախչում է ու մտնում իր սենյակը, փակվում ու հայտնում, թե եւ յերբեք դուրս չի գալ, վոր մյուս անգամ եւ չասեն, թե՝ լեզուդ ցո՛ւյց տուր:

Ես գեպքի մասին տեղեկացնում են նախարարին: Նախարարը դնում է անձանոթի մոտ, ասում է.

— Ինչո՞ւ յես բարկանում, ինչու յես եղպես անում: Ուզում են լեզուդ տեսնեն, դու յեւ հանի՛ր ցույց տուր. ահա՛ խաղես:

Ու լեզուն հանում է:

Անձանոթը ակամայից կրկնում է նույն բանը. հանկարծ լեզուն բերանից վեր է ընկնում, կտոր-կտոր լինում, ջարդվում, վոնց վոր թե կավից լիներ չինած:

Նախարարը զարմանքից մի առժամանակ մնում է տեղը քար կտրած: Ապա ուշքի գալով ձեռքով զարկում է ճակատին ու գլխապատառ վազում է թագավորի մոտ:

— Թագավորն ապրած կենա, բա չե՞ս ասիլ, վոր Անլեզու աղջկը հայտնվել է: Հենց եսոր լրանում է մի տարին, մի ամիսն ու մի օրը, վոր գուշակեց կախարդ հեքիմը, նա հայտնվել է:

Պալատը տակն ու վրա յե լինում: Մարդիկ խոնվում են Անլեզու աղջկա սենյակի դռան առջև, ուզում են անպատճառ ներս մտնեն ու տեսնեն իրենց աչքով: Զուր է թագավորը կանչում.


— Զի կարելի մտնել նրա մոտ: Մինչև անգամ յես եւ չեմ կարող, խոսք եմ տվել...

Բայց հիմի եւ ո՞վ եր կարողանում լսել թագավորի ձեռք: Տեսնում են՝ վոնց է շրթունքները շարժում, ձեռին-վոտին անում, իսկ թե ինչ է ասում — չեն իմանում:

Եստեղ հանկարծ դռները բացվում են, ու ամենքը մտնում են հիացած: Սենյակի մեջտեղը, մարդարտակար ու գոհարադարդ զգեստով, ճոխ մազերն արձակ, վոսկու դեղի վրա հանդիստ թինկը տված մի ֆահել գեղեցկուհի, հովհարը ձեռին իրեն հով է անում:

Վոսկու դեղը նույն մեծության, ինչ վոր թագավորը տվել եր հեքիմին:

Թագավորն ընկնում է գեղեցկուհու վոտքերը ու գլուխը խոնարհում ծնկներին: Գեղեցկուհին թագավորի գլխից հանում է կախարդական մաղը, վոր հանելուն պես երվում է մատների մեջ:



— Շնորհակալ եմ, անուշ աղջիկ: Շնորհակալ եմ, իմ թագուհի,—կանչում է թագավորը մի ենտեսակ գյուրեկան ձենով, վոր մինչև են ուրը վռչով չեք լսած կյանքում:

— Յես ել եմ շնորհակալ, Վորոտ թագավոր, իմ ա՛նգին ամուսին,— պատասխանում է աղջիկը:

Յեվ հենց վոր թագավորը բժշկվում է, նույն ժապե-
յին ընկնում է և են կախարդանքը, վոր գեղեցիկ աղ-
ջկանը զրկել էր լեզվից: Յեվ ամեն բան կատարվում է
ենպես, ինչպես գուշակված է լինում Անլեզու աղջկանը
արհեստական լեզու տվող կախարդը:

Յստեղ մեջ է մտնում թագավորի խորհրդական
—յերբեմնի գյուղացին: Ասում է.

— Ահա է՛ս եր ձեր ճակատագիրը: Դուք պետք է
ամուսիններ դառնայիք ու սիրով ապրեյիք: Այժմ ժա-
մանակն է, վոր յես հեռանամ...

— Ձե՛... ինչո՞ւ... ինչո՞ւ...— կանչում է թա-
գավորը:

Բայց չնայելով թագավորի կանչելուն, խորհրդա-
կանը դառնում է մի պստիկ կայտառ թզուկ, թռչում
ընկնում է վոսկու դեղի մեջն ու անհետանում:

Բանից դուրս է գալիս, վոր նա ել կախարդների
ողնականն է յեղել:

Ուրախ ու գոհ Վորոտ թագավորն ու գեղեցիկ աղ-
ջիկը մեծ հարսանիք են սարքում, ամուսնանում են
իրար հետ: Թագավորը ներում է իր նախարարներին
ու վերադարձնում է իրենց նախկին պաշտոնները:

Ամենքն ել ուրախանում են, մանավանդ ել խլանա-
լու վտանգ չկար: Թեև մարդիկ չչնջում էյին.

— Մի՛ վախենաք, նրանք միշտ ել խուլ կմնան:
Կասրենք, կտեսնենք:

(1913)

4/1043p. Гюлькезага

ԳԵՂԵՑԿՈՒՇԻ ՎԱՍԻԼԻՍԱՆ

(Ռուսական)

Լինում ե չի լինում մի վաճառական. տասներկու տարվա պսակված ե լինում, ունենում ե միայն մի աղջիկ, անունը Գեղեցկուհի Վասիլիսա: Վասիլիսայի ութ տարին լրացած—մերը մեռնում ե: Մեռնելիս աղջկանը կանչում ե, ասում ե.

— Լսի՛ր, Վասիլիսա, միտդ պահիր ու կատարիր իմ վերջին խոսքը: Ահա ես մեռնում եմ ու իմ մայրական որհնության հետ ես տիկնիկն եմ թողնում քեզ: Միշտ մոտդ ու հետդ կպահես ես տիկնիկը, վոչ վոքեցույց չես տալ, իսկ մի ցավ կամ վիշտ ունեցած ժամանակդ կերակուր կտաս իրեն, կկերակրես ու խորհուրդ կհարցնես: Կուտի ու քեզ կասի թե ինչ ճար ու հնար անես քո ցավին:

Ասում ե, աղջկանը համբուրում ու մեռնում:

Կնոջ մահից հետո, ինչպես սովորություն ե, վաճառականը սուգ ե պահում, հետո սկսում ե մտածել, վոր նորից ամուսնանա: Ու ամուսնանում ե մի այրի կնոջ հետ: Ես այրին ել ինքը հասակն առած կին ե լինում, համարյա թե Վասիլիսային հասակակից ել յերկու աղջիկ ե ունենում:

Վասիլիսան իրենց տեղի առաջին գեղեցկուհին ե լինում: Խորթ մերն ու իր աղջիկները նախանձում են նրա գեղեցկության վրա ու շատ բանի դնելով չարչարում են, վոր աշխատանքից նիհարի, արևից ու քամուց սևանա: Մի խոսքով՝ որ չեն տալի:

Վասիլիսան ես ամենը տանում ե անտրտունջ ու քնդհակառակը, որն որի վրա լցվում, լավանում ե. այն ինչ խորթ մերն ու իր աղջիկները իրենց ներսի չարությունից հավում են, մաշվում ու նիհարում, թեև ամբողջ որը ձեռները ծալած, աղջիկ-պարոնների նման տանը նստած են լինում:

Վոչ վոք ել չի իմանում սրա գաղտնիքը: Չեն իմանում, թե ես բոլորը Վասիլիսայի մոր թողած տիկնիկն ե անում:

Բաժին կտային, Վասիլիսան ամենալավ պատանք կպահեր իր տիկնիկի համար: Իրիկունը յերբ ամենքը կպառկեյին քնելու, նա իր նկուղում կփակվեր ու տիկնիկի հետ կխոսեր.

— Տիկնիկ ջան, ա՛ռ, ա՛նուշ արա, իմ սև դարդին ա՛կանջ արա:
Հորս ոջախումը ապրում եմ յես
Միշտ անխնդում ու լուռ եսպես:
Ինձ աշխարհքից դուրս ե անում:
Իմ խորթ մերը խաթուն-խանում—
Ասա՛, հո՛գիս, ես ցավի դեմ
Յես ի՞նչ անեմ, յես վո՞նց անեմ:

Տիկնիկը կուտեր, խորհուրդներ կտար, կըմխիթարեր, առավոտն ել նրա բան ու գործն ել ինքը կաներ: Վասիլիսան իրեն համար դինջ ու հանգիստ կնստեր ծառերի չվաքներում, ծաղիկ կքաղեր, ու մին ել են կտեսներ, վոր իր մարմերը քաղհանած են, բանջարեղենը ջրած, ջուրը բերած, կրակն արած:

Եսպես մի քանի տարի անց ե կենում: Վասիլիսան մեծանում ե, հասնում, դառնում հարսնացու: Ամեն կողմից փեսացուները խնամախոսներ են դրկում նրան սուգելու, իսկ խորթ մոր աղջիկներին հարցնող չկա: Չար կինը ավելի յե կատաղում ու բոլոր յեկողներին մի բերան են ե պատասխանում, թե մեծերից առաջ փոքրին չեմ կարող մարդու տալ: Խնամախոսներին եսպես ճամ-

փուլ յե դնում ու բռնում Վասիլիսային ծեծում, Զար-
դում, ջիգրը նրանից ե հանում:

Մի անգամ ել ես վաճառականը առևտրական գոր-
ծերով ուրիշ աշխարհ ե գնում: Խորթ մերն ուրիշ տուն
ե փոխվում:

Իսկ ես նոր տան կողքին մի մութն անտառ ե լինում,
են անտառում ել բնակվելիս ե լինում մի կախարդ պա-
ռավ, վոր վոչ վոքի մոտ չի թողնում, մարդկանց ենպես
ե ուտում, վոնց վոր հավի ճուտեր: Խորթ մերը ամեն
մի դատարկ բանի համար շարունակ անտառն ե զրկում
իրաչքի փուչ Վասիլիսային, թե ինչե՝ Կախարդի ճան-
կըն ընկնի: Բայց տիկնիկը միշտ Վասիլիսային ճամփա
յե սովորեցնում, չի թողնում Կախարդի վորջին մոտե-
նա, ու ամեն անգամ ել Վասիլիսան վողջ առողջ վերա-
դառնում ե տուն:

Եսպեսով հասնում են աշունքը: Մի աշունքվա իրի-
կուն մերը յերեք աղջկա ձեռքն ել գործ ե տալի—են ել
դաս: Մինը պետք ե ժանյակ գործեր, մյուսը գուլպա
աներ, Վասիլիսան ել պետք ե մաներ: Ես Կախարդը
տան բոլոր ճրագները հանդցնում ե, մենակ մի մոմ ե
թողնում վառած ու ինքը պառկում ե քնի:

Աղջիկները բանում են: Բանելու ժամանակ վոր
մոմի պատրույդն երվում ե, խորթ մոր աղջիկներից
մինը մաղաչն*) առնում ե՝ իբրև թե մոմի քիթը կտրի,
ուղղի: Ուղղելու փոխարեն, իբրև թե հանկարծ, լույսը
հանդցնում ե: Դու մի՛ ասիլ՝ մերն ե սովորեցրել, վոր
եղպես անի:

— Հիմի ի՞նչ անենք, — ասում են աղջիկները: — Լույս
չկա, դասներս ել կիսատ են:

— Ի՞նչ պետք ե անենք, պետք ե մինս ու մինս
գնանք Կախարդ պառավից կրակ բերենք:

— Ինձ իմ ձեռի ասեղներն ել են լույս տալիս.
կրակն ի՞նչ եմ անում. ինչ ուղում ե լինի, յես չեմ

*) Մ ա գ ա շ — ունելիք:

գնալ, — ասում ե ժանյակ գործող աղջիկն ու տեղը
պինդ նստում:

— Յես ել չեմ գնալ, — են կողմից վրա յե բերում
մյուս քույրը, վոր գուլպա յեր գործում, — ինձ իմ մի-
լերի լուսն ել ե բավական:

— Դե՛ վեր կաց դու գնա, — միաձայն կանչում են
յերկուսն ել ու դուրս են հրում Վասիլիսային: Գնա՛
Կախարդ պառավից կրակ առ բեր:

Վասիլիսան վեր ե կենում գնում իր նկուղը, պա-
հած ընթրիքը դնում ե տիկնիկի առաջն ու ասում.

— Տիկնիկ ջան, ա՛ռ, ա՛նուչ արա,

Իմ սև դարդին ա՛կանջ արա:

Ինձ զրկում են կրակ բերեմ չար պառավից,

Զար պառավը կուտի հո ինձ...

Ասա, հոգի՛ս, ես ցավի դեմ

Յես ի՞նչ անեմ, յես վո՞նց անեմ:

Տիկնիկը վոր ուտում ե պրծնում, աչքերը ջուխտ
մոմի պես վառվում են, ասում ե.

— Մի՛ վախենար, Վասիլիսա, ուր վոր զրկում են
— գնա՛, միայն թե ինձ հետդ պահիր: Յես վոր հետդ
լինեմ, պառավը քեզ բան չի անիլ:

Վասիլիսան վեր ե կենում, տիկնիկը գրպանն ե
գնում ու ճամփա ընկնում դեպի մութն անտառը:
Գնում ե, բայց վոչ մեռած ե, վոչ կենդանի. հետը
գնում ե, հետը գողում: Մին ել են ե տեսնում՝ մի սիպ-
տակ ձիավոր ցոլաց ու անցավ. ինքը սիպտակ, հագինը
սիպտակ, ձիու սարքը սիպտակ, ու սկսեց ծեղել:

Մի քիչ ել գնում ե, տեսնում՝ հիմի ել մի կարմիր
ձիավոր անցավ, ինքը կարմիր, հագինը կարմիր, տա-
կինը կարմիր. եստեղ ել արևը բացվեց...

Որ ու գիշեր գնում ե Վասիլիսան, մին ել մյուս որ-
վա իրիկունը դուրս ե գալիս են բացատը, վորտեղ
կանգնած ե լինում Կախարդ պառավ խրճիթը: Խրճիթի
չորս կողմի ցանկապատը մարդկային վոսկորներից ե

• Երաժու զմիտող/կոտորի րա գ' յրախեջ տմի վա
-սկոթթ մի միտաւտի շնտովտի 'գջ գթլ րադատ րգ ոմգդ
: րգ րախիտի եմ
-սգ մմաւմ րա 'եմդադի րգ զտող/կոտորի 'րադատ գ ոմգդ
իսկզբաւ մնտովտի : րգ րախեթ զ'աւիտի մմգդսկ



...մ զդոտեմունտն
 զգլ ' թգնուդն տգլ ' մզկոտի մասոտ ' թգնգիւնում Ի զ՛ —
 . յրա՛ջ րա դվոտեմունտն մվ զ յրադստն ստգ՛
 : յգստակ իզ եգթ—գ՛ գթլ ' մոտոհ նդոմոզ
 ոգդտա յոտակ իտմի ' ոգստոտլ՛րա րա ստուզիլ ստո ջոզվ մսի՛
 : գտոտլ՛րա րա վնտիլ ստո ջոզվ գվ. : զգ մզդեհաստն չոզվ
 յգ յրա՛շտոցոց—' մնմոտլոտի զ յրա. տ—' ի. տլ ' ի. տլ —
 : վկոմիլ ստո եգթ ոգ իզիմն ջոզվ
 ոգդգիվ՛թնտ մսո թմսոլ յոլ ' վկոթ վո. տո ' յգ սգԹ —
 . յրա. տո րա ովոտա զ ովաւն մմսոլ
 ' զ յրադգստո իսնսն րա հո նվրնակ զգ ոտովլմոտի
 ...նգստոգ տի ի. ս ... ով
 —տն զ ստհտնմոյ—նմոյ ' հ. յթլ ' հ. յթլ ' հ. յթլ —

. ԵրաՅամի զգմի
 - զգմի րա յրաւատաւ տմի վրնսի ոմս՝ Երաղեղտի մղտան
 Գ ովմո՛ւ : Դալգմն մթաղչ Դալիտ Դալգճոմոչ րա Դալգն
 - մո՛ն Դալգիտը Դալիտը Դոտոյ մ՛նչոյ վնդոտ Գ ովմո՛ւ
 : ովմոն
 Գ ոման հվաւատդո Գ զիւրաւոն Դմոմոն Լվոտ վր րան
 Գ Երաւովնոյ (* մթոնոյ Գ զգ Երաւցսց մմգսոճ . Երաիճոմ
 - տո Գ Կրալնո վլգմաւնմոն վր հվաւատդո ճմոնդոչ

: Զորավար Գ
 յրազր 'վշտութի մընսկ մսի յրազրով վշ նեռմ 'Գ յրան
 -սն եմվիտոմոռոսս րա եմվտո զտոմվիտոռի : մգոյվ կգմգն գթ
 մսի եղսի 'յրախմսիտոռալ Գ ոգիոզգ զտոռոռմ րա 'յրազ
 -թմր վիտտ զգ ոհրալ մմգծնո կմգնդտն զտոռոս եվն տմի
 վտոռոռոհդտն եմոյ : մմգշմն յրազոռոս Գ տմի րվ : յրազ
 -տազշգտ մեկտ րա զեկտ 'յրախծ' մգոռան վնմտովտե
 րա Գ տվտան զոռե : զո մգվկտտ 'զո մգվնտ 'զո մծգվ
 'մսիտով Գ յո լամ'չմտն տշո իգԳ : յրազր յրազոմոռմ մն
 -գտ րա զեկտ րա զտոմվիտոռի Գ յրամոռ եմվիտոռոռո

— Երտառ — Կոնյատ քմիտունի 'միջոսք — մնալտ քիչիկոմի —
'միջոսաի քիմիտինմոթ քիմոմիսի քիմիդրմոն քիտոնմոսի
'միջիդուն քիմիտինմոթ ճողոտն հիմն քիմի Երտառ — Երտառ

— Հապա մի ետեղ բեր կրակի կողքին ինչ վոր
կա, սոված եմ, ուզում եմ հաց ուտեմ:

Վասիլիսան ցանկապատի գանգերից մարխը վառում
է ու իրար յետևից բերում ուտելիքները պառավի ա-
ռաջը շարում: Ուտելիքն էլ ենքան էլինում, վոր տասը
հոգի ուտեյին—հերիք կաներ: Ներքնատնից էլ գինի-
արաղ է բերում, ու պառավը նստում է ընթրիքի: Բո-
լորն ուտում է, խմում, Վասիլիսային թերմացքից մի
քիչ բան է թողնում ու վռչալով պառկում է քնի: Քնե-
լուց առաջ գլուխը վերեք քաշում, Վասիլիսային ասում.

— Լա՛վ մտիկ արա հա՛, առավոտը վոր յես կերթամ
—գուռը կտրես, խրճիթը կավլես, ճաշը կեփես, լվացքը
կանես, հետո կերթաս հորից մի թաղար ցորեն կհանես,
կընտրես, սև տրիճը*) կջուկես: Միայն թե տե՛ս, ամեն
բան արած լինի ենպես, ինչպես ասում եմ, թե չե
—քեզ կուտեմ:

Պատվիրում է ու քնում: Վասիլիսան պառավի
թերմացքը տանում գնում է իր տիկնիկի առջև, հետն
արտասուք է թափում, հետն ասում.

— Կե՛ր, տի՛կնիկ ջան, ա՛նուշ արա,

Իմ սև դարդին ահա՛նջ արա:

Չար պառավն իմ ուժից վեր

Տվել է ինձ ծանրը գործեր.

Անեմ—ենքան յես ուժ հունեմ,

Չանեմ—կուտի, յես ի՞նչ անեմ...

Տիկնիկը պատասխանում է.

— Մի՛ վախենար, սիրուն Վասիլիսա: Հաց կե՛ր,
աղոթի՛ր ու քնի՛ր: Լուսը կգա բարին հետը:

Առավոտը ծեղին զարթնում է Վասիլիսան, տեսնում
է պառավն արդեն յիւր է կացել, լուսամուտից դուրս է
նայում, ու գանգերի աչքերը հետզհետե մարում են:
Ահա ցոլաց և սխալալի ձիավորն ու լուսը բացվեց: Պա-

*) Տրիճ — սև որսի մի տեսակը, վորը գտնվում է հացահատիկների

առավր դուրս յելավ, սուլեց. հայտնվեցին սանդր, թա-
կոն ու վոտնավելը, ցոլաց կարմիր ձիավորը — արե՛ր
ծագեց: Ու պառավը մտավ սանդի մեջ, թռավ գնաց,
թափով թափելով, ջարդելով, փչրելով ու քշելով վոտ-
նավելով հետքը սրբելով ու ավլելով:

Վասիլիսան էլ յետ մնում է մենակ: Ման է գալիս
պառավի տունը, աչք է ածում ամեն անկյուն ու մնում
է զարմացած ամեն բանի լիության վրա: Ապա սկսում
է միտք տեսլ, թե ի՛նչպես անի, վոր պառավի պատկե-
րը կատարի: Մին էլ տեսնում է ամեն բան կատարած,
պատրաստ, ու տիկնիկը ցորնի միջի վերջին տերեփուկ-
ներն է ջուկում:

— Քեզ միայն են է մնում, վոր կերակուրն յեփես.

Վա՛սիլիսա, — ասում է տիկնիկն ու մտնում գրպանը:

Իրիկնաղեմին Վասիլիսան սեղանը բաց է անում ու
սպասում է պառավին: Սկսում է մթնափոփել: Դար-
պասի առջև սեին է տալիս սև ձիավորն ու ակնա-
կիր*) մութը կոխում է գետինը: Միայն գանգերի
աչքերն են, վոր վառվում են խավարում:

Ապա անտառի սկսում է ձոճուղ ու խաչամբ իրը-
խաղ. — պառավը գալիս է: Վասիլիսան դուրս է գալիս
գեմը:

— Հը՛, ամեն բան պատրաստ է, թե չե:

— Պատրաստ է նա՛նի ջան, արի՛ քո աչքովը տես,
— պատասխանում է Վասիլիսան:

Պառավը ներս է մտնում տեսնում է ամեն բան
պատրաստ ու կատարում է, վոր բարկանալու բան
չկա: Ասում է.

— Դե՛ լա՛վ, — ու ճչում է, — իմ ընկերներ՛ր, իմ աջ
ձեռնե՛ր, յեկեք, տարեք իմ ագուռն աղացեք:

Ես ձենի վրա յերեք ջուխտ ձեռքեր են հայտնվում,
ցորենն առնում տանում:

Պառավն ուտում է կշտան ւմ, սկսում է պառկել ու
Վասիլիսային նոր հրամաններ է տալիս. ասում է.

*) Ակնակիր — չափազանց, թանձր մութ:

— Եգուց ել են կանես, ինչ վոր եսոր արել էյիր, ու բացի դրան՝ հորիցը մի թաղար խաշխաշի սերմը կհանես ու հողը կջուկես հատիկ-հատիկ: Չեմ խմանում, թե ո՞վ է հողն ու խաշխաշն իրար խառնել:

Ասում է, յերեսը պատին անում ու խոմփացնում: Վասիլիսան գնում է դարձյալ տիկնիկին ուտեցնում ու հարցնում:

— Աղոթի՛ր ու քնիր, Վա՛սիլիսա, — պատասխանում է տիկնիկը. — լուսը կգա՝ բարին հետը: Ամեն լուսն պատրաստ կլինի վաղը:

Առավոտն ել յես իր սանդն է մտնում պառավն ու գնում, իսկ Վասիլիսան իր տիկնիկի հետ ամեն բան անում են վերջացնում: Պառավն իրիկունը վերադառնում է, մտիկ է տալիս ու կանչում.

— Իմ ա՛ջ ձեռներ, իմ ընկերներ, յեկեք, տարեք, խաշխաշից յուղ հանեցեք ինձ համար:

Իսկույն հայտնվում են յերեք ջուխտ ձեռներ. խաշխաշն առնում են տանում:

Ապա պառավը ընթրիքի յե նստում, իսկ Վասիլիսան լուռ կանգնած է առաջին:

— Ինչո՞ւ չես խոսում, — հարցնում է Կախարդը, — ենպես լուռ ու մունջ կանգնել ես, կարծես թե բերանումդ լեզու չկա:

— Չեմ համարձակվում խոսեմ, նա՛նի ջան, — պատասխանում է Վասիլիսան. — իսկ յեթե դու հրոման ես տալիս խոսելու, մի բան կհարցնեմ:

— Հարցրո՛ւ, միայն թե իմացած յեղիր — լավ չի, վոր ամեն բան իմանաս. չատ իմանաս — չուտ կպտտավես:

— Յես են եյի ուզում քեզ հարցնեմ, նա՛նի ջան, ինչ վոր աչքով տեսել եմ: Եստեղ գալիս ճամփին մի ձիավոր՝ ընկավ աչքովս — ինքը սիպտակ, հագինը սիպտակ, տակինը սպիտակ. են ո՞վ է են ձիավորը, նա՛նի ջան:

— Են իմ պայծառ որն է, — պատասխանում է Կախարդը:

— Հետո տեսա մի ուրիշ ձիավոր, ինքը կարմիր,

հագինը կարմիր, տակինը կարմիր. ե՞ն ով է:

— Են ել իմ կարմիր արեն է:

— Իսկ են սև ձիավորն ո՞վ է, վոր քո դարպասի դռանը վրա հասավ. ինքը սև, հագինը սև, տակինը սև:

— Են ել իմ մուլթը դիչերն է: Յերեքն ել իմ հաստարիմ ծառաներն են:

Վասիլիսան եստեղ հիշում է յերեք ջուխտ ձեռներն ու լուում:

— Ել ինչո՞ւ չես բան հարցնում:

— Ես ել հերիք եր, նա՛նի ջան: Չե՞ դու ինքդ տիր՝ թե վոր չատ իմանամ, չուտ կպառավեմ:

— Լավ ես անում, վոր են ես հարցնում՝ ինչ վոր դուքան ես տեսել, են չես հարցնում, ինչ վոր ներսն ես տեսել: Յես չեմ սիրում, վոր իմ տան աղբն ու կեղտը դուքս են հանում, ու չատ հետաքրքիրներին ուտում եմ: Դե կա՛ց, հիմի ել յես քեզ հարցմունք անեմ: Դու եղ ի՛նչպես ես կարողանում անել ու հասցնել եսքան դործը, վոր յես քեզ հանձնարարում եմ:

— Իմ մոր որհնանքն ինձ ուզում է, նա՛նի ջան, — պատասխանում է Վասիլիսան:

— Վո՞նց թե... դու որհնած ես, հա՛... Դե եստեղից դո՛ւքս դնա կորի դու, որհնված աղջիկ: Որհնվածներն ինձ պետք չեն եստեղ:

Ասում է ու խրճիթից դուքս քաշում, դարպասից դուքս հրում, ցանկապատի վրա վառվող աչքերով դանդերից մինն ել մի ձողի ծեր է անցկացնում ձեռը տալի, թե՛

— Ես ել քեզ կրակ՝ քո խորթ մոր ու իր աղջիկներին համար: Չե՞ վոր նրանք քեզ կրակի յեն զրկել ինձ մոտ, վոր իրենց համար կրակ տանես:

Ու վազում է Վասիլիսան, վազում է դեպի տուն: Ձեռքի գանգը ճամփին լուս է տալի մինչև ծեղը ու ծեղին հանդչում: Մյուս որն իրիկունը վերջապես տուն է հասնում: Վոր հասնում է, ուզում է ձեռքի գանգը դեն գցի, մտքումն ասում է՝ մինչև հիմի յերեսի արդեն կրակ կլինեն արած: Ես մտքի մեջ՝ մին ել հանկարծ

դանդից մի խուլ ձեն է գալի. «ինձ դեն մի՛ գցիլ, տար քո խորթ մոր մաս...»

Տանն էլ մտիկ է տալիս, տեսնում է մութը, կրակ չի յերևում, դանդը հետը ներս է տանում:

Խորթ մերն ու իր աղջիկները Վասիլիսային վոր տեսնում են՝ սկզբում ուրախ հանդիպում են, պատմում են, թե են որվանից, ինչ դու գնացել ես՝ մեր տանը դեռ կրակ չի վառվել: Մենք չենք կարողացել կրակ անենք, հարեաններից էլ ինչքան բերել ենք, տուն ենք հասցրել թե չե՝ հանգել է:

— Հիմի քո կրակը վառ կմնա, — ասում է խորթ մերը:

Գանդը ներս են տանում թե չե՝ աչքերն ենպես են նայում խորթ մորն ու իր աղջիկներին, վոր երում են, կրակում: Ուղում են թաքչեն, բայց ուր վոր թաքչում են, աչքերը ամեն տեղ հետևում ու նայում են նրանց, երում, կրակում են նրանց:

Ու լուսադեմին խորթ մերն ու իր աղջիկներն արդեն երվել, ածուխ էյին կտրել. միայն Վասիլիսային եր, վոր վռչինչ չեր յեղել:

Առավոտը Վասիլիսան դանդը հողումը թաղում է, տան դուռն ամուր կողպում, ինքը գնում է քաղաք, մի անորդի պառավի խնդրում է, վոր մոտը կենա, մինչև իրեն հերը ռտարությունից դա: Պառավը սիրով ընդունում է իր աղջկա նման, Վասիլիսան էլ նրան սիրում, պատվում է իր մոր պես, մոտը ապրում է ու սպասում: Պարապությունից վոր հոգնում է, մի որ էլ պառավին ասում է.

— Եսպես պարապ-սարապ նստելուց հոգնում եմ, նանի ջան, ինչ կլինի գնաս վոր, առնես բերես, մա-նած անեմ: Պառավը գնում է, վուչ է առնում բերում: Վասիլիսան նստում է մանած անում, ենքան բարակ ու նուրբ, վրնց վոր մազ: Մանածն անում է պրծնում, հիմի որեաք է գործի: Բայց են տեսակ տորք չի գըտնվում, վոր են մանածին դա, վռչով էլ չի կարողա-

նում չինի: Վասիլիսան էլ յեա իր տիկնիկին է խրնդ-բում:

Տիկնիկն ասում է.

— Գնա՛ ինձ համար մի հին տորք բեր ու մի մա-քուք, մին էլ մի քիչ ձիու ձար*), յեա քեզ համար ամեն բան չինեմ:

Վասիլիսան գնում է գանում, ինչ վոր հարկավոր է, տալիս է տիկնիկին, ինքը քնում: Առավոտը վեր է կենում, տեսնում՝ տիկնիկը մի հիանալի տորք է չի-նել:

Վասիլիսան կտավը հինում է, նստում գործում ու ձմեռվա վերջը արդեն պատրաստ է լինում: Մի կտավ, վոր ասեղի ծակովն անց կկենար: Գարունը կտավը ձերմակացնում են, ու Վասիլիսան պառավին ասում է.

— Նանի ջան, տար ես կտավը ծախի, փողը բեր — քեզ լինի:

Պառավը կտավին մտիկ է անում՝ մնում է բե-րանը բաց: Ասում է.

— Աղջիկ ջան, ես կտավը թագավորին վաճել կտալ է: Արի տանեմ պալատը՝ տեսնեմ:

Ես կտավն առնում է պառավը, գնում թագավորի պալատի մոտերքը պտըտվում: Թագավորը նկատում է, վոր մի պառավ իր պալատի մոտերքը պտըտվում է, ասում է.

— Ի՞նչ էս ուղում, ա՛յ նանի:

Պառավը, թե՛ թագավորն ապրած կենա, յեա քեզ վաճել մի են տեսակ ապրանք եմ բերել, վոր ուղում եմ դու տեսնես:

Թագավորը հրամայում է պառավին ներս բերեն: Պառավին վոր ներս են բերում, թագավորը կտավը տեսնում է՝ եստեղ էլ սրա բերանն է մնում բաց: Ասում է.

— Ի՞նչ է սրա գինը, ա՛յ նանի: Թե՛ — սրան գին

*) Ձար — ձիու պոչի մազ:

չունի, թագավորն ապրած կենա, քեզ նվեր եմ բերել:
Թագավորը չնորհակալուեթյուն ե անում, ինքն ել
իբ կողմից պառավին ե նվերներ տալիս ու արձակում:

Ուզում են ես կտավիցը թագավորի համար շապիկ
կարեն, բերում են ձևում, բայց ենպես կարող չեն դըս-
նում, վոր կարի: Ման են գալիս ման, վերջը թագա-
վորն ել յետ են պառավին ե կանչում, թե՝

— Այ նանի, վոնց վոր ես կտավը գործել ես,
ենպես ել պետք ե կարես, թե չե ուրիշ կարող չկա:
Պառավն ասում ե.—Թագավորն ապրած կենա, վոչ
յես եմ մանել ու գործել ես կտավը, վոչ ել յես կարող
եմ կարել: Մի վորդեգրուհի ունեմ տանը, ես նրա ձեռ-
քի գործն ե:

— Լավ, վորդեգրուհիդ լինի: Տար տուր նրան
թող նա կարի:

Պառավը վերադառնում ե տուն, Վասիլիսային
պատմում ինչ վոր պատահել եր:

— Յես ել գիտեյի, վոր ես գործը վերջը ինձ եր
հասնելու,—ասում ե Վասիլիսան: Փակվում ե իր սեն-
յակում ու սկսում ե կարել: Գիշեր-ցերեկ ե անում,
կարում, պատրաստում, տալիս ե պառավին, թե՝ դե
տար տուր թագավորին:

Պառավը շապիկն առնում ե տանում պալատը,
տալիս թագավորին, իսկ Վասիլիսան յերեսը ըվանում
ե, գլուխը սանքում, հագնվում, զուգվում, նստում
լուսամուտի առաջն ու սպասում: Սպասում ե թե տես-
նի ի՞նչ պետք ե լինի:

Մին ել են ե տեսնում, վոր թագավորի մարդիկը
դալիս են դեպի պառավի տունը: Գալիս են ներս են
մտնում ու հայտնում, թե ով ե կարել թագավորի շա-
պիկը, թագավորն ուզում ե նրան տեսնի ու ինքը իր
ձեռքով վարձատրի:

Վասիլիսան վեր ե կենում, դնում, թագավորի
առաջին կանգնում: Թագավորի տեսնելն ու սիրահար-
վելը մին ե լինում:

— Ել յես քեզանից ձեռք յաչողը չեմ, սիրուն Վա-
սիլիսա,—ասում ե թագավորը:—Նստրվանից դու լսն
եո, յես քոնը, եստրվանից իմ կյանքի ընկերն ու իմ
աշխարհքի թագուհին ես դու...

Ասում ե, ձեռիցը բռնում, բարձրացնում, նստե-
ցնում ե իր կողքին, ու սկսվում ե հարսանիքը: Վա-
սիլիսայի հերն ել վրա յե հասնում, աղջկա բախտա-
վորությունը վոր տեսնում ե՝ ուրախանում, աշխարհ-
քովը մին ե լինում, ու են մնալն ե, վոր մնում ե աղ-
ջկա մոտ: Իր մերացու պառավին ել չի մոռանում Վա-
սիլիսան, բերում ե պալատ, պահում ե իրեն մոտ, իսկ
տիկնիկից չի բաժանվում մինչև մահը ու միշտ, ամեն
տեղ պահում ե իր գրպանում:

(1918)

ԿԱՐՄԻՐ ԾԱՂԻԿԸ

(Ռուսական)

Լինում ե չի լինում, մի հարուստ վաճառական։ Ունենում ե յերեք աղջիկ, մինը մյուսից գեղեցիկ, բայց ամենից գեղեցիկը լինում ե փոքրը։ Ինքն ել վոչ կնիկ ե ունենում, վոչ ուրիշ մոտիկ մարդ։ Վոչ կյանքն ու կայանքը*), վոչ արծաթն ու մոտիկն աչքին չեն գալիս, իր ամբողջ սերը տալիս ե աղջիկներին։ Յերեքին ել սիրում ե, բայց ամենից շատ սիրում ե փոքրին։ Մի անգամ ես վաճառականը վեր ե կենում թե գնա հետո աշխարհքներ առուտուրի։ Յերեք աղջկան ել կանչում ե, ասում ե. «Ի՞նչ եք ուզում, վոր ձեզ համար բերեմ»։ Մեծ աղջիկն ասում ե՝ «Յեա մի անգին քարերով զարդարած մոսկի ապարոչ**») եմ ուզում»։ Միջինին ասում ե. «Ինձ համար մի մաքուր ու անրիժ բյուրեղից շինած հայելի բեր»։ Փոքրն ել, թե՛ «Ինձ համար են Կարմիր ծաղիկը բեր, վորից գեղեցիկը ել աշխարհքումը վո՛չ կա, վո՛չ կճարվի»։ Փոքր աղջկա խոսքի վրա վաճառականը մտքի տունն ե ընկնում, ասում ե. «Դու քույրերիցդ ավելի դժար բան ուղեցիր, ա՛ղջիկ ջան։ Քու ուզած Կարմիր ծաղիկը գտնելը հեշտ բան չի, ե յեա ի՞նչ իմանամ՝ նրանից գեղեցիկը աշխարհքումը ել կա թե չկա»։

Վեր ե կենում գնում աշխարհքից աշխարհք, յեր-

*) Կայանք — ունեցվածք։

**) Ապարոչ — գլխի զարդ։

կրից յերկիր անց ե կենում, առուտուր ե անում, շատ գանձ ու հարստութուն ե վաստակում, բեռներ կապում, ճամփու դնում գեպի տուն։ Մեծ աղջկա ուզած անգին քարերով զարդարած ապարոչն ել ե գտնում, վոր գիշերը ցերեկի նման լուս ե տալիս, միջինի աղջկա ուզած բյուրեղյա հայելին ել ե գտնում, վորի մեջ յերևում եյին աշխարհքի բոլոր գեղեցկութունները, մեջը նայողի գեղեցկութունը յերեք չեր թառամում ու որեցոր ավելանում եր։

Բայց փոքր աղջկա ուզած Կարմիր ծաղիկը, վորից գեղեցիկն աշխարհքումը չլիներ՝ վոչ մի տեղ չի գտնում։ Գեղեցիկ ծաղիկներ պատահում եյին, բայց ո՞վ կարող եր ասել, թե նրանցից գեղեցիկները ել չկային աշխարհքում։

Վերադարձին, մի խոր անտառով անց կենալու ժամանակ, ավազակները հարձակվում են ես վաճառականի վրա, ունեցած-չունեցած գանձն ու հարստութունը կողոպտում են, ինքը վախճում ե, ընկնում անտառի խորքերն, ազատվում։ Գնում ե, գնում, վոչ ձեն, վոչ ծպուտ։ չունչ կենդանի չկա։ Գիշերը վրայե հասնում, ենքան մութը գիշեր, վոր մատդ մարդի աչքը կոխելի՛ր՝ չեր տեսնիլ, բայց մեր վաճառականի վրա թաղը ենպես լուս ե լինում, վոնց վոր որը ցերեկով։ Քանի գնում ե, ենքան լուսանում ե, քանի գնում ե, ենքան լուսանում ե, վերջը դուրս ե գալիս մի բացատ, բացատում տեսնում ե արծաթից, վոսկուց մի բացատ, բացատից շինած մի պալատ, վոր կրակի ու անգին քարերից շինած մի պալատ, վոր կրակի նման երվում ե, արևի նման լուս տալիս, իսկ ներսից լսվում են յերաժշտության ներդաշնակ դրախտական ձայներ։

Իսկն ե մտնում, բակից անցնում ե մտնում պալատ։ Տեսնում ե արծաթով, վոսկով, անգին քարերով լիքը սրբած, վեր քաղած, ամեն բան սարքին-կարգին, բայց մեջը մարդ չկա։ Մի սենյակ ե մտնում՝ մարդ չկա, մյուսն ե մտնում՝ մարդ չկա, յերրորդն ե մտ-

նում՝ մարդ չկա: Վոչ տեր կա մեջը, վոչ տերական, վոչ ծառա կա, վոչ ծառայող, միայն յերաժշտությանն է, վոր իրեն-իրեն հնչում է ու հնչում: Լավ տեղ է. բայց ավելի լավ կլիներ, յեթե մի ուտերուբան էլ լիներ, անց ե կենում վաճառականի մարդով: Մտքովն անց կենայն է լինում. մին էլ են է տեսնում՝ առաջը մի սեղան բացվեց, մի սեղան, վոր աստծու ամեն բարին մեջը լիքն է: Նստում է, ուտում, խմում, կշտանում, տեղիցը վեր կենում: Վեր է կենում թե չե, սեղանն էլ յետ նորից անհետանում է: Վաճառականը դարձանում է: Մի սենյակից մյուսն է անցկենում, նստում ու հիանում: Յերը վոր բոլոր սենյակները ման է գալիս, հոգնում է, քունը տանում է, ուզում է քնի, առաջը մի են տեսակ սպիտակ, մաքուր, փափուկ անկողին է փափում, վոր մեջը մտնելն ու աչքը կպցնելը մեկ է լինում:

Առավոտն աչքը բաց է անում, տեսնում է՝ չորերը դարսած, պատրաստված, բյուրեղյա ամաններով վճիռ ջրերը յերեսը լվանալու համար սռաջը դրած: Յերեսը լվանում է, լուսամուտից ներքև նայում՝ պալատի չորս կողմը հրաշալի այգիներ, այգիների մեջ փակեզույն պատշգոյներ են հասնում, չտեսնված գեղեցիկ ծաղիկներ են ծաղկում, ու սիրտն ուզում է դրոսնի են այգիներում: Մարմարե ու գմբուխտե սանդուխտներից ներքև է իջնում, մտնում է կանաչ այգիները: Ճեմում է ու հիանում: Հասուն պտուղները կախկալել են ծառերից, յերմներանգ ծաղիկները փարթամ ծաղկում ու տնձահական հոտ են բուրում, զարմանահրաշ հավքերը չորս կողմը թրթռում ու դրախտական յերգեր են յերգում, շատրրվանները զվարթ կարկաչելով վերև են ցայտում իրենց վճիռ ջրերը, ու խոխոջում են բյուրեղանման աղբյուրները: Մանեգալիս մեր վաճառականը, զմայլում: Մին էլ հանկարծ տեսնում է՝ մի թմբի վրա մի կարմիր ծաղիկ է ծաղկում, մի ծաղիկ, վոր մարդ իր սրտով վոչ տեսել է, վոչ լսել: Մոտենում է. ձեռն ու

վորը գոլ են ընկնում, ասում է. «Ահա հենց ես է լինելու են կարմիր ծաղիկը, վորից գեղեցիկը ել աշխարհքումը վոչ կա, վոչ կճարվի: Հենց ես ծաղիկն է լինելու, վոր ուզում եր իմ փոքր աղջիկը»:

Մոտենում է, ծաղիկը պոկում: Պոկում է թե չե, փայլալի փայլատակում է, կայծակը վորոտում է, յերկիրը գոլում, ու, վոնց վոր թե գետնի տակիցը գուրս գա, մինը գուրս է գալիս վաճառականի առաջին կանգնում. — դադան ասես-դադան չի, մարդ ասես-մարդ չի. մի բրդբրդոտ, դարհուրելի հրեշ, ու մոռնում է կատաղի:

Ես ի՞նչ արիր դու: Ի՞նչպես համարձակվեցիր՝ պոկեցիր իմ այգուց իմ սիրած, իմ նվիրական ծաղիկը: Յես քեզ հրավիրած թանգ հյուրի նման իմ պալատն ընդունեցի, ուտեցրի, խմեցրի, քնեցրի, իսկ դու իմ լավության փոխարեն եղպե՞ս ես յետ վճարում: Դե հիմի իմացած յեղիր, վոր վերջդ հասել է: Քո մահը ցույց պետք է տամ քեզ, վոր քո աչքով տեսնես:

Վաճառականը վախից ատամ-ատամ դողացնում է: Մտիկ է անում, վոր չորս կողմից ամեն մի ծառ ու թփի թրթռեցից, ջրի միջից, գետնի տակից՝ գուրս են յեկել ու սողում են դեպի իրեն անթիվ ու անհամար այլանդակ ու դարչելի արարածներ: Յերեսի վրա ընկնում է բրդբրդոտ հրեշի առջև՝ խղճալի աղաղակով:

— Ով անտառի տեր, ո՞վ անհայտ հզոր, ինձ մի՛ ոպանիր իմ անգիտուն մեղքի համար. վորոքությունն արա, հրաժա՛ն տուր խոսք ասեմ: — Ու պատմում է իր աղջիկների ու իր խոստումի մասին: Ապա սկսում է աղերսել, վոր հրեշն իրեն չնորհի կարմիր ծաղիկը իր փոքրիկ աղջկան տանելու համար: Փոխարենը խոստանում է վոսկի տա՝ վորքան կուզի: Քահ-քահ խնդում է դարհուրելի հրեշը, անտառի տերը: Ասում է.

— Ի՞նչ եմ անում քո գանձն ու վոսկին, իմ ունեցածն էլ չգիտեմ վորտեղ պահեմ: Քեզ անվնաս կթողնեմ, վոր քո տունը գնաս, ամ հաշիվ ել գանձ կտամ,

կարմիր ծաղիկն էլ կտամ, միայն թե խոսք տաս, վոր
քո աղջիկներէյ մեկն ու մեկին ինձ մոտ կուղարկես:
Վոչ մի վատ բան չեմ անիլ նրան, չեմ վշտացնիլ, չեմ
վերաժիրիլ, իմ պալատում կապրի ենպես, ինչպես դու
ուպրեցիր: Չանձրացել եմ մենակությունից, ուզում եմ
մի բնկեր ունենամ:

Վաճառականը ես վոր յտում ե, չատ ե տխրում.
նայում ե անտառի հրեշի վրա, հիշում ե իր աղջիկնե-
րին ու լաց ե լինում: Ասում ե.

— Յես վո՞նց անեմ, յեթե իմ աղջիկները չուզենան
քեզ մոտ գան: Հո չեմ կարող յես նրանց ձեռն ու վտար
կապեմ ու գոռով դրկեմ: Յեվ վերջապես, ի՞նչ իմանան,
ի՞նչ ճամփով կարող են հասնել քեզ մոտ: Յես յերկու
տարումը հագիվ եմ կարողացել ետեղ հասեմ: Են ել
ի՞նչ տեղերով, ի՞նչ ճամփերով—յես ել չեմ իմանում...

— Յես ստրուկ չեմ ուզում,—պատասխանում ե ան-
տառի հրեշը:—Քո աղջիկները համով—կամով թե կզան,
թո՛ղ գան. թե չեն գալ, են ժամանակ դու պիտի յես
գաս, վոր քեզ պատժեմ չարաչար մահով: Իսկ թե ինչ-
պես պետք ե գալ ինձ մոտ, դրա համար դու հոգս մի՛
անիլ. ահա իմ մատի մատանին. ա՛խ, ով ես մատանին
դնի իր աջ ճկույթի, հենց նույն վարկյանին դուրս կգա
ենտեղ, վորտեղ ուզենա: Դե գնա՛, քեզ յերեք ու յերեք
գիշեր ժամանակ...

Ի՞նչ պետք ե անել խեղճ վաճառականը: Մտածում
ե, մտածում, խոսք ե տալիս ու մտաւնին ատնում:
Մատանին աջ ճկույթն ե դնում թե չե՛ դուրս ե գալիս
լրեն տան առաջը: Տեսնում ե իր դանձերով ու թանկա-
գին ապարանքներով բեռնած քարավաններն ել գալ-
պառից նոր են ներս մտնում, ու մնին յերեք՝ ատա՛ղվա-
նից ալել են բերում:

Աղջիկները դեմ են գալիս, վզովն են բնկնում,
համբուրում են, գրկում, գուրգուրում են, բայց տե-
նում են, վոր իրենց հերը չատ ե տխուր. սիրտը չի
բացվում, ունքամեջը յես չի գնում: Սկսում են ամենքը
մի կողմից հարցնել, թե ինչու յե տխուր, կարողու-

թյո՞ւնն ե կորցրել, թե՞ ատոյջությունը. ի՞նչ ե պա-
տահել:

— Ատոյջությունս չեմ կորցրել,—պատասխանում ե
վաճառականը—վոչ ել կարողությունս, դեռ մեկին յե-
րեք—չորս ել աշխատել եմ: Իմ ցավը ուրիշ ցավ ե, ետր
համբերեցեք, եզուց կպատմեմ՝ կիմանաք:—Պատվի-
րում ե, անդուկները ներս են բերում, հանում ե մեծ
աղջկա ուզած անդին քարերով շինած վոսկի ապարաշը
իրեն ե տալիս: Միջնեկ աղջկա ուզած հայելին ել իրեն
ե տալիս: Փոքր աղջկա կարմիր ծաղիկն ել վոսկի ծաղ-
կամանով՝ իրեն ե տալիս:

Առաջուր վոր յուտանում ե, մեծ աղջկանը կան-
չում ե, ինչ վոր իրեն հեռ պատահել եր, պատմում ե ու
հարցնում, թե կհոժարի՞՞ դնա ապրի անտառի տիրոջ՝
անճոռնի հրեշի մոտ ու իրեն ազատի չարաչար մահից.
Մեծ աղջիկը հրաժարվում ե. ասում ե. «Յես ինչո՞ւ յեմ
գնում, ում համար կարմիր ծաղիկը բերել ես, թո՛ղ նա
գնա»: Միջնեկ աղջկանն ե կանչում, նա յել ե հրաժար-
վում: Փոքր աղջկանն ե կանչում, ամեն բան պատմում:
Փոքր աղջիկը հոր առաջը ծունկի յե գալիս, ասում ե.
«Յես կզնամ՝ հա՛յրիկ, որհնի՛ր ու ճանապարհ դիր ինձ.
յես կզնամ կապրեմ անտառի տիրոջ՝ անճոռնի հրեշի
հետ: Վոնց վոր դու ինձ համար կարմիր ծաղիկը բերել
ես ու բնկել փոքճանքի մեջ, ենպես ել յես պետք ե ա-
զատեմ քեզ եղ փորճանքից»:

Են որն ել ե անց կենում, մյուս որն ել, վրա յերեք
գիշերը վաճառականը պետք ե բաժանվել աղջկանից:
Հրեշի մատանին հանում ե, բերում աղջկա ճկույթ,
դնում թե չե, աղջիկն իսկույն իր ունեցած—չունեցածն
ել հետը՝ անհետանում ե:

Անհետանում ե, մին ել աչքը անտառի հրեշի շքեղ
ապարանքում ե բաց անում, մի վոսկի մահճակալի
վրա, փափուկ մետաքսե անկողնում: Գլուխը վեր ե
քաշում, տեսնում ե կարմիր ծաղիկն ել վոսկե ծաղկա-
մանի մեջ՝ գրած կողքին: Սիրտն ուզում ե պալատը
ման գա, վեր ե կենում գնում րոյոր սենյակները ման

դալիս, բոլոր հրաշալիքները տեսնում, հիանում: Հիասո-
րի սիրած Կարմիր ծաղիկն առնում է, իջնում ալյուրին:
Այդին է մտնում թե չե, թուռնները յերգում են իրենց
յեղեմական յերգերը, ծառերը, ծաղիկներն ու թփերը
քնքշոքեն ճոճելով իրենց գլուխները խոնարհում են ու-
ռաջին: Ու գնում է աղջիկը, զբոսնելիս գտնում է հենց
են թումբը, վորի վրից իր հերը Կարմիր ծաղիկը պո-
կել եր: Ուզում է նորից տնկի իր տեղը, բայց ինքը
ծաղիկը ձեռքիցը թռչում է, կաշում իր բնին ու բաց-
վում առաջվանից ավելի գեղեցիկ: Ես հրաշքի վրա
աղջիկը շատ է զարմանում, շատ է ուրախանում ու
յետ է գալիս պալատը:

Գնում է, պալատի սենյակներում ման է գալիս,
տեսնում է՝ մեկում ել մի սեղան է բաց արած, առտը-
ծու ամեն բարին վրեն: Մտքումն ասում է. «Անտառի
հրեջը յերևի ինձ վրա չարացած չի, բարի աչքով մտիկ
կանի, տեր ու տիրական կլինի»: Ես մտածելու ժամա-
նակ մին ել են է տեսնում՝ մարմարե ձեռնակ պատի
վրա հրեղեն տառերով յերևացին ես խոսքերը. «Յես
տեր չեմ քեզ համար, յես քո հնազանդ ծառան եմ: Դու
իմ տիրուհին ես, ինչ վոր քո սիրտն ուզի, կկատարեմ
ամենայն սիրով»: Ես խոսքերը կարդում է թե չե՝ սե-
ղանը լցվում է ամեն տեսակի քաղցրավենիներով, շա-
քարեղեններով ու անուշ խմիչքներով, ու բոլորը մա-
քուր վոսկեղեն ամանների մեջ: Ուրախ-ուրախ նստում
է՝ ուտում, խմում գովանում, յերաժշտությունով զը-
վարձանում, ճաշելուց հետո ել յետ գնում կանաչ ալ-
յուրներում ձեմելու, հազար ու մի հրաշալիքների վրա
գմայլելու:

Եսպես ապրում է աղջիկն անտառի տիրոջ պալա-
տում: Ամեն օր կարած-պատրաստ նորանոր են տեսակ
ճոխ ու զարդարուն զգեստներ է ստանում, վոր վոչ
յեղվով պատմել կլինի, վոչ գրչով նկարագրել: Կա-
մայ-կամայ սկսում է ձեռագործով պարապել, վո-
հով, արծաթով ու մարգարտով ասեղնագործել: Իր
ձեռագործներից գրկում է հորը նվեր, իսկ ամենուրեք

սրտարաստում է անտառի տիրոջ համար, բայց չի ի-
մանում ինչպես նվիրի:

Եսպես բախտիան ժամանակ անց է կենում: Զա-
հել աղջիկը ընտելանում է իր կյանքին, վոչ մի բանի
վրա զարմանում է, վոչ ել մի բանից վախենում: Ծա-
ռայում են անտեսանելի ծառաներ, տալիս են, առնում
են, իր բոլոր հրամանները կատարում են: Ու աղջիկը
սկսում է որեցոր ավելի ու ավելի սիրել իր տիրոջը:
Իմանում է, վոր նա յեկ իրեն է սիրում և նա ավելի յե
սիրում իրեն, քան թե ինքը նրան, ու շատ է ուզում մի
անգամ ձենը լսի, հետը զրույց անի: Հեռագետե սկը-
սում է խնդրել, աղաչել, բայց անտառի տերը չի ա-
նում, վախենում է իր ձենով նրան վախեցնի:


Մի անգամ ել աղջիկը ալյուրն է իջնում, գնում է
իր սիրած տեղը նստում, չորս կողմից տերևներով ու
ծաղիկներով շրջապատված: Նստում է ու դիմում ա-
նեղեղյթ անտառի տիրոջը.

— Իմ անուշ, իմ բարի տեր, — ասում է, — մի՛
վախենար, թե ինձ քո ձենով կվախեցնես: Եսքան բա-
րությունից հետո յես գաղանի մոնչյունից ել չեմ վա-
խենար, մի՛ վախենար խոսի՛ր ինձ հետ... — Մին ել
խենար, մի՛ վախենար խոսի՛ր ինձ հետ... — Մին ել
հանկարծ լսում է, վոր մինը ասես թե հառաչեց թփե-
րի յետևից, ապա թե լսում է սարսափելի, վայրենի,
խուլ ու խուպոտ ձենը, և են իրեն թե շնչում է: Աղջի-
կը մին ցնցվում է, մին ել իրեն տիրում է, ցույց չի
տալիս թե վախեց, ու կամաց-կամաց հաճույքով լսում
է նրա անուշ, փաղաքուշ խոսքերը, խոր ու խելացի
մտքերը, ու սիրտը բացվում է, լցվում է անհուն ու-
րախությունով:

Են որվանից կանաչ ալյուրում լինելին, մութն ան-
տառում թե պալատում, ամեն օր զրույց ելին անում
իրար հետ: Աղջիկը հենց հարցնում է.

— Եստե՞ղ ես արդյոք, իմ սիրելի տեր:

— Եստե՞ղ եմ, իմ աննման տիրուհի, յես, քո հյու-
ժառան, քո հավատարիմ ընկերը, — պատասխանում է
անտառի տերը, անձուռնի հրեջր:



Ան աղջիկը եւ չի վախճանում նրա վայրենի, սար-
տափեղձեանց, ու գրույց են անում, գրույց են անում
անվերջ, անվերջ...

Եստ Ժամանակ եւ անց կենում եսպես թե քիչ՝ աղ-
ջիկը արտով ցանկանում եւ մի անգամ եւ իր աչքով

տեսնի անտառի տիրոջը, անճոռնի հրեշին, ու սկսում
ե խնդրել, աղաչել, վոր իրեն յերևա:

— Չէ՛, իմ աննման գեղեցկուհի, եղ մի՛ խնդրիր
ինձանից, վոր յես քեզ յերևամ ու իմ զգվելի դեմքը,
իմ այլանդակ մարմինը քեզ ցույց տամ: Ինձ աչքով
տեսնես թե չե՛ կատես, աչքից կդցես, քեզանից հեռու
կքչես, իսկ յես, վոր քեզանից հեռանամ, կարոտից կը-
մեռնեմ:

Եսպես ե պատասխանում անտառի տերը, անճոռնի
հրեշը, ու չի կամենում յերևա: Բայց աղջիկը համա-
ռում ե իր ասածի վրա, յերդվում ե, թե աշխարհքում
վոչ մի հրեշից իսկի յել չի վախենում, ե վոր նրան,
իր բարի տիրոջը, չի ատիլ յերբեք:

— Դե լավ,—ասում ե հրեշը,—վոր եղպես ե, կը-
կատարեմ քո ցանկությունը, թեև հաստատ գիտեմ,
վոր դրանով պետք ե իմ յերջանկությունը խորտակեմ
ու անմուրաղ մեռնեմ: Իրիկվա աղջամուղջին, յերբ ա-
րեւը կմտնի անտառի յետեր, արի այգին ու ինձ կան-
չիր, ասա՛:—Հայտնվի՛ր ինձ, իմ հավատարիմ ընկեր:

—Յեվ յեթե կտեսնես, վոր ել չես կարող ինձ մոտ մը-
նալ, յես ել չեմ ուզիլ քեզ գերության մեջ պահեմ. քո
ննջարանում բարձիդ տակին ե իմ վոսկի մատանին.
դիր աջ ճկույթդ, իսկույն դուրս կդաս քո հոր տանը,
ու յերբեք ել վոչ մի բան չես լսիլ ինձանից:

Իրիկունը աղջամուղջին, արեւը անտառի յետեր
ծածկվում ե թե չե, աղջիկը կանչում ե. «Հայտնվի՛ր
ինձ, իմ հավատարիմ ընկեր»: Ու հեռվում յերևում ե
անտառի տերը, անճոռնի հրեշը: Ճամփի կիսով անց ե
կենում ու կորչում ե խիտ թփուտի մեջ:

Աղջիկը տեսնում ե թե չե, ահից ճչում ե ու ճամ-
փի մեջտեղը ուշաթափ վեր ընկնում: Սոսկալի տեսք
ունեն անտառի անճոռնին. ձեռները ծուռ-ծուռ, մատ-
ները ճանկերով, վոտները ձիու սմբակներ, առջևի ու
յետևի կողմից ուղտի սապաաններ, վոտից չլուխ բըր-
դոտ, բերանի յերկու կողմից դուրս անկված յերկու
վարազի ժանիք, քիթը կեռ, ուրուրի կաուցի նման,
իսկ աչքերը վոնց վոր բուր աչքեր...

Աղջիկը մին ել ետեղ ե ուշքի գալիս, վոր մինը կողքին լաց ե լինում ու մղկտում:— Ինձ սպանեցիր, իմ աննման տիրուհի, ել քո սիրուն յերեսը յես չեմ տեսնելու... Դու ել չես լսում ինձ... Ավելի լավ ե հենց եսպես անմուրազ մեռնեմ ու պրծնեմ:— Աղջիկը վոր լսում ե, խղճահարվում ե, ամաչում ե վոր իր բարի, իր սիրելի ընկերից ենքան վախեցավ: Ասում ե. «Մի՛ վախենար, իմ բարի, իմ անուշ տեր, ել քեզանից յես չեմ վախենալ, ել քեզանից յես չեմ հեռանալ, ել քո լավությունը յես չեմ մոռանալ, այժմ նորից յերեվա...»

Նորից ե յերեւում անտառի տերը, անճոռնի հրեշը, միայն թե՛ ինչքան աղջիկը կանչում ե, չի համարձակվում մոտենա: Ու զրոտնում են մինչև կես գիշեր, առաջվա նման անուշ, իմաստալի զրույցներ են անում ու աղջիկն արդեն վոչ մի ահ ու յերկյուղ չի զգում:

Մյուս որը նորից ե տեսնում, բայց ես անգամ արեվի լուսով, — ու թեև մի քիչ վախենում ե, բայց ցույց չի տալիս, մի քանի որից հետո եզ վախն ել ե անցնում բոլորովին:

Ու սկսում են առաջվանից ավելի քաղցր զրույցներ, ավելի ու ավելի յեն մոտենում իրար, սկսում են միասին նստել սեղանի, միասին զրոտնել այգիներում ու թափառել մթին անտառներում:

Եսպես ել բավական ժամանակ ե անց կենում: Մի անգամ ել աղջիկը յերազում տեսնում ե, վոր իր հերը հիվանդ պառկած ե, լաց ե լինում, դարդ անում: Անտառի տերը, անճոռնի հրեշը աղջկա արտասուքը վոր տեսնում ե, հարցնում ե, թե ինչո՞ւ համար ե արտասուք թափում ու դարդ անում: Աղջիկը իր յերազը պատմում ե ու խնդրում, վոր իրավունք տա՝ դնա իր հորն ու իր քույրերին տեսնի:

— Ել իրավունք տալը վո՞րն ե, — ասում ե հրեշը, իմ վոսկի մատանին քեզ մոտ ե. դիր աջ ճկույթդ ու նույն վայրկյանին դուրս կգաս քո հորանց տանը: Բայց իմացած յեղիր, յեթե յերեք որեն վրա յետ չե-

կար, ել ինձ չես տեսնիլ: Կմեռնեմ, վորովհետեւ քեզ ինձանից ավելի յեմ սիրում ու առանց քեզ ապրել չեմ կարող:

Աղջիկը խոսք ե տալիս, վոր յերեք որից մի ժամ ել առաջ կվերադառնա, հրաժեշտ ե տալիս, մատանին աջ ճկույթը դնում ու մին ել աչքը հորանց տանն ե բաց անում: Հորանց տանը պատմում ե, թե ի՞նչ կյանք ու ապրուստ ունի անտառի տիրոջ, անճոռնի հրեշի թաղավորության մեջ: Քույրերը վոր իմանում են, թե իրենց փոքր քույրը ի՞նչ անհուն գանձ ու կարողություն ունի ե թե ի՞նչ թաղուհու իրավունք ե բանեցնում իր տիրոջ վրա՝ նախանձում են: Առաջին որն ենպես ե անց կենում, վոնց վոր մի ժամ, յերկրորդ օրը՝ վոնց վոր մի վայրկյան, յերրորդ օրն ել մոտենում ե իր վերջին:

Ես քույրերը մի չար բան են մտածում: Մտածում են՝ ենպես անեն, վոր իրենց փոքր քույրը խոստացած ժամից ուշանա, անտառի տերը բարկանա վրեն: Բերում են քնի դեղ են տալիս. սրա վրա ծանր մրափ ե գալիս ու մնում ե քնած: Նշանակված ժամը վոր դարկում ե, սիրտը ճմլում ե, մի կերպ աչքը բաց ե անում, տեսնում ե խոստացած ժամից մի վայրկյան անց ե կացել: Վոսկի մատանին ճկույթն ե դնում ու իսկույն դուրս ե գալիս անտառի տիրոջ ապարանքում:

Վոչ վոր չի գալիս դեմը, վոչվոր չի հանդիպում:

Լռություն ու մեռելություն: Վո՛չ այգիներում թռչուններն են յերգում իրենց դրախտական յերգերը, վո՛չ շատրվաններն են գլարթ վեր ցայտում իրենց ջրերը, վո՛չ աղբյուրներն են խոխոջում, վոչ ել յերաժըշտությունն ե հնչում մարմար պալատներում: Միրտը մի վատ բան ե դուշակում: Վաղեվադ սլտտում ե ամբողջ պալատն ու այգին, կանչում ե իր սիրելի ընկերին, վոչ մի կողմից վոչ ձեն ե գալիս, վոչ պատասխան: Վաղում ե դեպի են թումբը, ուր բռնել ու ծաղկում եր իր Կարմիր ծաղիկը: Ի՞նչ ե տեսնում: Անտա-

ուի տերը, անճոռնի հրեշք յերկու թաթերով Կարմիր
 ծաղիկը պինդ գրկած ու ընկած թմբի վրա:

Ասում ե՛՛ յերեւի ինձ սպասել ե, սպասել ու քունը տարել, խորը քնել: Սկսում ե զգուշ զարթեցնել, տեսնում ե՛՛ չի լսում, ժաժ չի գալիս: Վերցնում ե բրդոտ թաթը, տեսնում ե՛՛ անշունչ, մեռած ընկած ե... Աչքերը միթնում են, ծնկները տակին ծալվում են, տեղն ու տեղը չփոխում ե, յերկու ձեռքով անձուռնի հրեջի ալլանդակ գլուխը գրկում ու բարձր ձենով լաց լինում, ճչում:

— Վեր կա'ց, զարթնի՛ր, իմ սրտակից ընկեր, յետ սիրում եմ քեզ, իմ սրտով սիրածն ես դու...

Ես խոսքերն ասում ե թե չե, հանկարծ կայծակը ճայթում ե, յերկիրը շարժվում ե հիմքից, հրեղեն լախտը զարկում ե թմբին, ու աղջիկը ուշաթափ ընկնում ե, մնում տեղն ու տեղը ընկած:

Շատ ե մնում թե քիչ, եղ ել չի իմանում, միայն վոր աչքը բաց ե անում, տեսնում ե՝ ինքը մի պալատում, անգին քարերով զարդարած վոսիկե գահի վրա նստած ե, մի ջահել, գեղեցիկ յերիտասարդ ել ձեռը բռնած կողքին կանգնած: Յերիտասարդի գլխին թագավորական թագ, հագին վոսիկեհուռ զգեստ: Առաջին կանգնած են հերն ու քույրերը իսկ չորս կողմը ծունկի յեկած պալատական թիկնապահները, բոլորը հագած ու զուգլած վոսիկեղոծ և արծաթազոծ կերպաս զգեստներով:

ՆԱԵՐՈՎ: Ու յերիտասարդը զառնում ե զեպի իրեն.

[illegible]

Ժի, Ժոր ինձ սիրի ու ցանկանա իմ կինը լինել: Են Ժա-
 մանակ պէտք է քանդվեր կախարդական կապանքը:
 Յերեոուն տարի յես մնացի եսպէս կախարդված, յերե-
 սուն տարվա մեջ տասնութեկ աղջիկ բերի իմ ամբողջը,
 իսկ դու յեղար տասներկուերորդը: Նրանցից վոչ մինը
 ինձ չսիրեց վոչ իմ փաղաքշանքների, վոչ իմ սիրո,
 վոչ ել քարության համար: Միայն դու յեղար, վոր իմ
 սիրո գեմ սեր ցույց ավիր ինձ, դրա համար ել դու
 պետք է լինես իմ պաշտելի թագուհին:

Եստեղ ել աղջկա հերն ու նախանձոտ քույրերը,
պաշտօնականները, ծառաները, ամենքը, ամենքը ամեն
կողմից առաջ են գալիս, շնորհավորում են նորահարսի
ու նորապիսի բախտավորությունն, ու սկսվում է
սուրբ հարսանիքի հանդեսը:

(1916)

ԱՆԳԻՆ ՔԱՐԸ

(Արաքսկան)

Մի ամառվա շոգ օր եր. բայց չնայած անտառների շոգին ու թեժ արևին, Բաղդադի փողոցները լիքն էյին ժողովրդով: Հարուն ալ Ռաշիդ թաղավորը մի փառավոր հաղթությունից հետո պետք է վերադառնար իր մայրաքաղաքը: Աղքատ ժողովուրդը հավաքվել էր թամաչա անելու: Մարդիկ անհամբեր սպասում ու դռվում էյին թաղավորին. փառաբանում էյին նրա քաջությունը, խելքը, մեծահոգությունը, խմաստությունը, արդարադատությունը և շատ ուրիշ բարձր առաքինությունները:

Ես ժամանակ բաղմության միջից դուրս յեկավ Սալիդ անունով մի աղքատ ու սկսեց ամենախիստ խոսքերով հայհոյել թաղավորին:

Ամբոխը սաստիկ վրդովվեց. չորս կողմից վրա դառան, վոր վոտնատակ տան Սալիդին, յերբ մեջ մտավ մի անծանոթ:

— Կանգնեցե՛ք, — ասավ, — ո՛վ աղնիւ մարդիկ, ու ձեր ուշադրության ահանջները մի առժամանակ կախարեք իմ մտքի ճյուղերին:

Ամբոխը կանգ առավ:

— Ի՞նչ լավ է խոսում, ե՛, — ձեն տվեց մինը. — խոսի՛ր, խոսի՛ր, լսում ենք:

— Դուք ուղում եք սրան ծեծե՞ք, — հարցրեց անծանոթը:

— Հա՛, անպատճառ պետք է ծեծենք:

— Բայց պետք է խելոք ծեծեք:

— Ի՞նչպես թե խելոք ծեծեք... ել խելոք ծեծելը վո՞րն է... կողքերը կփշրենք — պրծավ գնաց:

— Ձե՛, եղպես չի. սպասեցեք ու ինձ ահանջ արեք: Դուք ուղում եք սրա կողքերը փշրեք: Շատ լավ: Ասենք թե տեղն է ու արդարացի: Բայց կարող ե պատահել, վոր հարկավոր է սրա յերկու կողքը փշրել, իսկ դուք միայն մի կողքը կփշրեք: Եղպեսով ել կվարվեք և անարդար, և անխելք:

— Լավ ես ասում, յես իմ աստվածը, — ձեն տվին ամեն կողմից: — Հապա ի՞նչ անենք. նե՞րենք են վիրավորանքը, վճիռ սա հասցրել է մեր ամենախմաստուն, ամենազերազույն, ամենահեռատես, ամենաքառտես թաղավորին, աշխարհքի կենտրոնին, աստծու ստվերին, աստղերի աստղին, արեգակների արեգակին...

— Ձե, յես հո չեմ ասում՝ ներենք, յես ասում եմ՝ մի հարցնենք ու լսենք, թե ի՞նչ է ասում ես մարդը, ի՞նչպես է արդարանում:

— Յես արդարանալու բան չունեմ, — խոսեց Սալիդը: — Մեղավորներն են արդարանում. իսկ յես վոչ մի մեղք չեմ արել: Յես միայն են պետք է ասեմ, ինչ վոր ինձ են արել: Յեմ ասեմ թե չե, դուք ձեռքերով կծածկեք ձեր յերեսները, բայց եղ ել չեք կարող անել, վորովհետև ձեր յերեսների ամոթից ու բարկության տաքությունից ձեր ձեռքերը կերվեն:

— Վա՛հ, ես ի՞նչ ե պատահել: Ինչպես յերեվում ե, շատ հետաքրքրական բան պետք է լինի: Պատմի՛ր, պատմի՛ր, — գոռացին ամեն կողմից:

— Վոչ թե հետաքրքրական, այլ մի ցավալի ու անիրավ դործ, — պատասխանեց Սալիդը: — Ահանջ արեք, պատմեմ տեսեք:

«Յես մի գեղեցիկ, խելոք ու աշխատասեր կին ունեյի ու յերկու կարմրաթշիկ, առողջ, աշխույժ յերեսա: Ինձ համար յերջանիկ ապրում էյի, ու իսկի մարդարեյի խոռոտացած դրախտն ել չեք պետք...»

մեր միտն ե գալիս, մեր սիրտն ե հոսում իր գեղեցիկ հատկութիւնները: Լավ բան ե լավ անունը:

«Մի գանձ ել կա—հարստութիւնն ե:

«Հարստութիւնով մարդ հազար ձեռն ե ունենում, հազար վոտը, հազար լեզու ե հազար ձեռով կարող ե հազար լավ գործ կատարել: Լավ բան ե հարստութիւնը:

«Մի գանձ ել կա—եղ ել խելքն ե:

«Ոնեղը մարդը գերմարդ ե դառնում: Ոնեղով տկարն ուժեղ ե, աղքատը—հարուստ, վախկոտը—անաս: Նրանից ե, վոր անխելի չչնջլունով ասած խոսքը փորոտում ե ու անցնում աշխարհքի մի ծերից մյուս ծերը: Լավ բան ե խելքը:

«Բայց մի գանձ ել կա, վոր լավ անունից ել, հարստութիւնից ել, խելքից ել վեր ե: Առանց նրան ես բոլորը համարյա թե սարսափելի ու կործանարար կլինէյին մարդու համար: Առանց նրան աշխարհքը կթառամեր ու կամայանար: Ես գանձը—խղճմտանքն ե:

«Ես գանձը արդեն մեծ մարդիկն են ունենում, եսրա համար ել նրանք, ինչ ել վոր ունենան, յերջանիկ չեն լինում: Ինչքան հարստութիւն մտքովդ կանցնի, տուր նրանց, վոր նրանք բաժանեն մարդկանց ու բարերարեն, դարձյալ քիչ ե նրանց համար: Իսկ յես ճանաչում եյի մի աղքատի, վոր յերեք գանձ ուներ ե իրեն համարում եր յերջանիկ ու շարունակ փառաբիրեն: Սեւ հպարտութիւնը մտով նրա նում եր ասածուն: Յեւ հպարտութիւնը մտով նրա սիրտը, թե ինքն եր ձեռք բերել են յերջանկութիւնը ու վոչվոք ել չեր կարող խլել իր ձեռքից: Ես բանն իմացավ չար վոգին ու հասցրեց ասածուն: Աստված անիծեց չար վոգուն ու իրենից յետ մղեց, զրկեց եղ յերջանիկ մարդու ապրած քաղաքի դատավորի սիրտը: Դատավորը հանկարծ զգաց, վոր իր ներսը մի տը: Դատավորը ու թունավոր բան ե շարժում: Սրտի նոր, անծանոթ ու թունավոր բան ե շարժում: Սրտի մեջ սկսեց յեռալ մի շարութիւն, ու միտքը մթնեց խավար մշուշից: Ինքն ել լավ չիմացավ, թե ինչ եր պատահել իրեն, վեր կացավ դուրս յեկավ վոր հովին

տա իրեն, ու յերջանիկ աղքատի, տան մոտից անցնելիս սկսեց նրան նախանձել: Բայց ի՞նչ եր աղքատի ունեցած—չունեցած գանձն ու յերջանկութիւնը: Մի ջրհոր, յերկու արմավենի ծառ: Զրհորից սառը ջուր եր խմում, իսկ յերկու արմավենին ամբողջ տարին նրան քաղցր պտուղ եյին տալիս ու հով ստվեր: Սառը ջուրը խմում եր, քաղցր պտուղն ուտում ու չվաքում նստում, փառաբանում ասածուն: Դատավորին շատ թվացին ես գանձերը աղքատի համար, վճռեց նրանից խլի, ու խորլեց: Են որվանից աղքատը թափառում ե դռնից դուռը նրա հառաչանքից խավարում են աստղերը, նրա թափած արտասուքներից կարիճներ են ծնվում ու աշխարհքը լցվում»:

Ամենքի սիրտն ել խորը շարժվեց ես պատմութիւննից, ամենքն ել զայրացան անիրավ դատավորի վրա, ամենքն ել գտան, վոր նա արժանի յե խիստ պատժի:

— Իսկ դու՞ ինչ ես ասում, Իբրահիմ,— հարցրեց Հարուն ալ Ռաշիդ թաղավորը իր մեծամեծներից մեկին, Բաղդադի դատավորին: Ի՞նչ պետք ե անել հափըշտակող դատավորին:

— Թաղավորն ապրած կենա,—պատասխանեց Իբրահիմը,— եղ մի են տեսակ վոճիռ ե, վորին արժանի պատիժ յես գտնել չեմ կարողանում:

— Իբրահիմ,— գոչեց թաղավորը,— եղ վոճրագործը դու յես: Դու յես աղքատ Սայիդից խլել նրա կինը, եղ յերջանկութեան աղբյուրը մեր կյանքում: Դու յես խլել նրա դավանները, վոր մարդկանց կյանքի քաղցր պտուղներն են ու իրենց ծնողներին չվաք են անում ծերութեան որերում:

Իբրահիմը խորտակվեց, գետին ընկավ ու խնդրեց, վոր իրեն ների թաղավորը:

— Յես չեմ քո դատավորը,— խոսեց Հարուն ալ Ռաշիդը.— քո դատավորն այժմ նա յե, ում վոր թըշվառացրել ես դու:

Ու հրամայեց ներս կանչել Սայիդին:

— Սայի՛դ,— ասավ,— ահա քո ձեռքն եմ տալիս քո թշնամուն:

— Թագավորն ապրած կենա, իմ ձեռքն ես տալիս, յես ի՞նչ անեմ,— պատասխանեց Սայիդը:

— Հապա ի՞նչ ես ուզում:

— Յես դրանից բան չեմ ուզում: Թո՛ղ իմ կնոջն ու յերեխաներին վերադարձնի, յես առաջվա նման յերջանիկ կլինեմ:

Ես մեծահոգությունը շարժեց թագավորին, նրա աչքերը լցվեցին արտասուքով: Բոլոր մեծամեծներն ել սկսեցին արտասվել:

— Լավ, եղ քո դատաստանը,— դարձավ թագավորը Սայիդին.— այժմ իմ դատաստանը լսիր: Դո՛ւ, Իբրահի՛մ, քո կալվածքների չորս բաժնից յերեք բաժինը կտաս Սայիդին, դրա հետ ել են քարը, վոր Սայիդն ինձ պարգև բերեց, են քարի քաշովը մին վոսկի:

Թագավորի վճիռը վճիռ եր: Ինչ վոր վճռեց՝ Իբրահիմը տվեց Սայիդին: Ու Սայիդը իր կնոջ ու յերեխաների հետ միասին ստացավ ահագին հարստություն: Բայց հարստությունից չդուռոգացավ Սայիդը: Դարձյալ առաջվա նման համեստ կյանք եր վարում ու աշխատում եր առավոտից մինչև իրիկուն: Յերբ ընկերները հարցնում եյին, թե՛ ի՞նչու չես ոգտվում քո հարստությունից ու փարթամ ապրում, ասում եր՝ հարստությունը փչացնում ե մարդու սիրտը, խնջուկներն ու ճոխ ճաշերը հոգնեցնում, մաշում են մարդու զգույնները, իսկ յես ուզում եմ մնամ միշտ թարմ ու բարի:

Ու իր ամբողջ կարողությունը Սայիդը սպառեց, դրեց բարի գործերի վրա: Ուսումնարաններ բաց արավ, հիվանդանոցներ շինեց, ջրհորներ փորել տվեց անջուր անապատներում ու ամեն մի ջրհորի քարի վրա արձանագրել տվեց. «Մի՛ վ մարդ, խմի՛ր ու հիշիր ներանց, վորոնք ծարավից տանջվում են աշխարհքում»:

Հարուն ալ Ռաշիդ թագավորը Սայիդի նվիրած քարը Անգլին քար անվանեց ու ամեն անգամ, դատաստան տեսնելիս, դնում եր սեղանին, իր առջևը, ենպես եր դատաստան տեսնում: Սվանդությունն ասում ե, թե նրա նման եյին վարվում նրա հաջորդները՝ արաբական մյուս թագավորները:

(1914)

ԿԱԽԱՐԴԻ ՔՍԱԿԸ

(Իրլանդական)

Լինում են, չեն լինում, լինում են մի պառավ մարդ ու կնիկ, ունենում են յերեք աղջիկ: Որերից մի որ մարդը մեռնում է, արևը ձեզ է բաշխում, մնում է կնիկը: Ես կնիկը գիտենում եմ, վոր իր մարդը վոսկով ու արծաթով լիքը մի մեծ քսակ է թողել, ու մտքումը մխիթարվում է, ասում է. «Հերները մեռավ, գոնե աղջիկներս քաղցած չեն մնալ»: Բայց ինչպես կարող եմ ու որենքն ե՝ մեռելը դեռ հողավորած, թաղած չեն լինում, վոր աղքատի կերպ մտած մի կախարդ գալիս է, իբրև թե վողորմություն է խնդրում, աջողեցնում է՝ քսակը ձեռք է դրում ու ծլկում, ենպես, վոր չեն ել կարողանում իմանան, թե վոր կողմից յեկավ ու վոր կողմը չքացավ:

Եսպես խեղճ կնիկը յերեք վորր աղջկանով աղքատանում է ու, ճարը կտրած, որ ու գիշեր է անում, աշխատում, վոր կարողանա իր յերեխանցը պահի, մեծացնի:

Ժամանակ է անցկենում, ես աղջիկները մեծանում են, ու մի որ ել մեծ աղջիկն ասում է.

— Ա՛յ մեր, յես ես է մեծացել, մեծ աղջիկ եմ դարձել, ամոթ է ինձ համար եսպես անբան ու անգործ տանը նստեմ: Մի բաղա՞ծ թխիր, տուր ինձ, գնամ աշխարհքն աշխարհք ման գամ, իմ բախտը գտնեմ:

Մերը բերում է մի բաղա՞ծ է թխում ու աղջկանը հարցնում, թե ի՛նչպես է ուզում. կես բաղա՞ծն է ու-

զում՝ մոր որհնանքը հետը, թե՞ ամբողջն է ուզում՝ առանց մոր որհնանքի: Աղջիկը ամբողջ բաղա՞ծն է ուզում՝ առանց մոր որհնանքի:

Բաղա՞ծն առնում է ճամփա ընկնում: Ասում է. «Մի տարուց ու մի որից յետը թե յեկա—յեկա, թե հո չեկա, իմացեք, վոր վողջ ու առողջ եմ ու իմ բախտը գտել եմ»:

Գնում է, գնում է, դուրս է գալիս մի անծանոթ յերկիր: Մի ճամփի վրա մի տնակ է լինում:

Ես տնակին մոտենում եմ, տեսնում եմ չեմքումը նստած մի պառավ—գառամ կախարդ կնիկ: Ես կախարդը հարցնում եմ, թե՞ ո՞ւր ես գնում:— Թե՞ գնում եմ բախտս գտնելու:

— Ինձ ել հենց եղպես մի ծառայող է հարկավոր, արի ինձ մոտ մնա, — առաջարկում է կախարդը:

— Վոր քեզ մոտ մնամ՝ ի՞նչ պետք է անեմ:

— Պետք է ձեռիս ջուր ածես, չորերս հագցնես, ավլես, սրբես, վառարան վառես, բայց վայն յեկել է քեզ տարել, յեթե ծխնելույզի մեջը նայել ես:

Աղջիկն ասում է— համաճայն եմ:

Առավոտը կախարդը վոր վեր է կենում, ես աղջիկը ձեռին ջուր է ածում, չորերը հագցնում, կախարդի դուրս գնալուց հետո ել վառարանը սրբում է, բայց սրբելիս մտքովն անց է կենում, թե՞ ինչ պետք է լինի, մի մեծ բան հո չի լինելու, յեթե մի աչքի պոչով ծրխնելույզի մեջը նայեմ: Նայում եմ, ի՛նչ է տեսնում. տեսնում է իր մորից գողացած վոսկով ու արծաթով լիքը քսակը հրես ծխնելույզի մեջը կախ արած: Իսկույն հանում է, ուսը դրում ու թուշում դեպի տուն:

Ճամփին մի ձի յե պատահում, առաջը կտրում է ու խնդրում, ասում է.

— Ա՛ղջի ջան, ա՛ղջի, ի՛նչ կլինի ինձ քորես, ես ոխտը տարի յե՝ վոչով ինձ քորել չի:

Աղջիկը ձեռի փետովը ձիուն տալիս է, ճամփիցը գե՛նն է անում ու անց կենում գնում:

Առաջն է գալիս մի վոչխար: Ասում է.

— Ա'ղչի ջան, ա'ղչի, ի՞նչ կլինի ինձ խուզես. ես ոխտը տարի յե՛ վոչով ինձ խուզել չի:

Աղջիկը սրան ել ե գարկում, ճամփիցը դենն ա- նում ու անց կենում:

Մի քիչ ել գնում ե, տեսնում ե մի որիգած*) եծ: Ես որիգած եծն աղաչում ե, ասում ե.

— Ա'ղչի ջան, ա'ղչի, ի՞նչ կլինի ինձ տեղիսն ա- նես: Ես ոխտը տարի յե՛ ինձ տեղիսն չեն արել:

Աղջիկն իծի վրա քար ե չարտում ու իր ճամփեն շարունակում:

Գնում ե պատահում մի խափան ջաղացի: Ես խա- փան ջաղացը խնդրում ե, ասում ե.

— Ա'ղչի ջան, ա'ղչի, ի՞նչ կլինի բան գցես ինձ. ես ոխտը տարի յե խափան եմ, վոչով ինձ բան չի գը- ցում:

Աղջիկը սրան ել չի լսում, ներս ե մտնում, դռան յետեր ձգվում քնում:

Կախարդը վերադառնում ե տուն— տեսնում ե՝ աղջիկը փախել ե: Ակն ե տալի ծխնելույղին, տեսնում ե ենտեղ ել քսակը չկա: Կատաղում ե, ընկնում ե աղջկա յետևից:

Ճամփին պատահում ե ձիուն:

— Ա'յ ձի,— ասում ե,— վոսկով ու արծաթով լիքը քսակը ձեռին իմ աղախնին արդյոք չե՞ս տեսել:

— Հենց նոր եստեղից փախած անց կացավ,— պա- տասխանում ե ձին:

Կախարդը վազում ե: Պատահում ե վոչխարը:

— Ա'յ վոչխար,— ասում ե,— վոսկով ու արծա- թով լիքը քսակը ձեռին իմ աղախնին արդյոք չե՞ս տե- սել:

— Տեսել եմ,— պատասխանում ե վոչխարը:— Մ քիչ առաջ դեսը վազելով անց կացավ:

Գնում ե պատահում ե իծին:

*) Որիգ ել— կենդանուն թոկով կապել վորեե տեղ — արածելու ե

մար

— Ա'յ եծ,— ասում ե,— վոսկով ու արծաթով լի- քը քսակը ձեռին իմ աղախնին արդյոք չե՞ս տեսել:

— Ի՞նչպես չե, տեսել եմ,— պատասխանում ե եծը.— Հենց նոր դեսը անցկացավ, դեպի են խափան ջաղացը:

Գնում ե խափան ջաղացի մոտ:

— Ա'յ խափան ջաղաց, վոսկով ու արծաթով լիքը քսակը ձեռքին իմ աղախնին արդյոք չե՞ս տեսել:

— Ի՞նչպես չեմ տեսել. ներս արի, հրես իմ դռան յետեր քնած ե,— պատասխանում ե խափան ջաղացը:

Կախարդը ներս ե մտնում, տեսնում ե՝ աղջիկը հրես՝ քսակը գլխի տակին՝ դռան յետեր քնած: Ձեռքի կախարդական գավազանով զարկում ե քնած աղջկան, դարձնում ե քար, իր վոսկով ու արծաթով լիքը քսակն առնում, յետ գնում իր տունը:

Սրա վրա մի տարին ու մի որն անց ե կենում. միջ- նակ աղջիկը տեսնում ե, վոր քույրը յետ չեկավ, մորն ասում ե.

— Ինչպես յերևում ե, քույրս բախտավորվել ե ու լավ ե ապրում. ամոթ չի՞, վոր հենց յես տանը նստեմ պարապ—սարապ: Մի բաղաձ թխի՛ր տուր ինձ, գնամ աշխարհե աշխարհ ման գամ, իմ բախտը գտնեմ:

Մերը հարցնում ե, թե՛ վո՞րն ես ուզում, բաղաձի կեսն ես ուզում իմ որհանքի հե՞տ, թե՞ ամբողջ բա- ղաձն ես ուզում սուանց իմ որհանքի:

— Ամբողջ բաղաձն եմ ուզում՝ առանց քո որհան- քի,— պատասխանում ե աղջիկը, ամբողջ բաղաձն առ- նում ե ու ճամփա ընկնում. ասում ե.

— Մի տարուց ու մի որից յետը թե յեկա—յեկա, թե հո չեկա, իմացեք, վոր վողջ ու առողջ եմ ու իմ բախտը գտել եմ:

Գնում ե: Սա յել մեծ քրոջ նման ե վարվում ու նրա բախտին ե արժանանում:

Մի տարին ու մի որն անց են կենում—յետ չի գա- լիս: Փոքր աղջիկն ասում ե.

— Իմ քույրերն արդեն հասան իրենց մուրադին.

մի՞թե հենց յես պետք է մնամ եսպես անբան ու անգործ նստած, անպետք ինձ համար ել, ուրիշների համար ել: Մի բաղա՞ծ թխիր, մա՛յրիկ, յես ել գնամ իմ բախտի յետևից ման գամ:

Մերը հարցնում է, թե՞ վո՞րն ես ուզում. կես բաղա՞ծն ես ուզում իմ որհնանքի հե՞տ, թե՞ ամբողջ բաղա՞ծն՝ առանց իմ որհնանքի:

Փոքր աղջիկը, թե՞ կես բաղա՞ծն եմ ուզում, քո ո՞րհնանքը հետը:

Մերը կես բաղա՞ծը տալիս է իրեն, որհնում ու ճանապարհ դնում:

Իր քույրերի նման սա ել յերկար դես ու դեն թափառելուց հետո գալիս է հասնում կախարդի կացարանին ու աղախին է մտնում նրա մոտ: Ու հենց նրանց պես սա ել մի որ ծխնելույզի մեջ նկատում է վոսկով ու արծաթով լիքը քսակը, առնում է ու դուրս պրծնում դեպի իրենց տունը:

Ճամփին պատահում է ձիուն: Ձին աղաչում է.

— Ա՛ղջի ջան, ա՛ղջի, ի՞նչ կլինի ինձ քորես, ոխտը տարի յե՛ ինձ քորել չեն:

— Վա՛յ, խեղճ ձի.— ասում է աղջիկը, քսակը մի կողմն է դնում ու քորիչով քորում է ձիուն:

Մի քիչ անց է կենում, վաչխարն է խնդրում.

— Ա՛ղջի ջան, ա՛ղջի, ի՞նչ կլինի ինձ խուղես. ես ոխտը տարի յե՛ ինձ խուղել չեն:

— Վա՛յ, խեղճ վոչխար,— ասում է աղջիկը, հանում է մկրատն ու խուղում է վոչխարին:

Մի քիչ ել գնում է, օրիդած եծն է կանչում.

— Ա՛ղջի ջան, ա՛ղջի, ի՞նչ կլինի տեղիդիս անես ինձ. ես ոխտը տարի է մի տեղ որիդած եմ, վոչա՞յ ինձ տեղիդիս չի անում:

— Վա՛յ, խեղճ եծ,— ասում է աղջիկը ու տեղիդիս է անում սոված իծին:

Վերջը հասնում է խափան ջաղացին:

— Ա՛ղջի ջան, ա՛ղջի, ի՞նչ կլինի բան դցես ինձ,

— ինչքան է խափան ջաղացը.— ես ոխտը տարի յե եսպես կանգնած եմ, վոչո՞ւ բան չի դցում ինձ:

— Վա՛յ, խեղճ ջաղաց,— կանչում է աղջիկը, ջուրը բաց է թողնում, ու ջաղացը դուռն է:

Յե՛վ վորովհետև որը հատել եր, մու՞թն ընկնում եր, մտնում է ջաղացն ու դռան յետևը պառկում քնում:

Կախարդը վերադառնում է տուն, տեսնում է՝ աղջիկը չկա: Ծխնելույզին ակն է տալիս, տեսնում է՝ քսակն ել չկա: Կատաղում, փրփրում է, ընկնում է աղջկա յետևից:

Հասնում է ձիուն, ձիուն հարցնում է.

— Ա՛յ ձի,— ասում է,— վոսկով ու արծաթով լիքը քսակը ձեռի՞ն իմ աղախինին չե՞ս տեսել:

— Դուն ել հենց իմանում ես՝ յես ել բան ու գործ չունեմ—բան ու գործս են է, վոր քո աղախիններին հսկեմ,— պատասխանում է ձին:— Յես ի՞նչ գիտեմ՝ վո՞րտեղ է քո աղախինը. գնա, մա՛ն արի, գա՛իր:

Գնում է հերթով հասնում է վոչխարին, իծին, նրանք ել նույն պատասխանն են տալիս: Վերջը հասնում է ջաղացին:

— Ա՛յ ջաղաց, ասում է,— վոսկով ու արծաթով լիքը քսակը ձեռի՞ն իմ աղախինին չե՞ս տեսել:

— Ի՞նչ ես ասում, ես գոռոցի մեջ լավ չեմ լսում, —պատասխանում է ջաղացը.— մոտիկ արի, ականջումս ասա:

Կախարդը մոտենում է ջաղացին, վոր ջաղացի ականջումն ասի, ջաղացը սրան բռնում է, պտրտում, կոլորում, տակովն անում, չինում ալուր—աղցան ու չալրտում, ցրում դես ու դեն:

Կախարդը վեր ընկնելիս ձեռքի գավազանը վեր դցած է լինում: Ջաղացն աղջկանն ասում է. «Եղ. դավադանը վերցրո՛ւ, դրանով զարկի՛ր դռան տակի յերկու քարին»: Աղջիկը կախարդական գավազանով զարկում է դռան տակի յերկու քարին, մին ել տեսնում է՝ տռաջը կանգնեցին իր յերկու կորած քույրերը: Փաթաթվում,



են իրար, համբուրվում ու վոսկով, արծաթով լիքը
քսակն առնում, ճամփա ընկնում դեպի տուն, իրենց
պառավ մոր մոտ:

Տանը պառավ մերը իր աղջիկներին կորած եր հա-
մարում ու նստած սուգ անելիս է լինում, վոր հանկարծ
ներս են մտնում յերեքն ել, վողջ ու առողջ, հետներս
ել վոսկով ու արծաթով լիքը քսակը—ուրախանում,
աշխարհքով մին է լինում—ու են որվանից ասլրում են
ուրախ ու ապահով:

(1914)

ԱՆԵՐԵՎՈՒՅՔ ՔԱԳԱՎՈՐՈՒՅՑՈՒՆԸ

(Գերմանական)

Գյուղից մի քիչ ծուռը, սարալանջին մի փոքրիկ տնակում իր ծեր հոր հետ ապրում էր ջահել Իերզը: Ունեցած հողերն ուղիղ ենքան էր, ինչքան վոր հարկավոր էր անկարող ապրելու համար: Հենց տան կողքից սկսվում էր կաղնի ու հաճարի ծառերի թավ ու պառավ անտառը, իսկ տան առաջին ընկած էր մի հին կոտրած ջաղացաքար: Են հին կոտրած ջաղացաքարին նստողի աչքին սքանչելի տեսարան էր բացվում դեպի հովիտը, դեպի հովիտով վազող գետը ու սարերը, վոր բարձրանում էյին գետի մյուս կողմը: Իերզը, իր գործը դաշտում վերջացնելուց հետո, իրիկունները սիրում էր նրատել ես քարի վրա. արմուկները ծնկներին տված ու գլուխը հենած ձեռներին՝ նա ժամերով նստում էր ու անձնատուր էր լինում իր ցնորքներին:

Յեվ վորովհետեւ գյուղի գործերով էլ շատ չէր հետաքրքրվում ու գրեթե միշտ մնում էր խաղաղ, մենակ, իր մտքերի մեջ խորասուզված, գյուղացիք էլ հեզներ լով, անունը դրել էյին Յերազող Իերզ: Նա էլ իսկի չէր նեղանում սրանից:

Քանի մեծանում էր՝ ենքան առանձնանում էր ու դառնում լռակյաց, իսկ յերբ հերն էլ մեռավ ու հին կաղնենու տակ թաղեց, նրանից հետո էլ ձեն չէր հանում: Այժմ առաջվանից ավելի հաճախ էր նստում հին կոտրած ջաղացաքարին ու նայում էր ներքե, հովիտին, վորտեղից իրիկվան մշուշը բարձրանում ու մեղմիկ սողում էր սարն ի վեր. հետևում էր հեազհետե ցած իջնող

մութին, ծագող լուսնին ու իրար յետևից ցայացող աստղերին: Նրան ենպես էր թվում, թե գետի ալիքները յերգում էյին, սկզբում մեղմ ու կամացուկ, ապա թե պարզ ու լսելի: Յերգում էյին են սարերից, վորտեղից սկիզբ էյին առնում, յերգում էյին են ծովերից, վորոնց ծոցն էյին հոսում, ու իրենց ջրերում ապրող հավերժահարսներից: Սրանից հետո անտառն էր սկսում աղմկել, միայն թե ուրիշ տեսակ, քան թե սովորաբար աղմկում են անտառները, ու շատ զարմանալի պատմություններ էր անում:

Մյուսներից շատ պատմություն դիտեր մանավանդ ծառերից մինը, են պառավ կաղնին, վորի տակ ինչպիսիք էր իր հերը: Աստղերն էլ հո, վոր ցույցում էյին յերկնքում, ասես թե լցվում էյին ներքե թափվելու սաստիկ տենչով, ուղում էյին թափվեն ցած են կանաչ անտառն ու են կապուտակ գետը, ու ենպես էյին վատվրում ու թրուխում, կարծես թե էլ չէյին կարողանում դիմանան ներքեի հրապուրանքներին: Բայց հրեշտակները, վորոնցից ամեն մինը կանգնած էր իր աստղի կողքին, շարունակ զսպում էր նրանց. «Աստղիկներ, ա՛յ աստղիկներ, եղպես խենթություն մի՛ անեք, ա՛յ աստղիկներ: Դուք յերեխա հո չե՞ք, վոր եղպես չթություններ եք անում. քանի՛-քանի հազար տարի յե ապրում եք տիեզերքում: Ավելի լավ է խաղաղ ու հանգիստ ձեր տեղը մնաք...»

Այո՛, հրաշալի յեր են հովիտը: Միայն թե ես ամենը տեսնում ու լսում էր մենակ Յերազող Իերզը: Իսկ գյուղում ապրող մնացած մարդիկ սովորական մարդիկ էյին, մտքներովը ես տեսակ բաներ իսկի անց էլ չէյին կացնում: Ժամանակ առ ժամանակ նրանք կտրում էյին անտառի հսկա ծառերից մեկն ու մեկը, սղոցում, ջարդում, ծղան անում ու կրակին վրա տալով ասում. «Դե՛, ա՛յ հիմի նորից կարող ենք սուրճ յեփել խմել»: Գետի մեջ իրանց լվացքն էյին անում, վոր շատ մեծ հարմարություն էր նրանց համար: Աստղերին նայելիս էլ յերբ

վոր տեսնում էյին շատ են պայծառ ցուում, ապում էյին. «Ես գիշեր թունդ ցուրտ ե լինելու, մեր կարաո- Փիլը ցրտատար չլինի»։ Իերգն ել յեթե ճգնում եր՝ նրանց բացատրի, թե բանն ինչումն ե, ծիծաղում էյին վրեն։

Մի անգամ ել, յերբ Իերգը իր սովորությամբ հին ջաղացաքարի վրա նստած միտք եր անում, թե ինքը ինչքան ե մենակ բովանդակ աշխարհքում, քունը տա- րավ ու աննկատելի քնեց։ Յերազում տեսավ, իբրե թե յերկու արծաթ շղթաներով յերկնքից մի վրակե ճոճ եր իջնում ներքե։ Ամեն մի շղթայի ծերը ամբացած եր մի աստղից, իսկ ճոճում նստած եր մի գեղեցիկ աղջիկ ու ենպես բարձր եր ճոճում, վոր մին յերկնքից գետին եր հասնում, մին ել գետնից յերկինք եր թռչում։ Ամեն անգամ, հենց վոր ճոճը յերկնքից յերկրին եր մոտե- նում, աղջիկը ուրախությունից ծափ եր տալիս ու մի վարդ եր ձգում Իերգին։ Բայց հանկարծ արծաթի շղ- թաները կտրեցին ու ճոճը աղջկա հետ՝ յերկուսն ել յերկինք թռան, գնացին վե՛ր, վե՛ր, մինչև վոր աչքից բոլորովին չքացան։

Իերգը քնից վեր թռավ, չորս կողմը նայեց, տե- սավ քարի վրա կողքին մի վարդի փունջ։

Մյուս որը նորից քնեց ենտեղ, նորից նույն յերա- զը տեսավ, ու յերբ վոր դարթնեց, դարձյալ կողքին վարդեր էյին թափած։

Եսպես չարունակ մի ամբողջ շաբաթ։ Իերգը վրճ- ուեց, վոր ես յերազը յեթե եսպես նույնությամբ կըր- կընվում ե, կնշանակի սրա մեջ մի ճշմարիտ բան կա։ Վճռեց, ասն դուռը փակեց, բանալին գրպանը դրեց ու գնաց են աղջկանը վորոնելու։

Գնա՛ց, գնա՛ց, յերկար թափառեց, շատ ման յեկավ, վերջապես մի յերկիր տեսավ, հեռու, ուր ամ- պերը հասնում էյին մինչև գետին։ Աշխույժ, ուրախ առաջ գնաց ու մի քիչ ժամանակ հետո ընկավ մի մեծ անտառ։ Հանկարծ ետեղ մի հառաչանքի ձեն ընկավ ահանջովը։ Վազեց են կողմը, վորտեղից լսվում եր

ձենը. տեսավ ալեխառն մորուքով մի պատկառելի ծե- րունի՝ գետին ընկած, յերկու մերկանդամ ալանդակ մարդ ել վրեն չորած՝ ուզում են խեղդեն։ Իերգը չորս կողմը նայեց, տեսնի ինչով կարող ե ոգնության հաս- նի. մի մեծ կոճղ պոկեց, վոր պոկելուն պես դարձավ ծանր տապար։ Ես տապարով ենպես ուժգին հարձակ- վեց չարագործների վրա, վոր նրանք ոգնություն կան- չելով ծերունուն թողին ու փախան։ Իերգը վեր քաշեց ծերունուն, ոգնեց, վոր կարգի դա, ու հարցրեց, թե ինչո՞ւ էյին են տկլոր ալագակները խեղդում իրեն, ի՞նչ էյին ուզում։

Յիվ ծերունին պատմեց, թե՛ յես Յերագների աշ- խարհի թագավորն եմ, սխալմունքով մի քիչ հեռացել էյի իմ տերության սահմաններից, ընկել էյի իմ ամե- նավտերիմ թշնամու— Իրականության թագավորի տերությունը։ Ես բանը նկատել եր Իրականության թագավորը, իր ծառաներից յերկուսին զրկել եր իմ դեմ, նրանք ել դարան մտնելով բռնել էյին ինձ՝ ու- զում էյին խեղդելին...

— Դու Իրականության թագավորին ի՞նչ վատու- թյուն ես արել, վոր... — հարցրեց Իերգը։

— Վոչ մի վատություն, — պատասխանեց ծերու- նին, — բայց առհասարակ նա շատ անբարիշտ բնու- թյուն ունի. իսկ ինձ ատելով ատում ե։

— Բայց են մարդիկ, վորոնց նա զրկել եր քո դեմ, տկլոր էյին։

— Հա՛, — պատասխանեց Յերագների թագավորը, — նրանք մորուց տկլոր են։ Եզպես ե Իրականության աշխարհի մողան։ Ենտեղ ամենքը, նույնիսկ իրենց թագավորը տկլոր են ման գալիս ու իսկի յել չեն ամա- չում գրանից։ Զարմանալի խալիս են։ Բայց դու վոր իմ կյանքը փրկեցիր, ուզում եմ յերախտահատույց լի- նեմ քեզ ու ցույց տամ իմ աշխարհքը։ Յերագների աշ- խարհքը ամենասքանչելի աշխարհքն ե, իսկ յերազնե- րը — իմ հպատակներն են։

Ասով Յերազներ թագավորն ու առաջ գնաց. Ի-
երգը հետևեց նրան:

Յերբ հասան ենտեղ, վորտեղ ամպերը գետնին են
առնում, թագավորը մի թփուտում ծածկած դուռը
ցույց տվեց, վոր՝ ով վոր չիմանար, անկարելի բան
եր, վոր գտներ ու բաց աներ:

Թագավորը դուռը բաց արավ, իր ուղեկցին տա-
րավ հինգ հարյուր աստիճան ներքև՝ մի պայծառ,
լուսավորված քարանձավ, վոր ձգվում եր յերկար,
չատ ու շատ մղոններ: Ջարմանալի գեղեցիկ եր են քա-
րանձավը: Ել ինչ ասես վոր չկար ենտեղ: Մեծ լճերի
մեջ, կղզիների վրա, կանգնած պալատներ կային, ու
կղզիները հանգիստ լողում էին վճիտ ջրերում: Ով
ուղեր են պալատներին մեկն ու մեկի մեջ մտնի, պետք
է ավին կանգներ ու կանչեր:

«Պալատ, պալատ, լողա՛ դեպ ինձ,

Վոր հեշտ մտնեմ յես քո դռնին»:

Ու պալատն իրան-իրան՝ կլողար դեպի ամերը:
Կային և ուրիշ դղյակներ, վոր հանդարտ որորվում է-
ին ամպերի վրա: Պետք եր միայն ասել.

«Դղյա՛կ, դղյա՛կ, իջի՛ր դեպ ինձ,

Վոր հիանամ յես քո տեսքին»:

Ու դղյակը հանդարտիկ գետին կիջներ: Պարտեզ-
ներ ել կային, վորոնք ծաղիկներ ունեյին, վոր ցերեկ-
ները բուրում էին անուշահոտ, իսկ գիշերները լույս
էյին տալիս: Ամենայեփներանգ գույներով վառվող
հավքեր կային, վոր հեքյաթներ էյին պատմում, և ու-
րիշ շատ ու շատ զարմանահրաշ բաներ: Յերազող Իեր-
գը զարմանքից ու խնդությունից չեր խմանում վո՛րին
նայի, վո՛րը թողնի:

— Արի՛ հիմի քեզ իմ հպատակները— յերազները
ցույց տամ,— ասավ թագավորը:— Յերեք տեսակ յե-
րազներ ունեմ. լավ յերազներ— բարի մարդկանց հա-
մար, վատ յերազներ— չարերի համար, և, սրանցից
բացի, ունեմ նաև խիպիլիկ*) յերազներ: Սրանցով ել

*) Խիպիլիկ — մղձավանջային:

զանազան խաղեր եմ հորինում: Չե՞ վոր յերբեմն յեր-
բեմն թագավորներն ել են ուզում զվարճանան:

Ետեղից թագավորը Իերգին տարավ մի այգի,
ուր ծառուղիները արծաթից էյին, ածուները վոսկուց,
իսկ ծաղիկները անգին քարերից: Ետեղ դրոսնում ե-
յին լավ յերազները:

Առաջինը Իերգի աչքին ընկավ մի դալկադեմ նո-
րատի ջահել կին, ձեռքին խաղալիքներով լիքը մի ար-
կղղիկ:

— Սա ո՞վ է:

— Եղ կինը ամեն իրիկուն գնում է մի հիվանդ յե-
րեսի մոտ, վորի մերը նորերս է մեռել,— ասավ Յե-
րազների թագավորը:— Յերեկը վորը յերեսան միշտ
մնում է մենակ, իսկ գիշերները սա գնում է հետը խա-
ղում ու մոտը մնում մինչև լույս: Սակայն, յե՛կ, մի
քիչ ել գնանք դենը:

Գնացին: Մտան մի ուրիշ այգի՝ լիքը բարի յե-
րազներով: Բարի յերազները՝ տղամարդկանց ու կա-
նանց, ծերերի ու յերեսանների կերպարանքներով, բո-
լորն ել բարի, ժպտուն գեմքերով, ամենագեղեցիկ
զգեստներով: Շատերը ձեռներին բռնած ունեյին ամեն
տեսակ լավ բաներ, ինչ վոր միայն կարող է ուղել
մարդու սիրտը: Բայց Իերգը հանկարծ կանգ առավ ու
ենպես բարձր ճչաց, վոր բոլոր յերազները յետ դառան
դեպի նրան:

— Ի՞նչ պատահեց,— հարցրեց թագավորը:

— Ահա ետեղ է իմ ծանոթ աղջիկը, վոր ինձ յե-
րեվում եր ենքան հաճախակի ու վարդեր եր բերում
ինձ համար:

— Իհարկե, իհարկե ետեղ է,— պատասխանեց
թագավորը:— Հենց նա ինքն է, վոր կա: Ճամարիտ է,
չե՞ վոր քեզ լավ յերազ էյի դրկում: Գրեթե ամենալավ
յերազը...

Ու Իերգը վազեց դեպի իր ծանոթ աղջիկը, վորը
ինչպես միշտ, իր վոսկե ճոճում նստած ճոճվում եր:
Նա ել, հենց սրան տեսավ թե չե, ներքև թռավ ու

վազեց գիրկն ընկավ: Իրար ձեռից բռնած նստեցին մոտակա վոսկե աթոռին ու հրճվանքով անվերջ կըրկնում էյին, թե ի՞նչ լավ յեղավ, վոր նորից իրար պատահեցին: Կրկնում էյին ու կրկնում, և կարծես միշտ նոր էյին ասում:

— Դե՛, յերեխե՛ք, հերիք ե: Քո տունը հեռու յե, իե՛րգ, յե՛րբ պետք ե հասնես: Եստեղ քեզ չեմ կարող թողնել, մենք քեզ համար տեղաշոր չունենք: Դու գիտես, վոր յերազները չեն քնում, այլ գիշերները գնում են վերև— մարդկանց մոտ: Դու ել, աղջիկս, պատրաստվի՛ր, ժամանակն ե, վոր ճանապարհ ընկնես: Վոտից գլուխ հագիր քո վարդագույն գգեստնե՛րդ ու յե՛կ, յես քեզ կասեմ, թե ո՛ւմ ես յերևարու ես, գիշեր ու ի՛նչ ես անելու:

Յերագուղ իերգը ես վոր լսեց, ենպես մի տղամարդու թյուն յեկավ վրեն, վոր բնավ չեր ունեցած: Վեր կացավ ու հաստատուն ձենով եսպես կանչեց.

— Հա՛յր արքա, — յես ել չեմ բաժանվելու իմ յերազից— իմ թագուհուց: Կամ ինձ պետք ե թողնեք, վոր մնամ եստեղ, կամ սրան պետք ե թողնեք, վոր մեր աշխարհքը գա ինձ հետ: Առանց սրան ել չեմ կարող ապրել, ենքան եմ սիրում...

Ու աչքերը լցվեցին խոշոր արցունքներով:

— Բայց, իե՛րգ, — խոսեց Յերազների թագավորը, — պետք ե իմանաս, վոր սա իմ ամենալավ յերազն ե: Սակայն դու իմ կյանքը փրկել ես, իե՛րգ, թող ենպես լինի, ինչպես դու յես կամենում: Ա՛ռ քո յերազը ու գնա ձեր աշխարհքը: Բայց վերև գնաք թե չե՛ սրա գլխի արծաթե թողը պետք ե վերցնես ու դռնից գցես ներքև— դեպի ինձ: Են ժամանակ քո յերազը— քո թագուհին ել միս ու արյուն կառնի, կդառնա իսկական կին, թե չե այժմ նա անմարմին յերազ ե միայն...

Իերգը թագավորին սրտանց շնորհակալություն արավ ու ասավ.

Սիրելի թագավոր, քանի վոր դու եղբան բարի յես, համարձակվում եմ մի խնդիրքով ել ահապարհ—

տաքնել քեզ: Տեսնում ես՝ արդեն թագուհի ունեմ, բայց թագավորություն չունեմ: Ի՞նչպես կլինի՝ թագուհի առանց թագավորության: Ձե՛ս կարող արդյո՞ք մի թագավորություն ել տալ: Ի՛նչքան ուզում ե փոքրիկ լինի, միայն թե թագավորություն լինի:

— Գիտե՞ս ինչ կա, իերգ, — պատասխանեց Յերազների թագավորը. — թե տեսնելի թագավորություններ ես ուզում, յես չունեմ, բայց աներևույթ թագավորություններ— ունեմ, և նրանցից մինը քեզ եմ նվիրում, են ել ամենամեծերից ու ամենահոյակապներից մինը:

Իերգը հետաքրքրվեց իմանա, թե ինչ տեսակ բաներ են եղ աներևույթ ասված թագավորությունները, բայց թագավորը նրան պարզեց, թե ամեն բան ինքը ժամանակին կիմանա և շատ կդարձանա, յերբ կտեսնի, թե ի՛նչ լավ ե ու ի՛նչքան հարմար եղ տեսակ աներեւույթ թագավորություն ունենալը:

— Սովորական, տեսնելի թագավորությունները շատ անգամ շատ հոգսեր ու անախորժություններ են ունենում, — բացատրեց թագավորը: — Որինակի համար. ասենք թե դու թագավոր ես, դեռ անկողնումն ես. մին ել տեսար՝ առավոտը վաղ նախարարը մտանցավ անկողնիդ ու ասում ե.

«Ձերդ մեծություն, տերության կարիքների համար ինձ մի հազար ուսուցիչ յե պետք»: Գանձաբանը բաց են անում, տեսնում ես՝ մեջը կոպեկ չկա: Ի՞նչ անես: Դեռ հալա են ել կարող ե պատահել, վոր քեզ պատերազմ հայտնեն, հաղթեն, ու են թագավորը, վոր քեզ հաղթել ե, պոսկիվ հենց քո թագուհու հետ, իսկ քեզ մի աշտարակում փակի: Իսկ աներևույթ թագավորության մեջ անկարելի յե, վոր եղ տեսակ բաներ պատահեն:

— Բայց յեթե եղ թագավորությունը տներևույթ ե ու մենք չենք տեսնելու, դրանից ի՞նչ դուրս կգա, — հարցրեց իերգը:


— Ա՛յ անխելք մարդ, — բացականչեց թագավորը.

բը,— ախր չե՞ վոր ձեզ համար աներևույթ չի լինիլ, դու ու քո թագուհին կտեսնեք: Դուք պարզ կտեսնեք ձեր թագավորությունը և պալատները իրենց պարտեզներով, և՛ մարդագետինները, և՛ անտառները: Նրանց մեջը կապրեք, կգրոսնեք, կանեք, ինչ վոր քեֆներդ կտա: Միայն ուրիշների համար կլինի 'աներևույթ', ուրիշները չեն տեսնիլ ձեր թագավորությունը:

Իերգը սրա վրա շատ ուրախացավ, վոր իրենց գյուղացիք վոչ կտեսնեն, վոր ինքը թագուհի ու թագավորություն ունի, վոչ ել նախանձից խեթ կնայեն: Շնորհակալություններով հրաժեշտ տվեց Յերազների թագավորին, իր թագուհու հետ հինգ հարյուր աստիճան վերև բարձրացավ, նրա գլխից վեր առավ արծաթի քողը ու ձգեց ներքև: Հետո ուզեց ստորերկրյա մուտքի դուռը յետ դնի, բայց ենթան ծանր եր, վոր չկարողացավ պահի, ձեռիցը դուրս պրծավ ու մի են տեսակ ահագին թնդյուն հանեց, կարծես միանգամից բազմաթիվ թնդանոթներ վորոտացին, ու իերգը հանկարծ ուշաթափ յեղավ: Մին ել ուշքի յեկավ, տեսավ ինքը իրենց դռան հին ջալացաքարի վրա նստած, կողքին կանգնած իր թագուհին, միայն վոչ թե յերազ, այլ մարմին առած, սովորական կին:

Իր ձեռիցը բռնած նա փաղաքշում եր իրեն ու խոսում. «Այ դու իմ ազնիվ, իմ բարի, իմ հիմար իե՛րգ, ուրեմն եսքան ժամանակ սիրում եյիր ինձ ու սի՞րտ չեյիր անում ասես... վախենում եյիր ինձանից...»

Լուսինը յելավ ու լուսամիայլեց գետը, ալիքները հնչյուն ծփալով զարկում եյին ափերին, անտառը խուլ աղմկում եր, նրանք դեռ նստած խոսում եյին ու խոսում: Հանկարծ լուսնի վրա մի սև ամպի պատառ յեկավ. ես միջոցին նրանց վրտների տակ մեծ թաչկինակի պես մի բան ընկավ. ու նորից լուսինն սկսեց փայլել առաջվա պես պայծառ: Նրանք թաչկինակը վեր առան, ուզեցին բաց անեն, բայց տեսան, վոր շատ ե բարակ ու անթիվ անգամ ծալած, ենպես վոր յերկար տևեց, մինչև բոլոր ծալքերը բաց արին:



Յետ բաց արին՝ ի՛նչ տեսնեն. աշխարհադրական բարտեզի նման մի բան: Մեջտեղից մի գետ ե հոսում, գետի յերկու կողմը քաղաքներ, անտառներ ու լճեր: Իսկույն գլխի ընկան, վոր ես են թագավորությունն ե, վոր բարի Յերազների թագավորն իրենց համար ցած ե գցում յերկնքից: Յեվ յերբ յետ նայեցին իրենց փոք-

ըիկ տնակին, տեսան դարձել և հոյակապ պալատ,
բյուրեղյա աստիճաններով, մարմարե թավջածածկ
պատերով ու բարձր աշտարակներով, փերուղե տանիք-
ներով: Ձեռը-ձեռի տված ներս մտան ու կորան ծա-
ղիկների մեջ, անուշահոտ բուրմուռներին, յերաժըշ-
տության, ուրախության ու ամեն բանի լիության
մեջ:

Մյուս որը ամբողջ գյուղը դրամբում էր, թե Յե-
րազող իերգը վերադարձել և ու կին և բերել իրեն հա-
մար:

— Իրեն նման մի բան կլինի, ելի՛ր — ասում էյին
չորս կողմից:

— Եսոր առավոտ՝ անտառ էյի գնում, տեսա՛
չեմքումը կանգնած էր, — մեջ մտավ մի գյուղացի:
Բանի նման չի, կա ելի՛ր. մի լզար, պուճուր աղջիկ ա:
Հագինն ու վրինն ել հո ենպես...

— Բա ի՞նչ էր լինելու: Սա բան չունի, նա ել սրա
նման, — նկատեց մի ուրիշը:

Եսպես էյին խոսում են տխմար մարդիկ, ու չէյին
տեսնում, վոր առաջները կանգնածը թագուհի յեր:
Վոչ ել ե՛ն էյին նկատում, վոր նրանց տնակը չքեղ պա-
լատ և դարձել: Յեվ ի՞նչպես պետք է տեսնեյին: Իերգի
համար ամպերից ընկած թագավորությունը աներե-
վույթ թագավորություն էր: Ինքը իերգն ել շատ չէր
հոգում, թե ինչ են մտածում իր մասին կարճամիտ ու
տխմար մարդիկ, ու իրեն համար ապրում էր իր թա-
գավորության մեջ իր թագուհու հետ ուրախ ու բախ-
տավոր:

Տեխ. խմբագիր՝ Ս. Գասպարյան
Արագրի՛՜ Ս. Փարսադանյան



Գլուխի լիտոյր՝ Կ—4630. Հրատ. № 4260:
Գաղթի 1119. Տիրամ 6000.
Թուղթ 62 x 94. Տպագրական 8 1/4 մամ.
Մէկ մամ. 30720 նիշ. Հեղինակային 6 1/4 մամ.
Հանձնված և արտադրության 9/IX—37 թ.
Ստորագրված և տպագրության 25/XII
ԳԻՆԸ 2 Ռ.

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ԵՐԵՎԱՆ. ԼԵՆԻՆԻ ՓՈՂ. 65.



ՀՀ Ազգային գրադարան



NL0340261

8992.

